Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

CENTER FOR THE STUDY
OF NATIONALITIES PFOBLEM AND
GENOCIDE

SERIES
"THE UNCEASING TOLL"

Volume 1

THE ARMENIAN GENOCIDE

CAUSES AND LESSONS

Dedicated to
the 80th Anniversary
of the Armenian Genocide

YEREVAN UNIVERSITY PRESS

YEREVAN - 1995

ЦЕНТР ИЗУЧЕНИЯ
НАЦИОНАЛЬНОГО ВОПРОСА И ГЕНОЦИДА

СЕРИЯ
"НЕСМОЛКАЕМАЯ КОЛОКОЛЬНЯ"

Выпуск 1

ГЕНОЦИД АРМЯН

ПРИЧИНЫ И УРОКИ

Посвящается
80-летию
Геноцида Армян

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

ЕРЕВАН - 1995

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ
ԵՎ ԳԵՆՈՑԻԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

"ԱՆԼՌԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ"
ՄԱՏԵՆԱՇԱՐ

Մաս 1

ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՎ ԴԱՍԵՐ

Նվիրվում է
Հայոց Ցեղասպանության
80-ամյակին

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1995

Գրախոսներ՝ Երևանի պետական համալսարանի
հայոց պատմության,
համաշխարհային պատմության,
միջազգային դիվանագիտության
պատմության և տեսության ամբիոններ

Կենտրոնը շնորհակալություն է հայտնում
հայոց պատմության ամբիոնին
կատարված աշխատանքի համար

Ազգային հարցի և գենոցիդի ուսումնասիրման կենտրոնը "Անլռելի զանգակատուն" մատենաշարով ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում հայոց ցեղասպանության պատմությանն առնչվող գիտական ուսումնասիրությունների շարքի առաջին ժողովածուն: Զետեղված հոդվածները ընթերցվել են Կենտրոնի կազմակերպած գիտաժողովում: Հոդվածներում քննարկվում են հայոց ցեղասպանության պատճառներն ու դասերը, եղեռնի քաղաքականության ձևավորման ակունքները, ցեղասպանության քաղաքականությունը, եղեռնի իրագործումը երիտթուրքերի կողմից և այլն:

Նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:

© Երևանի համալսարանի հրատարակություն, 1995 թ.

ԵՊՀ Գրադարան

SU0214077

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆԸ

1995 թ. ապրիլի 24-ին լրանում է 1915 թվականի Մեծ եղեռնի 80-տարին: "Մեծ եղեռն" արտահայտությունը կյանքի է կոչվել ժողովրդի կողմից, որն այնուհետև համընդհանուր ճանաչում է գտել նաև գիտական շրջանակներում:

Հարց է ծագում, եթե դա ճիշտ է, ապա ե՞րբ է սկսվել հայոց ցեղասպանությունը: Այդ հարցը ցայսօր չունի իր հիմնավորված պատասխանը, որովհետև մենք չունենք հայոց ցեղասպանության բազմակողմանիորեն մշակված, ամբողջական պետական գիտական կոնցեպցիա:

"Անլռելի զանգակատուն" մատենաշարով լույս տեսնող առաջին երեք պրակներում զետեղված հոդվածների հեղինակները փորձում են ինչ- որ չափով լրացնել այդ բացը:

Նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ ժողովրդի ցեղասպանությունը սկսել է իրագործվել 1890- ական թվականների սկզբներից և շարունակվել է մինչև 1990 թ. հունվարին Բաքվում կազմակերպված ջարդերը: Հայոց ցեղասպանությունը ունի շուրջ հարյուր տարվա պատմություն: Այդ տեսանկյունից ելնելով՝ հայոց ցեղասպանությունը 1915 - 1923 թթ. սահմանափակող ընդհանուր ճանաչում գտած տեսակետը գիտական առումով անընդունելի է:

Հայոց պատմագիտությունը պարտավոր է այդ հիմնախնդիրը լուծելիս տալ մի քանի կարևոր հարցի պատասխան ևս. երբ է սկսվել հայոց ցեղասպանությունը, որո՞նք են ցեղասպանության պատճառները, ի՞նչ նպատակներ են հետապնդել ցեղասպանները, ինչքա՞ն է զոհերի թիվը, որո՞նք են ցեղասպանության պատմական դասերը:

Թվարկված հարցերի մի մասի պատասխանները հայոց պատմագիտությունը չունի, մյուս մասինն էլ վիճահարույց են:

Սակայն առաջին հարցի պատասխանը միանշանակ է: Հայոց ցեղասպանությունը սկսվել է այն ժամանակահատվածից, երբ թուրքական ցեղերը գրավեցին Փոքր Ասիան ու Հայաստանը և հիմք դրեցին Օսմանյան կայսրությանը:

Նվաճելով Հայկական լեռնաշխարհը՝ թուրքերը ձեռնամուխ են լինում հայ ժողովրդի "խաղաղ" գենոցիդի քաղաքականության իրագործմանը: Այդ ցեղասպանությունը, որը տևել է շուրջ 500 տարի, կենսագործվել է հետևյալ ձևերով. հայ ժողովրդի ձուլում, մահմեդականացում, երկրից արտաքսում և մասնակի ջարդեր: Նման ծրագրի իրականացման համար Օսմանյան կայսրությունը ստեղծել էր տնտեսական, քաղաքական, կրոնական և ազգային ճնշման դժոխային բոլոր պայմանները: Ընդ որում, արտագաղթածները ևս դատապարտված էին սպիտակ գենոցիդի: Հետևաբար, հայը թե՛ սեփական երկրում, թե՛ նրանից դուրս դատապարտված էր անխուսափելի ձուլման: Ահա այսպիսի ձևերով էին թուրքերը 500 տարի պայքարում հայոց պատմական Հայրենիքը սեփական Հայրենիք դարձնելու համար:

Գոյություն ունի այն տեսակետը / Յ. Բարսեղով/, որ այդ 500 տարին պետք է համարել հայոց ցեղասպանության նախապատմություն, սակայն մենք կարծում ենք, հիշյալ ժամանակահատվածը ոչ թե նախապատմություն է, այլ հայոց ցեղասպանության պատմության առաջին փուլ, երբ թուրքական իշխանությունները դեռ հույս ունեին Հայաստանը հայաթափել ոչ թե նրանց ֆիզիկական ոչնչացման, այլ սպիտակ գենոցիդի միջոցով:

Ինչևէ, անկախ այն բանից, թե այդ երկու տեսակետներից որն է ավելի ճիշտ, ակներև է հետևյալը. հայոց ցեղասպանության պատմությունը պետք է 500 տարով առաջ տանել: 1890-1990 թթ. ցեղասպանությունը նախորդ շրջանից տարբերվում է նրանով, որ թուրքերը սպիտակ գենոցիդից անցան ամբողջ հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման քաղաքականության իրագործմանը:

Համոզվելով, որ Հայաստանի հայաթափման վերոհիշյալ ձևերը էֆեկտիվ չեն, Օսմանյան կայսրության ղեկավարությունը 19-րդ դարի 90-ական թվականների սկզբներից անցնում է հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման քաղաքականության իրականացմանը: Կազմակերպելով արևմտահայության Մեծ եղեռնը՝ պանթուրքիզմը լուծում է իր առաջին հիմնական խնդիրը՝ Թուրքիան թուրքացվում է, մահմեդականացվում: Հայկական հարցը "լուծվում" է թուրքավարի՝ արևմտահայության ցեղասպանությամբ: Սակայն պանթուրքիզմը ուներ չլուծված երկու ծրագրային խնդիր՝Օղուզական պետության ստեղծումը, որն իրականացնելու համար պետք է ոչնչացվեր Արևելյան Հայաստանը, և Մեծ Թուրանի պետության ստեղծումը, որի կենսագործմամբ պետք է մասնատվեր ռուսական կայսրությունը: Ընդհարվեցին Թուրքիայի և Ռուսաստանի շահերը: Բոլշևիկյան Ռուսաստանի և Քեմալական Թուրքիայի բարեկամության և հակամարտությունների ոլորտներում Հայաստանի Հանրապետությունը կործանվեց, Հայաստանը բաժանվեց այդ երկու պետությունների միջև:

Չնայած ձեռք բերված հաջողություններին, այնուամենայնիվ պանթուրքիզմը չհասավ վերոհիշյալ երկու խնդիրների լուծման. ոչ Օղուզական պետությունը ստեղծվեց և ոչ էլ Մեծ Թուրանի: Այդ խնդիրները մնացին օրակարգում որպես պանթուրքիզմի չիրականացված ծրագրային հիմնահարցերը:

Խորհրդային իշխանության տարիներին պանթուրքիզմը անցավ ընդհատակ և փոխեց իր գործունեության մեթոդները: Խորհրդային Միության փլուզումից հետո պանթուրքիզմը հանդես է գալիս նեոպանթուրքիզմի դիմակով: Պանթուրքիզմը լայնամասշտաբ

գործունեություն է ծավալել նախկին ԽՍՀՄ բոլոր թուրքալեզու ժողովուրդների շրջաններում: Թուրքիան նորից պանթուրքական ուժերի դրոշակակիրն է: Հայկական հարցի և ցեղասպանության ճանաչման դեմ ուղղված գործունեությունը, հակահայկական գործողությունները աշխարհի բոլոր երկրներում, հայերի ջարդերը Ադրբեջանում, Լեռնային Ղարաբաղի անկախության դեմ մղվող պայքարը, Հայաստանի շրջափակումը. այդ բոլորը կազմակերպվում է պանթուրքիզմի կողմից:

Պանթուրքիզմի խնդիրները մնում են նույնը՝ հայկական սեպի վերացումը և Մեծ Թուրանի պետության ստեղծումը: Պանթուրքիզմը եղել է և կա, դա այն վտանգն է, որի մասին մշտապես ահազանգում է Հայոց Անլռելի Զանգակատունը:

Հայոց մարտավարական և ռազմավարական ծրագրերի առանցքային խնդիրը պետք է լինի պանթուրքիզմի վտանգին դիմակայելու համակարգի ստեղծումը:

Դրանք են հայոց ցեղասպանության պատմական դասերը, դրանք են հայոց ազգային-ազատագրական պայքարի ղեկավարների ու գաղափարախոսների պատգամները, դա է հայոց ազգային գաղափարախոսության հրամայականը:

ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՍԵՐԸ

1995 թվականի ապրիլի 24-ին լրանում է հայոց Մեծ եղեռնի 80 տարին: Սակայն հայոց ցեղասպանությունը ծնող պատճառները դեռևս վերացված չեն: պանթուրքիզմը չի հասել իր վերջնական նպատակին: Մեծ Թուրանի գաղափարը իրականացված չէ: Հայկական "սեպը" խանգարում է այդ համաթուրքական պետության ստեղծմանը: Պատմական հարմար պահին պանթուրքիզմը անկասկած կփորձի հասնել իր վերջնական նպատակին՝ Մեծ Թուրանի պետության ստեղծմանը, որը կարող է իրականացվել միայն Զանգեզուրի գրավմամբ և հայ ժողովրդի նոր գենոցիդով:

Ելնելով պատմական այդ անխուսափելի վտանգի սպառնալիքից՝ հայ ժողովուրդը, նրա քաղաքական ղեկավարությունը, ազգային գաղափարախոսները պարտավոր են խոր ու բազմակողմանիորեն վերլուծել շուրջ հարյուր տարվա /1890-1990թթ./ պատմություն ունեցող հայոց ցեղասպանության պատճառները, համապատասխան դասեր քաղել դրանից և հուսալի միջոցներ ձեռք առնել պանթուրքիզմի հարձակմանը դիմակայելու համար:

Հայոց ցեղասպանության, Հայկական հարցի, հայ-թուրքական հարաբերությունների և ընդհանրապես հայ և թուրք ժողովուրդների պատմության քննական ուսումնասիրությունը մեզ բերում է մի շարք եզրահանգումների, որոնք իրենց պատշաճ տեղը պետք է ունենան հայոց ազգային գաղափարախոսության համակարգում:

Թուրքական ցեղերը 11-12-րդ դարերում նվաճում են Հայաստանը: Հայոց Հայրենիքը պատմական իրադարձությունների աննպաստ զարգացման հետևանքով ընկնում է թուրքերի տիրապետության տակ:

Թուրքական ցեղերը, նվաճելով Հայկական լեռնաշխարհը, պայքար են սկսում հայոց պատմական Հայրենիքը սեփականացնելու, այնտեղ թուրքական ազգային պետություն ստեղծելու համար: Ձևավորվում է Հայկական լեռնաշխարհը նվաճած թուրքական ցեղերի ազգային գաղափարախոսությունը, որի հիմնական նպատակը հայոց պատմական Հայրենիքը սեփականացնելն էր, այդ տարածքում թուրքական հզոր պետության ստեղծումը:

Թուրքերի ազգային գաղափարախոսության իրականացման համար պետք է ոչնչացվեր այդ նվաճված Հայրենիքի տերը՝ հայ ժողովուրդը: Հայ ժողովուրդը կամ պետք է ձուլվեր, կամ ֆիզիկապես ոչնչացվեր, կամ էլ արտագաղթեր օտար երկրներ:

Թուրքերը հայոց Հայրենիքը նվաճելուց ի վեր դարեր շարունակ վարել են հայերին ձուլելու, Հայաստանը հայաթափ անելու քաղաքականություն:

19-րդ դարի վերջերին համոզվելով, որ հայ ժողովրդին ձուլելու, Հայաստանը հայաթափելու քաղաքականությունը սպասված արդյունքները չի տալիս, թուրքերը անցնում են հայերի ֆիզիկական ոչնչացման քաղաքականության կենսագործմանը: Եղեռնի և զանգվածային կոտորածների միջոցով նոր Հայրենիք ձեռք բերելու քաղաքականության հիմքը դնում է Աբդուլ Համիդը, որը միայն 1894-1896 թվականներին ոչնչացնում է շուրջ 300 հազար հայերի:

Հայերի ցեղասպանությունը Թուրքիայում սկսվել է 1890-ական թվականների սկզբներից: Թուրքիան սպասում էր միջազգային հարմար պահի՝ հայերի ցեղասպանության ծրագիրը մի հարվածով, ամբողջությամբ իրագործելու համար:

20-րդ դարի սկզբներին ձևավորվում է Աֆրիկայից մինչև Չինաստան և Չինաստանից մինչև Հյուսիսային սառուցյալ օվկիանոս ստրված թուրքալեզու ժողովուրդների ազգային գաղափարախոսությունը՝ պանթուրքիզմը, որի նպատակը

թուրքական ռասայի ժողովուրդների միասնական պետությանը՝ Մեծ Թուրանի ստեղծումն էր: Համաձայն պանթուրքիզմի գաղափարախոսության՝ Մեծ Թուրանի պետության ստեղծումը պետք է իրականացվեր հետևյալ երեք փուլերով.

ա/ Թուրքիզմի իրականացում, որը նշանակում էր Թուրքիայի մահմեդականացում, քրիստոնյաների, մասնավորապես՝ արևմտահայության ոչնչացում:

բ/ Օղուզական պետության ստեղծում, որի մեջ պետք է մտնեին Թուրքմենստանը, Թուրքիան, Ադրբեջանը և Պարսկական Ադրբեջանը: Այս ծրագիրն իրականացնելու համար պետք է ոչնչացվեր նաև արևելահայությունը, թուրքերը պետք է նվաճեին նաև Արևելյան Հայաստանը:

գ/ Մեծ Թուրանի պետության ստեղծում: Հայկական սեպի վերացումից, Օղուզական պետության ստեղծումից հետո ճանապարհը բաց էր և ոչ մի խոչընդոտ չկար պանթուրքիզմի գաղափարախոսության իրականացման համար, թուրքալեզու ժողովուրդները միավորվում էին՝ կազմելով Մեծ Թուրանի պետությունը[1]:

Արևմտահայության ոչնչացումը պետք է կազմակերպեր Թուրքիան, արևելահայության ոչնչացումը՝ Թուրքիան Ադրբեջանի օժանդակությամբ: Մեծ Թուրանի պետությունը պետք է ստեղծվեր Թուրքիայի ղեկավարությամբ՝ թուրքալեզու բոլոր ժողովուրդների օժանդակությամբ:

Այսպիսով, հանուն թուրք ժողովրդի նոր Հայրենիքի ձեռքբերման, հանուն այդ տարածքում թուրքական հզոր ազգային պետականության ստեղծման, հանուն Մեծ Թուրանի համաթուրքական պետության ստեղծման պետք է ոչնչացվեր ամբողջ հայ ժողովուրդը:

Պատմությունը խաչաձևեց թուրքերի և հայերի ազգային շահերը: Հայոց պատմական Հայրենիքում կամ թուրքը պետք է կառուցեր իր ազգային պետականությունը, կամ էլ հայերը պետք է վերականգնեին իրենց կորցրած պետականությունը:

---

[1] **Зареванд, Турция и Пантуранизм, Ер. 1991.**
Զարևանդ, Միացյալ, Անկախ Թուրանիա, Աթենք, 1988:

Պատմությունը հարցը դրել էր անողոք կերպով. հայոց պատմական Հայրենիքում պետք է ապրեր մեկը՝ կամ թուրքը, կամ հայը: Երրորդ ուղին թուրքերը բացառեցին: Հայ ժողովուրդը կամ զենքը ձեռքին պետք է պաշտպաներ իր Հայրենիքը թուրքական զավթիչներից, կամ էլ արտագաղթեր օտար երկրներ, հակառակ դեպքում դատապարտված էր ոչնչացման:

Եթե հայոց պատմական Հայրենիքը սեփականացնելու համար անհրաժեշտ էր ֆիզիկապես ոչնչացնել արևմտահայությանը, ապա պանթուրքիզմի գաղափարախոսությունը իրականացնելու՝ Մեծ Թուրանի պետությունը ստեղծելու համար պետք է ոչնչացվեր նաև Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող արևելահայությունը:

Ստեղծված պատմական պայմաններում միամտություն էր խոսել թուրքերի հետ լեզու գտնելու, հայ ժողովրդի առջև ծառացած խնդիրները՝ հայոց Հայրենիքի ազատագրության, հայ պետականության վերականգնման հիմնահարցերը թուրքերի հետ խաղաղ լուծելու մասին: Թուրքերի և հայերի միջև հաշտության եզրեր չկային: Թուրքերը, նվաճելով հայոց Հայրենիքը, այն վերածում էին սեփական հայրենիքի:

Հայ ժողովուրդը կամ պետք է կռվեր Հայրենիքի համար, կամ էլ հեռանար օտար երկրներ, որտեղ նա դատապարտված էր սպիտակ եղեռնի:

Հայ ժողովրդին մնում էր միայն մի ելք՝ ձեռք բերելով քիչ թե շատ հուսալի դաշնակիցներ, պայքարի դուրս գալ թուրքական նվաճողների դեմ՝ Հայրենիքի ազատագրության, հայ պետականության վերականգնման համար:

Հայ ժողովուրդը ընտրեց պայքարի ուղին: Հայ ժողովրդի պայքարը Հայրենիքի ազատագրության, անկախ պետականության վերականգնման համար պատմության մեջ մտել է Հայկական հարց, Հայ Դատ և Պահանջատիրություն անուններով:

Հայ ազատագրական շարժման դրոշակակիրները հույս ունեին արևմտյան երկրների դիվանագիտության կամ էլ զինուժի օգնությամբ ազատագրել Հայաստանը: Սակայն երկարատև անարդյունք որոնումներից հետո հուսախաբվելով Արևմտյան երկրներից՝ նրանք ի վերջո հանգեցին ռուսական կողմնորոշման:

Ազատագրական պայքարի ընթացքում մշակվում է "Զարյաց փոքրագույնի" կոնցեպցիան, որի համաձայն, եթե անկախության համար բարենպաստ պայմանները բացակայում են, ապա կենսական անհրաժեշտություն է դառնում Ռուսաստանի, քան թե Թուրքիայի տիրապետության տակ գտնվելը, որովհետև եթե առաջինը նշանակում էր լոկ պետականության կորուստ, ապա երկրորդը հանգեցնում էր հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման:

Հզոր ռուսական կայսրության գոյությունը խանգարելու էր Մեծ Թուրանի պանթուրքական ծրագրի իրականացմանը, քանզի թուրանական պետության ստեղծումով կանդամահատվեր Ռուսաստանը: Ահա թե ինչու Ռուսաստանը և Թուրքիան ստրատեգիական առումով հավերժ թշնամիներ են՝ իրարամերժ ազգային գաղափարախոսություններով, ահա թե ինչու հայ ժողովուրդը իր պատմական ճակատագիրը պետք է միշտ կապած ունենա Ռուսաստանի հետ, անկախ այն բանից, թե ինչ գույն ու ռեժիմ կունենա այդ երկիրը:

"Զարյաց փոքրագույնի" կոնցեպցիան, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, ելնում էր հայ ժողովրդի ազգային շահերից, ազգային-ազատագրական պայքարի փորձից և արդյունք էր հայ ազատագրական մտքի հեռատես քաղաքականության:

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմով Հայկական հարցը միջազգայնացվեց, մտավ միջազգային հարաբերությունների խաղացանկի մեջ: Սան-Ստեֆանոյում և Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցը առաջին անգամ մտավ միջազգային պայմանագրերի մեջ: Սակայն Բեռլինի կոնգրեսը չիրականացրեց հայ ժողովրդի հույսերը: Հայկական հարցը չլուծվեց:

Հայ ժողովուրդը հուսախաբված էր: Բեռլինի կոնգրեսը շրջադարձային նշանակություն ունեցավ հայոց ազատագրական պայքարի պատմության մեջ: Դիվանագիտության, մեծ տերությունների խնդրելու միջոցով Հայկական հարցը լուծելու քաղաքականությունն իրեն չարդարացրեց:

Անհրաժեշտ էր փոխել Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարի մարտավարությունը:

Ահա այսպիսին էին այն դասերը, որոնք քաղեց հայ ժողովուրդը Բեռլինի կոնգրեսից:

Հայ ազատագրական միտքը, ելնելով Բեռլինի կոնգրեսի պատմական դասերից, հանգեց Հայկական հարցը զենքով, զինված ուժով լուծելու գաղափարին: Հիասթափված և հուսախաբված Արևմուտքից՝ հայ հասարակական-քաղաքական միտքը հայ պետականության վերականգնման հույսը այժմ կապում էր միայն հայ ժողովրդի զինված պայքարի հետ:

Փոխվեց ազատագրական պայքարի մարտավարությունը, օրակարգի մեջ մտավ զինված ուժով Հայկական հարցը լուծելու գաղափարը: Հայ ազատագրական միտքը արմատական շրջադարձ կատարեց:

Հայ ժողովրդի պատմության այդ բախտորոշ պահին ազգային-ազատագրական պայքարը կյանքի կոչեց հայ ազգային կուսակցություններին, որոնց բախտ էր վիճակված ղեկավարելու Հայկական հարցի լուծման համար մղվող ծանր ու անողոք պայքարը:

Հայ քաղաքական կուսակցությունները զինված պայքարի մարտահրավեր են նետում Օսմանյան կայսրությանը: Հ.Հ. Դաշնակցության 1890թ. հրատարակած առաջին թռուցիկում ասվում էր. "Այսօր Հայոց հարցը նոր շրջանի մեջ է մտնում: Դարերից ի վեր ստրուկ Թուրքա-Հայաստանը ազատություն է պահանջում:

Հայը, որ դեռ երեկ շլինքը ծռած Եվրոպայից օգնություն էր աղերսում, այսօր համոզվելով, որ օտարի վրա դրած հույսը ցնորք է, վճռել է իր ձեռքով պաշտպանել իր իրավունքը, իր կյանքը, պատիվը, ընտանիքը...

Հայոց հարցի վճռի հետաձգելը այլևս անկարելի է: ... Դաշնակցությունը մտել է այն կռվի մեջ, որ սկսել է ինքը՝ ժողովուրդը, տաճկաց կառավարության դեմ՝ ուխտելով մինչև արյան վերջին կաթիլը կռվել Հայրենիքի ազատության համար...[1] ":

[1] Հ.Յ.Դ. Վաթսունամեակ (1890-1950), Բոստոն, 1950, էջ 49-51:

Օսմանյան տիրապետության դեմ զինված պայքարը սկսվում է որպես համաժողովրդական պարտիզանական /ֆիդայական/ պատերազմ, որը հզորանալով պետք է վերածվեր համաժողովրդական ընդհանուր զինված ապըստամբության:

Զինված պայքարի բարձրակետը 1894-1895 թվականներն են՝ Սասունի և Զեյթունի ապստամբություններով: Արևմտահայությունը դարձավ հզոր քաղաքական և ռազմական գործոն:

Ե՛վ Աբդուլ Համիդը, և՛ երիտթուրքերը բանակցություններ սկսեցին հայ քաղաքական ուժերի հետ՝ փորձելով նրանց օգտագործել իշխանության համար մղվող պայքարում: Բանակցությունները Համիդի հետ տևեցին շուրջ երեք տարի և ավարտվեցին անհաջողությամբ, իսկ երիտթուրքերի հետ ընդհատումներով շարունակվեցին մինչև 1908 թվականը:

Ո՛չ Սասունի և ո՛չ էլ Զեյթունի ապստամբությունը չհաջողվեց վերածել համաժողովրդական ընդհանուր զինված ապստամբության: Պարզ դարձավ, որ ընդհանուր ժողովրդական զինված ապստամբության համար արևմտահայությունը դեռ պատրաստ չէ: Անհրաժեշտություն առաջացավ փոփոխություններ մտցնելու ազատագրական պայքարի տակտիկայի մեջ:

1896-1898 թվականներին հայ քաղաքական կուսակցությունները հրաժարվում են ֆիդայական կռվի տակտիկայից և անցնում երկրում զինված ուժեր պատրաստելուն՝ ընդհանուր ապստամբության համար:

Հ.Հ. Դաշնակցությունը միաժամանակ փորձում է բանակցությունների մեջ մտնել և հաշտության եզրեր գտնել երիտթուրքերի կուսակցության հետ: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ Ս.Դ. Հնչակյան կուսակցության 1896 թվականի պառակտումից և թուլացումից հետո Հ.Հ.Դաշնակցությունը դարձել էր ազգային-ազատագրական պայքարի միանձնյա ղեկավարը:

Դաշնակցության առաջարկով 1907թ. դեկտեմբերի 27-29-ը Փարիզում տեղի է ունենում Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ կոնգրեսը, որի ընդունած

հայտարարագրում պահանջվում էր.

"1.Գահընկեցություն Սուլթան Համիդի:

2.Արմատական փոփոխություն ներկա ռեժիմին:

3.Հաստատում ներկայացուցչական ռեժիմի /Խորհրդարան/":

Թուրքիայի ընդդիմադիր ուժերի կոնգրեսի ընդունած փաստաթղթում հայտարարվում էր. "Մենք միանում ենք ընդհանուր պայքարի համար, միանգամայն հարգելով յուրաքանչյուր կազմակերպության ինքնավարությունը. միանում ենք անկեղծորեն, եղբայրորեն, և նախքան կռիվ սկսելը՝ խոստանում ենք չթուլանալ, ու հայտարարում ենք սուլթանին՝ թե մեր զենքերը վայր չենք դնի, մինչև որ Թուրքիայի համար նոր դարագլուխ չբանանք"[1]:

Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի բլոկը ստեղծված էր, խնդիրները՝ հստակեցված: Արևմտահայությունը դադարեցնում էր ազգային-ազատագրական զինված պայքարը և օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի հետ կռվի մեջ մտնում տիրող կարգերը տապալելու, երկրում պառլամենտական, սահմանադրական կարգեր հաստատելու համար:

Թե ինչպիսին պետք է լիներ Արևմտյան Հայաստանի կարգավիճակը օսմանյան կայսրության կազմում, հայտնի չէր, պարզ էր միայն, որ բոլոր դեպքերում պետք է պահպանվեր Թուքիայի տարածքային ամբողջականությունը: Հայ քաղաքական կուսակցությունները փոփոխություններ են մտցնում իրենց ծրագրերի մեջ՝ ճանաչելով Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Հայերը գնացին զիջումների: Ստեղծվեց այն պատմական շանսը, որը երկու ժողովուրդների քաղաքական ուժերին հնարավորություն էր տալիս փոխզիջումների գնով հաշտության եզրեր գտնել, կյանքի կոչել Արևմտյան Հայաստանի կարգավիճակի ընդունելի տարբերակ:

Նման պատմական պայմաններում, բնականաբար, դադարեցվեց ազգային-ազատագրական պայքարը, օրակարգից գործնականում հանվեց արևմտահայությանը ընդհանուր զինված ապստամբության պատրաստելու հարցը:

[1] Ցայտարարագիր Օսմանեան կայսրութեան ընդդիմադիր տարրերու կօնգրէին, Ժընեվ, 1907, էջ 7-8:

Ուրեմն, անհեթեթություն է խոսել ազգային-ազատագրական պայքարի պարտության մասին: Հայոց ազգային-ազատագրական պայքարը դադարեցվել է մարտավարությունը փոխելու պատճառով, իսկ ավելի ուշ՝ 1907 թվականին այն ընդհանրապես պաշտոնապես հանվել է օրակարգից՝Հայկական հարցը նոր պայմաններում խաղաղ ձևով լուծելու ակնկալիքների պատճառով:

Վճռական խոսքը պատկանում էր թուրքերին: Սակայն թուրքերի հետ լեզու գտնելու քաղաքականությունն արդյունք չտվեց: Երիտթուրքերը Թուրքիայի ընդդիմադիր ուժերին ցանկանում էին օգտագործել իշխանության գլուխ գալու համար: Իշխանությունը գրավելուց հետո երիտթուրքերը շարունակեցին Աբդուլ Համիդի հայոց ցեղասպանության քաղաքականությունը: Այդ առումով չափազանց բնորոշ էր Ադանայի հայ բնակչության 1909 թվականի կոտորածը, որին զոհ գնացին շուրջ 30 հազար հոգի:

1910-1911 թթ. երիտթուրքերը Սալոնիկի իրենց տարեկան ժողովներում պաշտոնապես հրաժարվեցին պանօսմանիզմից և ընդունեցին պանթուրքիզմի գաղափարախոսությունը: Պանթուրքիզմը դարձավ Թուրքիայի պետական գաղափարախոսությունը:

Երիտթուրքերի Սալոնիկի 1910թ. ժողովում Թալեաթը հայտարարում է, որ Օսմանյան կայսրության մեջ մահմեդականների և քրիստոնյաների միջև "հավասարության մասին ոչ մի խոսք չի կարող լինել այնքան ժամանակ, քանի դեռ չի հաջողվել կայսրությունը օսմանցիականացնելու մեր գիծը – երկար և սպառիչ աշխատանք մը, որում մեջ, սակայն, կը համարձակիմ ըսելու, վերջապես պիտի հաջողինք"[1]:

1911թ. Սալոնիկում տեղի ունեցած երիտթուրքերի հաջորդ տարեկան ժողովը որոշում է."Կայսրության նկարագիրը պետք է լինի մահմեդական: Պետք է ապահովվի մահմեդական հաստատությունների և ավանդությունների հանդեպ հարգանքը: Ազգությունները զանցառելի քանակութ-

[1] Լեւոն Վարդան, Թող թուրքը խոսի, Բեյրութ, 1975, էջ 11:

յուններ են: Թուրք լեզվի տարածումը գերազանց միջոց մըն է հաստատելու մահմեդական գերիշխանությունը և յուրացնելով ձուլելու մյուս տարրերը”:

Եվ այսպես, ընտրությունը կատարված էր: Պանթուրքիզմը դառնում էր Թուրքիայի պետական քաղաքականությունը: Սալոնիկի 1910 և 1911 թվականների համաժողովների որոշումները՝ կայսրությունը օսմանացնելու և մահմեդականացնելու մասին, նշանակում էր ամբողջ հայ ժողովրդի ցեղասպանության պետական ծրագրի ընդունում, որը գործնականում կենսագործվում էր դեռևս 90-ական թվականների սկզբներից:

Ուրեմն, թուրքերը չընդունեցին հայերի առաջարկը՝ Թուրքիայի տարածքային ամբողջականությունը պահպանելու պայմանով կանոնավորել հայ-թուրքական հարաբերությունները, որը տվյալ պատմական պայմաններում կարող էր նշանակել միայն Արևմտյան Հայաստանի տարածքային ինքնավարություն, ոչ ավելին: Թուրքերի նման վարքագծի մեջ անբացատրելի ոչինչ չկա: Թուրքերը, ինչպես ասել ենք, ցանկանում էին սեփականացնել հայերի պատմական Հայրենիքը: Նրանք իրենց նոր Հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը ցանկանում էին ունենալ առանց այդ երկրի իսկական տերերի՝ արևմտահայության: Թուրքերը շարունակում էին իրենց հին և ավանդական քաղաքականությունը՝Հայրենիքը պետք է պատկանի մի ժողովրդի՝ տվյալ դեպքում միայն իրենց: Արևմտահայության ճակատագիրը որոշված էր: Արևմտյան Հայաստանը թուրքերի Հայրենիք դարձնելու համար արևմտահայությունը պետք է ոչնչացվեր:

Թուրքիզմի և պանթուրքիզմի ծրագրերը իրականացնելու համար թուրքերը սպասում էին հարմար պահի, որպիսին կարող էր լինել սպասվող համաշխարհային պատերազմը, որը սկսվեց 1914թ. օգոստոսի 1-ին:

Թուրքիան բնականաբար միանում է գերմանական բլոկին: Անտանտի պետությունները և առաջին հերթին Ռուսաստանը ունեին իրենց նվաճողական պլանները Թուրքիային հետաքրքրող տարածքների նկատմամբ և հասկանալի պատճառներով նրան թույլ չէին տա ստեղծել Մեծ

Թուրանի պետությունը: Օգոստոսի 6-ին Թուրքիան և Գերմանիան համաձայնագիր են կնքում, որի 5-րդ հոդվածում ասվում էր. “Գերմանիան կօգնի Օսմանյան կայսրության արևելյան սահմանները շտկել այնպես, որ Թուրքիայի համար ապահովվի անմիջական շփում Ռուսաստանում բնակվող մահմեդական ազգաբնակչության հետ”[1]:

Պատերազմի մեջ մտնելու կապակցությամբ Թուրքիայի կառավարության հրապարակած կոչում ասվում էր.

“Մեր մասնակցությունը համաշխարհային պատերազմին արդարացվում է մեր ազգային իդեալով: Մեր ազգի իդեալը առաջնորդում է մեզ դեպի մեր մոսկովյան թշնամու ոչնչացումը, որպեսզի դրա հետևանքով ստեղծվեն մեր կայսրության բնական սահմանները, որոնք իրենց կազմում կունենան և կմիավորեն մեր ռասայի բոլոր ճյուղավորումները”:

Թուրքական ռասայի բոլոր ճյուղավորումները միավորելու համար պետք է, ինչպես արդեն ասել ենք, ոչնչացվեր արևմտահայությունը և որպես նվազագույն պայման նվաճվեին Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Նախիջևանը, Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը: Այդ տարածքների հայ բնակչությունը ևս պետք է ոչնչացվեր: Իսկ առավելագույնը ստեղծված իրավիճակում Թուրքիայի համար՝ ամբողջ հայ ժողովրդի և Հայաստանի ոչնչացումն էր. այդ էր պահանջում պանթուրքիզմի գաղափարախոսությունը:

Պանթուրքիզմի գաղափարախոսները թուրքական ժողովուրդներին կոչ էին անում զենքով ու արյունով, քրիստոնեական ժողովուրդների ոչնչացման գնով իրականացնել Մեծ Թուրանի ստեղծման գաղափարը:

Բանաստեղծ Մեհմետ Էմինը կոչ էր անում.

Արթնացե՛ք, եղբայրնե՛ր, որովհետև կյանքը
թրքական աշխարհին՝ ձեզմով պիտի բեղմնավորվի:
Մեկ փեթակ ունին բոլոր մեղուները.

[1] **Ключников Ю.В. и Сабанин А.В., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. 2, М., 1926.**

Մեկ Թուրան պետք է ունենան
Բոլոր թուրքերը:
Ալթայներու վրա ելիր,
Եւ կատաղի ձայն բարձրացուր,
Ճամբուն վրա հեղափոխման
Ծաղիկ չաճիր առանց արյան.
Մեն մի զավկեդ պահանջե դուն
Հավատք, արյուն և արություն.
Դրոշիդ շուրջը գան միանան
Թուրքերը համայն:

Մեհմետ Էմինը, ինչպես տեսնում ենք, թուրքական բոլոր ժողովուրդներին կոչ է անում համախմբվել Մեծ Թուրանի գաղափարի շուրջը, զգուշացնելով, որ առանց արյան ծաղիկ չի աճում:

Պանթուրքիզմի հիմնադիրներից և խոշորագույն գաղափարախոս Զիա Գեոք Ալփը "Դեպի Արևելք" խորագրով բանաստեղծությունների ժողովածուի մեջ գրելով, որ "Անատոլիան ներքին հող չէ, չի բաժանվում արտերկրից", թուրքական ժողովուրդներին հետևյալ կոչն է անում.

Զիս մի կոչեր թուրքմեն, քայ կամ օսմանցի,
Թուրք եմ, անունն այս բարձր է բոլորեն,
Չկա ուզբեկ, թաթար, խըրխըզ, շիրվանցի,
Թուրք ազգն է մեկ, չի բաժնուիր մեկն արդեն:
Ով թրքորդի, ալ ոչ ես կամ, ոչ դուն, ոչ ալ անիկա,
Չկա բարձր, չկա խոնարհ, այլ միայն կա Մեծ Թուրան,
Թեքում չկա մեր ճամբուն մեջ, անկախ պեյ կամ խան չկա,
Թուրք հոգիին մեջ կան միայն մեկ Հայրենիք, մեկ իշխան:

Ուրեմն, թուրքական ժողովուրդներին կոչ էր արվում նայել դեպի Արևելք, շարժվել դեպի Արևելք՝ Մեծ Թուրան, մեկ միասնական Հայրենիք ստեղծելու նպատակով. մի խնդիր, որի իրականացման համար բարենպաստ պայմաններ էր ստեղծում Առաջին համաշխարհային պատերազմը:

Եթե հիշյալ երկու հեղինակները թուրքերին կոչ են անում

համախմբվել և ստեղծել միասնական հայրենիք՝ Մեծ Թուրան, ապա պանթուրքիզմի մի այլ գաղափարախոս՝ Էնիս Ավնին արդեն անթաքույց շարադրում է այդ ճանապարհին ընկած ժողովուրդների ոչնչացման ծրագիրը.

Կոխած տեղերուս ամեն մեկ մասեն արյուն պիտի
ժայթքե...
Երկարած թաթիս տակ գարունները՝ աշնան և աշունները՝
զնդանի պիտի վերածվեն...
Եթե քար քարի վրա թողնեմ՝ ետիս թողած օջախս թող
քանդվի...
Վարդաստանները մեռելստան պիտի ընեմ սուրովս...
Պատմությանը պիտի թողնեմ անանկ կործանված ու գետնի
հավասար ավերակ մը, որ տասը դար մարդիկ չկարողանան քաղաքակրթություն կանգնեցնել անոր վրա:
Եթե ճյուղերի վրա տերև, և պատնեշի վրա դրոշ թողնեմ՝
թող սև կնիք զարնվի հավատքիս տախտակին վրա:
Շունչես հուր պիտի սփռեմ, զենքես՝ մահ, իսկ
քայլափոխես՝ անդունդ...
Ամեն ճերմակ գույն բուռ մը վառոդի արատով պիտի
խարանեմ,
և ամեն վառոդի արատ՝ ափ մը արյունով պիտի թաթախեմ:
Գթությունը պիտի կախեմ յաթաղանիս ծայրին,
իմաստությունը՝ հրազենիս փամփուշտին,
քաղաքակրթությունն ալ՝ նժույգիս ետևի պայտին:
Լեռներու փապարները, անտառներու հովանին
և ավերակներու,
կոշկոճ գուղձերը պիտի խոսին հավիտենության՝
այդ տեղերեն անցած թուրքին պատմությունը[1] *:*

Բացատրություններն ավելորդ են: Պարզ է, թե ինչպիսի մահացու վտանգ է սպառնում հայ ժողովրդին:

Օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորություններից՝ պանթուրքիզմը ձեռնա-

[1] Տես Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը, Բեյրութ, 1970, էջ 62-66:

մուխ է լինում ծրագրային դրույթների արմատական լուծմանը, որի առանցքը հայ ժողովրդի եղեռնի իրականացումն էր, հայկական "սեպի" վերացումը:

1915 թվականի սկզբներին Երիտթուրքերի կուսակցության կենտկոմի գաղտնի նիստը՝ Թալեաթի նախագահությամբ, որոշեց արևմտահայության գենոցիդի և տեղահանության կոնկրետ եղանակները:

Այդ նիստում Նազիմը հայտարարեց.

"Եթե այս մաքրագործումը ընդհանուր և վերջնական պիտի չըլլա, օգուտի տեղ վնաս կբերե. պետք է հայ ազգը արմատախիլ ըլլա, մեր հողին վրա անհատ մը անգամ չմնա, հայ անունը մոռացվի: Հիմա պատերազմի մեջ ենք, ասկե հարմար առիթ չի գտնվիր, մեծ պետությանց միջամտությունը և թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնար ըլլալ, ըլլալու պարագային խնդիրը կատարված իրողություն մը կը դառնա և կը փակվի. այս անգամուան գործողությունը բնաջնջումի գործողություն մը պիտի ըլլայ, հայերեն անհատ մը իսկ չմնալու պայմանավ բնաջնջումը անհրաժեշտ է"[1]:

1915 թվականի ապրիլի 15-ին հայերի ցեղասպանության մասին կազմվում է մի պաշտոնական հրահանգ, որում ասվում էր.

"Որևէ հաշտության սեղանի վրա, որևէ ձևով Հայկական հարցի դրվելը կանխելու համար, օգտվելով պատերազմի մեզ բերած անկախությունից, որոշեցինք վերջնական հաշվեհարդարի ենթարկել այն, բնաջնջելով անհարազատ այդ տարրը, քշելով նրանց դեպի Արաբիայի անապատները, համաձայն տրված մեր գաղտնի հրահանգի":

Արևմտահայության գենոցիդի մասին Թուրքիայի կառավարության այս որոշումը ստորագրել էին Ներքին գործերի նախարար Թալեաթը, ռազմական գործերի նախարար Էնվերը և Երիտթուրքերի կուսակցության կենտկոմի քարտուղար Նազիմը:

1915-1916 թվականներին իրականացվեց արևմտահայության ցեղասպանության պանթուրքական ծրագիրը: Ոչնչացվեց մեկուկես միլիոն հայ: Եղեռնից փրկվածները ցրվեցին աշխարհով մեկ: Արևմտյան Հայաստանը հայաթափվեց:

Արևմտահայության ոչնչացումից հետո Թալեաթը հայտարարեց. "Հայկական հարց այլևս գոյություն չունի, որովհետև այլևս հայեր գոյություն չունեն": Թուրքիան Հայկական հարցը Արևմտյան Հայաստանում լուծեց՝ բնաջնջելով արևմտահայությանը:

Իրականացվեց պանթուրքիզմի ծրագրի առաջին փուլը: Թուրքիան մահմեդականացվեց: Արևմտյան Հայաստանը հայաթափվեց: Հայոց պատմական Հայրենիքը զրկվեց իր իսկական տերերից և հայտարարվեց թուրքական Հայրենիքի բաղկացուցիչ մաս:

Թուրքիայում մշակվեց նաև Հայկական հարցի և ցեղասպանության պատմագիտական պետական կոնցեպցիա, որի հիմքում դրվեցին հետևյալ հիմնադրույթները.

ա. Հայերը եկվորներ են, Արևմտյան Հայաստանը նրանց Հայրենիքը չէ: Հայերը որպես ժողովուրդ չեն ձևավորվել, նրանք պատմության ընթացքում երբեք պետականություն չեն ունեցել:

բ. Թուրքերը և հայերը դարեր շարունակ ապրել են կողք-կողքի բարեկամաբար, առանց թշնամանքի: Հայերի վիճակը Թուրքիայում լավ է եղել: Թուրքերի և հայերի հարաբերությունները վատացել են Արևմտյան տերությունների և մասնավորապես Ռուսաստանի քաղաքականության պատճառով, որոնք Թուրքական կայսրությունը մասնատելու նպատակով օգտագործել են հայ քաղաքական կուսակցություններին և արևմտահայությանը: Չլինեն հայերի արևմտյան և հատկապես ռուսական կողմնորոշումը, թուրքերը և հայերը կապրեին եղբայրաբար, չէին լինի 1915 և հետագա տարիների դեպքերը:

գ. 1915-1916 թվականներին Թուրքիայում հայերի ցեղասպանություն չի եղել, այլ տեղի է ունեցել հայերի դեպորտացիա ռազմական գործողությունների գոտուց, որի պատճառը հայերի հակաթուրքական դիրքավորումն է եղել: Պատերազմական գործողությունների պայմաններում

[1] Մէվլան Զատէ Բիֆաթ, Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Բեյրութ, 1975, էջ 98:

դեպորտացիայի ենթարկվող հայության կորուստներն անխուսափելի էին:

դ. Եվ, վերջապես Հայկական հարցի և ցեղասպանության թուրքական պետական կոնցեպցիայի չորրորդ թեզն այն մասին է, որ հիշյալ տարիներին տեղի է ունեցել ոչ թե հայերի, այլ թուրքերի գենոցիդ, որին զոհ են գնացել շուրջ 600 հազար թուրքեր:

Փույթ չէ, որ վերոհիշյալ թեզերը ոչ մի առնչություն չունեն պատմագիտության հետ: Թուրքիան հսկայական գումարներ է ծախսում այդ հակագիտական կոնցեպցիան աշխարհում տարածելու համար:

Արևմտահայության ոչնչացումից հետո պանթուրքիստները պայքար սկսեցին իրենց ծրագրի երկրորդ կարևորագույն խնդրի՝ Օղուզական պետության ստեղծման համար: Օրակարգ մտավ Արևելյան Հայաստանի նվաճման, արևելահայության գենոցիդի իրականացման խնդիրը:

Սակայն 1915-1916 թվականների ռազմական գործողությունների հետևանքով ցարական զորքերը գրավել էին Արևմտյան Հայաստանի գրեթե ողջ տարածքը: Թուրքիան պետք է ջանար, առաջին հերթին, Ռուսաստանից հետ նվաճել այդ տարածքները և հետո միայն ձեռնամուխ լիներ Արևելյան Հայաստանի զավթման գործին:

Արևմտյան Հայաստանն այդ ժամանակ Ռուսաստանից հետ նվաճելը գործնականում անհնարին էր: Առաջին աշխարհամարտում հաղթանակած Անտանտի գաղութային պետությունները, բնականաբար, նվաճած տարածքները, նույն թվում և Արևմտյան Հայաստանը պետք է բաժանեին իրար միջև:

Եվ իրոք, երկարատև բանակցություններից հետո, 1916 թվականին Սայքս-Պիկոյի համաձայնությամբ, Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայկական տարածքները որոշվեց բաժանել հետևյալ կերպ. Ռուսաստանն անեքսիայի էր ենթարկում Վանը, Բիթլիսը, Էրզրումը և Տրապիզոնը, իսկ Ֆրանսիան՝ Դիարբեքիրը, Խարբերդը, Սվասը և Կիլիկիան:

Թուրքիայից նվաճելով Հայաստանի տարածքները, ինչպես տեսնում ենք, Անտանտի գաղութային պետություններ-

ը չցանկացան Հայկական հարցը լուծել՝ վերականգնել հայոց պետականությունը:

Բայց դրանով իսկ հայերի կյանքում այնուամենայնիվ տեղի էր ունենում արմատական փոփոխություն. Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայկական տարածքները անցնում էին Ռուսաստանին և Ֆրանսիային:

Օսմանյան կայսրությունը դատապարտված էր, դարերի ընթացքում նրա կողմից նվաճված տարածքներն անցնում էին Անտանտի գաղութատիրական պետություններին:

Միայն հրաշքը կարող էր փրկել Թուրքիային և այդ հրաշքը կատարվեց:

1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում բոլշևիկները գրավեցին իշխանությունը: Անտանտի կողմից մերժված բոլշևիկյան Ռուսաստանը դաշինքի մեջ մտավ Գերմանիայի հետ: Քառյակ միությունը գլխավորող Գերմանիայի հետ բանակցությունները, որոնք սկսվել էին 1917 թ. վերջերին, ավարտվում են 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում՝ պայմանագրի կնքումով:

Թուրքիան Գերմանիայի օգնությամբ հասավ իր նպատակին: Մի կողմից Ռուսաստանի, մյուս կողմից Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրի 4-րդ հոդվածում ասվում էր.

"Ռուսաստանն իրենից կախված ամեն ինչ կանի, որպեսզի ապահովի Արևելյան Անատոլիայի գավառների շուտափույթ մաքրումը և նրանց կանոնավոր հանձնումը Թուրքիային: Արդահանի, Կարսի և Բաթումի օկրուգները ևս անհապաղ մաքրվում են ռուսական զորքերից: Ռուսաստանը չի խառնվելու այդ օկրուգների պետական-իրավական նոր հարաբերությունների կազմակերպմանը, այլ դրանց բնակչությանը հնարավորություն կտա, հարևան պետությունների և հատկապես Թուրքիայի համաձայնությամբ, հաստատել նոր կարգ"[1]:

Բրեստ-Լիտովսկի պայմանագրով բոլշևիկյան Ռուսաստանը Թուրքիային էր վերադարձնում ինչպես առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական զորքերի կողմից

[1] **Документы внешней политики СССР, М., 1957, стр. 121.**

գրավված Արևմտյան Հայաստանի տարածքները, այնպես էլ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում նվաճված Կարսը, Արդահանը և Բաթումը:

Ընդ որում, բոլշևիկները իշխանության գլուխ գալով Ռուսաստանում 1917 թվականի նոյեմբերին չեղյալ էին հայտարարել Սայքս-Պիկոյի համաձայնությունը: Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ստորագրելու պահին ռուսական զորքերը հեռացել էին ոչ միայն Արևմտյան Հայաստանից, այլև Անդրկովկասից:

Ռուսական զորքերի հեռանալուց հետո, 1918 թվականի հունվարի 30-ին թուրքական բանակը հարձակում է սկսում՝ նպատակ ունենալով վերջնականապես իրականացնել պանթուրքիստների ծրագրային դրույթները:

Երկրի պաշտպանության գործը ընկավ հայդուկային խմբերի և նոր կազմավորվող ջոկատների վրա, որոնք, ինչպես ցույց տվեցին ռազմական գործողությունները, անկարող եղան դիմադրել թուրքական կանոնավոր բանակին: Թուրքական բանակը գրեթե առանց լուրջ դիմադրության գրավեց Արևմտյան Հայաստանը, մտավ Արևելյան Հայաստան և շարժվեց դեպի Երևան:

Պանթուրքիստները ձեռնամուխ եղան իրենց երկրորդ ծրագրային խնդրի իրագործմանը՝ Արևելյան Հայաստանի գրավմանը, արևելահայության ոչնչացմանը, որի նպատակը, ինչպես ասել ենք, օսմանյան թուրքերին, ադրբեջանցիներին և թուրքմեններին միավորող Օղուզական պետության ստեղծումն էր:

Գրավված վայրերում թուրքական բանակը իրականացնում էր հայ ժողովրդի ցեղասպանության պանթուրքական ծրագիրը:

Թուրքիայի նպատակների մասին Վեհիբ փաշան Բաթումի բանակցությունների ժամանակ Ա.Խատիսյանին ասել է հետևյալը.

"Դուք կը տեսնեք, որ ճակատագիրը կը քաշե Թուրքիան արեւմուտքեն արեւելք: Մենք հեռացանք Բալկաններից, կհեռանանք նաեւ Աֆրիկայից, բայց մենք պետք է տարածվենք դեպի արեւելք, հոն է մեր արյունը, մեր կրոնը եւ լեզուն: Եվ ասիկա տարերային ձգողություն ունի, մեր

եղբայրները Բաքու, Դաղստան, Թուրքեստան եւ Ադրբեջան են: Մենք պետք է ճամբա ունենանք դեպի հոն: Եվ դուք՝ հայերդ կանգնած եք մեր այդ ճամբուն վրա: Պահանջելով Վանը՝ դուք կը փակեք մեր ճամբան դեպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջեւանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզի իջնելու Քուրի հովիտը եւ երթալու Բաքու: Կարսն ու Ախալքալաքը կը փակեն մեր ճամբան դեպի Ղազախ ու Գանձակ: Դուք պետք է մեկ կողմ քաշուիք եւ մեզի ճամբա տաք: Ահա թե ուր է մեր հիմնական վեճը: Մեզի պետք են երկու լայն ճամբաներ, որոնք հնարավորություն տան մեր բանակներուն առաջ շարժվելու եւ պաշտպանուելու: Մեր ճամբան՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, որ կը տանի դեպի Գանձակ, մյուսը՝ կերթայ Շարուր-Նախիջեւան-Զանգեզուրով Քուրի հովիտը: Դուք կարող եք մնալ անոնց մեջտեղը, այսինքն Նոր-Բայազետի եւ Էջմիածնի շուրջը"[1]:

Ահա այսպիսին էին Թուրքիայի նպատակները պանթուրքիզմի ծրագրի իրականացման երկրորդ փուլում:

Օրակարգում դրված էր հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը: Հայ ժողովրդի պատմության ճակատագրական այդ պահին ամբողջ ժողովուրդը ոտքի ելավ թուրքական զավթիչներից պաշտպանելու իր կյանքն ու Հայրենիքը: Սարդարապատում, Բաշ Ապարանում և Ղարաքիլիսայում տեղի ունեցան կենաց ու մահվան ճակատամարտեր: Մայիսյան հերոսամարտերն ավարտվեցին թուրքական բանակի պարտությամբ:

Այդ պատմական ճակատամարտերի օրերին քայքայվեց Անդրկովկասյան Սեյմը, որի ավերակների վրա ստեղծվեցին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունները:

1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի անկախ Հանրապետությունը: Հայ ժողովուրդը վերականգնեց շուրջ 600 տարի առաջ կորցրած պետականությունը:

Սակայն պանթուրքիզմը, չնայած իր ձեռք բերած խոշոր հաջողություններին՝ .Արևմտյան Հայաստանի նվաճմանը,

[1] **Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 86:**

այնուամենայնիվ չհասավ իր հիմնական խնդրի՝ հայկական սեպի վերացմանը, հայ ժողովրդի ոչնչացմանը: Դեռ ավելին. պատմական Հայաստանի մի փոքրիկ տարածքում վերստեղծվեց հայկական պետականությունը: 1919 թվականին Հայաստանի Հանրապետության տարածքը հասավ 71.330 քառակուսի կիլոմետրի: Սևրի պայմանագրի համաձայն, ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնը 1920 թվականի նոյեմբերի 22-ին հանդես եկավ Հայաստանի սահմանագծման մասին իր "իրավարարական վճռով", որի համաձայն Արևմտյան Հայաստանի տարածքը պետք է կազմեր 90 հազար քառակուսի կիլոմետր:

1920 թվականի ամառը Հայկական հարցի պատմության բարձրակետն էր: Թվում էր, թե ճակատագիրը սկսում էր բարեհաճ դառնալ հայ ժողովրդի նկատմամբ:

Բայց ոչ: Պատմության գիրկն անցած երիտթուրքերի փոխարեն 1920 թ. սկզբին Թուրքիայում իշխանության գլուխ է գալիս Մուստաֆա Քեմալը, որը հետևողականորեն շարունակում է իր նախորդների պանթուրքիստական, հակահայկական քաղաքականությունը:

Համագործակցելով բոլշևիկյան Ռուսաստանի ղեկավարության հետ, ստանալով վերջինիս համաձայնությունը, Թուրքիան 1920 թվականի սեպտեմբերի 28-ին հարձակվում է Հայաստանի վրա՝ գրավելով Կարսը, Արդահանը, Սուրմալուն և Գյումրին: Նվաճված տարածքներում իրականացվում էր հայ ժողովրդի ցեղասպանության ծրագիրը: Թուրքիայի արևելյան ճակատի զինված ուժերի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը արդեն ծրագրեր էր մշակում ոչ միայն Հայաստանը, այլև ամբողջ Անդրկովկասը գրավելու մասին:

Սակայն այդ նույն ժամանակ Հայաստանի սահմաններին էին մոտեցել Խորհրդային Ռուսաստանի 11-րդ բանակի զորամասերը, որոնք հրահանգ ունեին գրավել Արևելյան Հայաստանը: Նոյեմբերի 29-ին 11-րդ բանակի զորամասերը մտնում են Հայաստան: Հայաստանի Հանրապետության բանակը, որը անկարող գտնվեց դիմակայելու թուրքական զորքերին, բնականաբար ի վիճակի չէր միաժամանակ կռվելու նաև ռուսական բանակի դեմ:

Ստեղծված ծանր իրավիճակում Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը հարկադրված էր դիմել հարցի լուծման մի տարբերակի, որը պատմության մեջ ստացել էր Զարյաց փոքրագույնը բնութագրումը: Դեկտեմբերի 2-ին Լեգրանի հետ կնքած համաձայնագրով Հայաստանի Հանրապետության իշխանությունն անցնում է բոլշևիկներին: Հայաստանը խորհրդայնանում է:

Հայաստանի անկախ Հանրապետությունը դադարում է գոյություն ունենալուց: Հայաստանը բաժանվում է Թուրքիայի և Ռուսաստանի միջև:

Հայրենիքի ազատագրության համար մղվող դարավոր պայքարում հայերը պարտվեցին: Այդ պայքարում հայերը և թուրքերը կիրառում էին արմատապես տարբեր մարտավարություններ: Թուրքերը հայոց պատմական Հայրենիքը սեփականացնելու համար վարում էին ամբողջ ժողովրդին՝ մեծից մինչև փոքրը, ֆիզիկապես ոչնչացնելու, ձուլելու, երկրից արտաքսելու, երկիրը ամբողջովին հայաթափելու քաղաքականություն, որպեսզի հետո կարողանան ի լուր աշխարհի հայտարարել, որ "այդ տարածքներում չկա հայություն, ուրեմն և չկա Հայկական հարց":

Հայերն ընդհակառակը, ի տարբերություն թուրքերի, վարում էին քաղաքակիրթ պայքար: Հայերի ազատագրական պայքարը թուրք ժողովրդի դեմ չէր, այլ թուրքական պետության, թուրքական զինված ուժերի, թուրք ոստիկանության դեմ: Հայոց ազգային-ազատագրական երգերում հստակորեն անցկացվում է այն թեզը, որ հայ հայդուկը զենք չի բարձրացնի թուրք կնոջ և երեխայի վրա:

Եվ այսպես, թուրքը դարեր շարունակ հետևողականորեն և անողոքաբար կոտորում էր հայերին, հայաթափում Հայաստանը, հետապնդելով հստակ ծրագիր՝ Հայոց լեռնաշխարհը դարձնել սեփական Հայրենիք, սեփական օջախ:

Նման մարտավարությամբ թուրքերը ձեռք բերեցին նոր Հայրենիք, իսկ հայերը զրկվեցին իրենց պատմական Հայրենիքից[1]:

---

[1] Շահան Նաթալի, Թուրքերը եւ մենք, Եր, 1992, էջ 194-196:

Հայը չհասկացավ, որ եթե թշնամին բարբարոս է, ապա նրան կարելի է հաղթել միայն բարբարոսական մարտավարությամբ: Հայը շատ ուշ հասկացավ պանթուրքիզմի մահացու վտանգը և այն տարրական ճշմարտությունը, որ տեղի է ունենում կենաց ու մահու կռիվ, որ Հայոց լեռնաշխարհը պետք է պատկանի մեկին՝ կամ հային, կամ թուրքին:

Եվ այդ առումով բոլորովին էլ պատահական չէ, որ մինչև այժմ հայկական գավառական քաղաքագետների շրջաններում թուրքի բարության մասին կարելի է լսել կենցաղային լեգենդներ և ստեղծված իրավիճակի համար մեզ մեղադրող թեզեր:

Պանթուրքիստները կիրառել են հստակ, հետևողական տակտիկա ու ստրատեգիա, որի շնորհիվ կարողացել են հասնել պանթուրքիզմի ծրագրի առաջին փուլի խնդիրների կատարմանը:

Սակայն այդ խոշորագույն հաջողություններով հանդերձ թուրքերը չկարողացան կենսագործել պանթուրքիզմի գաղափարախոսության իրականացման հիմնական պայմանը, չվերացվեց հայկական "սեպը", հետևաբար Մեծ Թուրանի ստեղծմանը մնում է մի խոչընդոտ՝ Զանգեզուրը:

Եվ քանի դեռ չի իրագործվել պանթուրքիզմի գաղափարախոսությունը, կա և գոյություն կունենա պանթուրքիզմը՝ իր վտանգներով: Սա անվիճելի իրողություն է:

Սա է հայերի համար ներկա փուլում պատմության առաջին կարևոր դասը:

Արևմտյան Հայաստանը, Կարսը, Արդահանը և Սուրմալուն թողնելով թուրքերին, իսկ Լեռնային Ղարաբաղն ու Նախիջևանը հանձնելով ադրբեջանցիներին, Ռուսաստանն, այնուամենայնիվ, չվերացրեց հայկական սեպը, քանզի պանթուրքիզմի հաղթանակը նշանակում է ռուսական կայսրության մասնատում: Այդ առումով էլ պանթուրքիզմը և ռուսաց ազգային գաղափարախոսությունը հավերժ անհաշտելի թշնամիներ են:

Հետևաբար, պատմության ներկա փուլում պանթուրքիզմի առկայությունը և նրանից բխող մշտական վտանգը պատմական դաս է նաև ռուս ժողովրդի և ռուսաց կայսրության համար:

Հենց այս իրողությունից էլ հայերը պետք է քաղեն պատմության երկրորդ կարևոր դասը: Եթե պանթուրքիզմը սպառնում է ռուսական կայսրության և հայ ժողովրդի գոյությանը, ուրեմն, նրանց շահերը առնչված են պատմության ճակատագրով: Այդ առումով էլ Հայաստանի ճակատագիրը պետք է կապված լինի Ռուսաստանի հետ:

Խոսակցությունները պանթուրքիզմի մեռնելու, համաշխարհային քաղաքականության օրակարգից դուրս գալու մասին պետք է համարել անհեթեթություն և չափազանց վտանգավոր մտայնություն, որովհետև դա բթացնում է պանթուրքիզմի ճանապարհը փակող ժողովուրդների ու պետությունների ինքնապաշտպանության բնազդը:

Բոլշևիկյան ռուսական կայսրությունը իր գոյության տարիներին անողոքաբար ճզմում էր բոլոր ժողովուրդների, նույն թվում և մուսուլմանական, ազգային և ազգայնամոլական գաղափարներն ու շարժումները, որովհետև դրանք նպատակ ունեին կայսրության մասնատումը և ազգային պետությունների ստեղծումը:

Նման պայմաններում պանթուրքիզմը, չհրաժարվելով իր հիմնական խնդիրներից, փոխում է պայքարի մարտավարությունը: Խորհրդային Միության մահմեդական տարածքներում պանթուրքիզմը անցնում է ընդհատակ: Նա համախմբում էր ուժերը, մշակում գործունեության նոր տակտիկա, պատրաստվում և սպասում իր աստեղային ժամին՝ ռուսական կայսրության քայքայմանը:

Այդ նույն ժամանակաշրջանում պանթուրքիզմը բացահայտ կամ ոչ բացահայտ ձևերով աշխարհում մեծ հաջողություններ էր ձեռք բերում: Պանթուրքիզմի դրոշակակիրը՝ պանթուրքիզմը պաշտոնապես մերժող Թուրքիան էր:

Խորհրդային Միության պայմաններում պանթուրքիզմի նոր մարտավարության հիմնական սկզբունքները կայանում էին հետևյալում.

ա\ ողջ երկրի թուրքական ժողովուրդներին համախմբել պանթուրքիզմի գաղափարախոսության շուրջը,

բ\ բարենպաստ պայմաններ ստեղծել հարմար պատմական պահին պանթուրքիզմի գաղափարները հեշտությամբ իրագործելու համար:

Դա նշանակում է, որ պանթուրքիստները ամեն կերպ նպաստելով Խորհրդային Միության փլուզմանը, միաժամանակ իրենց ուշադրության կենտրոնում պետք է պահեն 1920 թվականին չլուծված պրոբլեմի՝ հայկական սեպի վերացման հարցը: Եվ քանի որ սահմանային հարցերի լուծումը իրենց ուժերից վեր էր, ձեռնամուխ եղան այդ շրջանների հայաթափման քաղաքականության իրականացմանը:

Հայության ֆիզիկական եղեռնին փոխարինելու էր գալիս "սպիտակ եղեռնը": Խորհրդային իշխանության տարիներին լիովին հայաթափվեց Նախիջևանը: Հայկական բնակչության տոկոսը Լեռնային Ղարաբաղում 95-ից իջավ 75-ի: Լեռնային Ղարաբաղի հայաթափման պրոցեսը արագորեն շարունակվում էր: Միաժամանակ բուռն աճ էր ապրում հատկապես Զանգեզուրի ադրբեջանական բնակչությունը: Պանթուրքիստները գործադրում էին բոլոր ջանքերը, օգտագործում բոլոր խողովակները Զանգեզուրի ժողովրդագրական պատկերը փոխելու, այնտեղ ադրբեջանցիների քանակը մեծացնելու համար: Եվ այդ ուղղությամբ նրանք զգալի հաջողություններ հասան: 1979 թվականի մարդահամարի տվյալներով Կապանի շրջանում ադրբեջանցիները կազմում էին 41, 4 տոկոս, Մեղրիի շրջանում՝ 27, 1 տոկոս, Սիսիանի շրջանում՝ 21, 9 տոկոս, Ազիզբեկովի շրջանում՝ 26, 9 տոկոս: Նույն երևույթն էր տեղի ունենում նաև Հայաստանի մի շարք սահմանամերձ կարևոր շրջաններում[1]:

Եթե նկատի ունենանք ադրբեջանցիների բազմանալու տեմպերը, պարզ կդառնա, թե պանթուրքիզմի հարձակման դեպքում ինչպիսի վիճակում կհայտնվեր Հայաստանը:

Սումգայիթի հայության ջարդը 1988 թվականի փետրվարին, Բաքվի հայության եղեռնը 1990 թվականի հունվարին և սպանություններով ու թալանով ուղեկցվող հայության բռնագաղթը Բաքվից, Գանձակից, Շամխորից, Խանլարից, Դաշքեսանից և Ադրբեջանի այլ հայաբնակ վայրերից՝ ցույց տվեցին, որ պանթուրքիզմը մարտական

[1] **"Итоги всесоюзной переписи населения 1979 года по Армянской ССР", т.1, Ереван , 1980.**

վիճակում սպասում է ԽՍՀՄ անկմանը՝ ավելի լայնածավալ և արմատական գործողությունների անցնելու համար:

Այդ հասունացող վտանգի հետ միասին պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ Խորհրդային Միության կազմում Հայաստանը՝ զրկված անկախ պետականությունից, տարածքային ինքնավարության իրական կարգավիճակով, տնտեսության և մշակույթի բնագավառներում մեծ վերելք ապրեց: Հայաստանը խորհրդային իշխանության տարիներին դարձավ զարգացած արդյունաբերական և մշակութային երկիր:

Վերոհիշյալ վտանգավոր գործոնը կարող է ճակատագրական դեր խաղալ միայն Խորհրդային Միության կործանման դեպքում:

1990-1991 թվականներին քայքայվում է Ռուսաստանի բոլշևիկյան կայսրությունը, որի մեջ մտնող միութենականի կարգավիճակ ունեցող հանրապետությունները իրենց հռչակում են անկախ:

Թուրքիան, օգտվելով ԽՍՀՄ փլուզումից, եռանդուն գործունեություն ծավալեց դեռևս շոկի մեջ գտնվող Ռուսաստանից անջատված թուրքական ժողովուրդների միություն ստեղծելու համար: Ավանդական, բարբարոսական պանթուրքիզմը իր տեղը զիջեց ավելի ճկուն, նոր մարտավարությամբ գործող, բայց նույն նպատակները հետապնդող նեոպանթուրքիզմին: 1991-1993 թվականները նեոպանթուրքիզմի մեղրամիսն էին: Թուրքական ռասայի ազգայնամոլական կրքերը բորբոքվել էին, ռուսական արգելակը չկար, նեոպանթուրքիզմը մոլեգնում էր: Թուրքիայի ղեկավարներին նախկին ԽՍՀՄ մուսուլմանական հանրապետություններում ավագ եղբոր ջերմությամբ էին ընդունում: Թուրքիան դարձել էր ԽՍՀՄ մահմեդական նախկին հանրապետությունների ներկայացուցիչների Մեքքան: Ծրագիր ծրագրի հետևից էր մշակվում: ԽՍՀՄ թուրքական ժողովուրդները համախմբվում էին Թուրքիայի շուրջը: Նեոպանթուրքիզմը պատրաստվում էր ձեռնամուխ լինելու իր վաղեմի ծրագրի իրականացմանը:

Պանթուրքիզմի վտանգը նորից սպառնում էր ԽՍՀՄ

կազմից դուրս եկած, անկախություն հռչակած հայ ժողովրդին: Ճանապարհը պանթուրքիզմի առաջ բաց էր: Փոքրիկ, քայքայված տնտեսությամբ Հայաստանը ի վիճակի չէր խանգարելու պանթուրքիզմի ծրագրի իրականացմանը, որի առաջին խնդիրը հայկական սեպի վերացումն էր լինելու: Հայերի ազատագրական պայքարի ներկա փուլը առաջին պլան էր մղել Լեռնային Ղարաբաղի ազատագրման պահանջը և պատմության մեջ մտել՝ Ղարաբաղյան շարժում անունով: Հայ ժողովրդի պատմության և պանթուրքիզմի մասին ամենամակերեսային գիտելիք ունեցողներն անգամ գիտեին, որ Արցախը պահանջող հայ ժողովուրդը և Զանգեզուրը պահանջող պանթուրքիզմը հաշտության եզրեր չեն կարող ունենալ և ընդհարումը նրանց միջև անխուսափելի է:

Այս հարցում ոչ մի պատրանք չկար: Պանթուրքիստները մինչև վերջ պետք է պայքարեին Ղարաբաղի համար, հեռանկարում ունենալով նաև Զանգեզուրի գրավման ծրագիրը: Ընդ որում, պարզ էր նաև, որ նորանկախ, դեռևս բանակ չունեցող Հայաստանը, եթե անգամ ընդունակ լիներ կռվելու Ադրբեջանի դեմ, ի վիճակի չէր դիմակայելու Թուրքիայի հարձակմանը:

Պրոֆեսիոնալներին քաջ հայտնի էր, որ պանթուրքիզմը հայ ժողովրդին ոչ մի զիջում չի անելու, որ Թուրքիան Հայաստանից պահանջելու է հրաժարվել Հայկական հարցից, Լեռնային Ղարաբաղից, որին հետևելու է նաև Զանգեզուրը:

Պանթուրքիզմի վտանգից խուսափելու միակ ելքը հայ քաղաքական մտքի նախորդ սերունդների մշակած մարտավարության և ռազմավարության սկզբունքներին հարազատ մնալն է: Այդ սկզբունքները կայանում են հետևյալում. պայքարել ուժեղ, անկախ հայկական պետականության կայացման համար, ստեղծել հզոր, մարտունակ բանակ, ինչպես նաև, արտաքին քաղաքականության բնագավառում, անկախ Ռուսաստանում տիրող վարչակարգից, պահպանել ավանդական ռուսական կողմնորոշումը:

Նորանկախ Հայաստանի ղեկավարությունը, ելնելով հայ ժողովրդի պատմության դարավոր փորձից, ազգային

գաղափարախոսության սկզբունքներից պետք է մշակեր արդի փուլի պայմաններից բխող հայ պետականության գոյատևման մարտավարության և ռազմավարության կոնցեպցիան:

Հայոց ցեղասպանության պատճառների ու պատմական դասերի ուսումնասիրությունը մեզ հանգեցնում է հետևյալ եզրակացություններին.

1. Թուրքական իշխանությունները հայոց ցեղասպանությունը իրականացրել են՝ Թուրքիան թրքացնելու, մահմեդականացնելու, Մեծ Թուրանի ծրագիրը կենսագործելու համար: Թուրքերը հայոց պատմական Հայրենիքը սեփական Հայրենիք դարձնելու համար ոչնչացրեցին արևմտահայությանը: Պանթուրքիզմը 1915 թվականի հայոց ցեղասպանությունը անպայման պետք է իրագործեր, որովհետև դա էր Մեծ Թուրանի ստեղծման առաջին և հիմնական պայմանը:

Սակայն արևմտահայության 1915 թվականի ցեղասպանությամբ ավարտվեց պանթուրքիզմի ծրագրի առաջին փուլը: Մի շարք հիմնահարցեր մնացին չլուծված: Չվերացվեց հայկական սեպը, չստեղծվեց Օղուզական պետությունը, չիրականացվեց Մեծ Թուրանի գաղափարը:

2. Պատմության ներկա փուլում պանթուրքիզմը, որի դրոշակակիրը նորից Թուրքիան է, վերածվել է միջազգային հզոր գործոնի: ԽՍՀՄ փլուզումից հետո պանթուրքիզմը նորից ձեռնամուխ է եղել իր գաղափարախոսության չլուծված խնդիրների իրականացմանը:

Պանթուրքիզմի չլուծված խնդիրների համակարգի առանցքը հայկական սեպի վերացումն է, այսինքն՝ Զանգեզուրի գրավումը: Առանց հայկական սեպի վերացման Մեծ Թուրանի գաղափարը չի կարող իրականացվել: Այդ պատճառով էլ պանթուրքիզմի վտանգը առաջին հերթին սպառնում է Հայաստանին:

3. Հայոց նորաստեղծ պետականությունը պետք է ղեկավարվի դարերի ընթացքում մշակված, պատմության քննությունը բռնած ազգային գաղափարախոսության սկզբունքներով, հաշվի առնելով, իհարկե, նաև արդի շրջանի խնդիրներն ու պահանջները:

4. Պանթուրքիզմի դեմ մղվող գոյատևման պայքարում հայ ժողովրդի բնական դաշնակիցը կարող է լինել միայն Ռուսաստանը, որովհետև պանթուրքիզմի հաղթանակը, Մեծ Թուրանի ստեղծումը անխուսափելիորեն հանգեցնելու է մի կողմից Հայաստանի կործանմանը, մյուս կողմից՝ Ռուսաստանի մասնատմանը:

Ահա սրանք են հայոց ցեղասպանության պատմական դասերը:

Պատմության դասերը հաշվի չառնելու դեպքում հայոց նոր ցեղասպանությունը կդառնա անխուսափելի:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԵՂԵՌՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ /XV ԴԱՐԻ ՎԵՐՋ – 1915թ./

/պատմաժողովրդագրական ակնարկ Էրզրումի նահանգի օրինակով/

Հայոց ցեղասպանության հիմնահարցը վերջին երեք տասնամյակների գիտական, հասարակական-քաղաքական արծարծումների թեմա է ոչ միայն հայկական, այլև օտար շրջանակներում: Առ այսօր լույս են տեսել այդ խնդրին նվիրված բազմաթիվ արժեքավոր մենագրություններ, տարբեր երկրների արխիվներից հավաքված հարուստ նյութեր պարունակող ստվարածավալ ժողովածուներ, գիտահրապարակախոսական հոդվածներ: Այնուհանդերձ, այսօր էլ Հայոց եղեռնին վերաբերող աշխատությունների համանման հեղեղի պայմաններում, հարցի մի շարք կողմեր լուրջ ուսումնասիրման անհրաժեշտություն են զգում: Ուշագրավ է, որ ներկայումս թուրք պատմագրությունը, շարունակելով կատարել թուրքական պետական մեքենայի պատվերը հայոց ցեղասպանությունը ժխտելու հարցում, միաժամանակ մերթընդմերթ, երբեմն անուղղակիորեն ընդունում է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերի ոչ միայն տեղահանության, այլև կոտորածների իրողությունը, թեև երիտթուրքական ղեկավարության այդ ձեռնարկումները ներկայացնում է իբրև հարկադիր և հայերի "դավաճա-

նական” գործողությունները կանխարգելող քայլեր: Թուրքական պատմագրության և քաղաքական գործիչների այդօրինակ անուղղակի “խոստովանությունները” 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունում կատարված ոճրագործության մասին ավելի հաճախակի են դառնում, երբ հայամետ այլազգի մասնագետները վկայակոչում են մինչև Առաջին համաշխարհային պատերազմը և նրանից հետո Արևմտյան Հայաստանում հայ բնակչության ժողովրդագրական գործընթացների աննախադեպ միտումները, որի ողջ բովանդակությունը երկրամասի լիակատար հայաթափումն էր: Թուրքական կողմը այդ անհերքելի փաստարկը փորձում է նորից պատճառաբանել պատերազմական իրավիճակով և քրիստոնյա ու մահմեդական բնակչության միջև փոխադարձ կոտորածներով: Չանդրադառնալով թուրք հեղինակների այս վերջին անհամոզիչ ու ոչ նոր պնդումների սնանկության խնդրին՝ կարևոր ենք համարում քննության առնել մեկ այլ հիմնահարց, որն ավելի ակնառու և անհերքելի է դարձնում գենոցիդի առկայության խնդիրը Օսմանյան Թուրքիայում: Հարցը վերաբերում է հայ բնակչության ժողովրդագրական զարգացման ընթացքին 15-րդ դարի վերջից՝ այսինքն թուրքական նվաճման շրջանից մինչև 1915 թ. Մեծ եղեռնը: Հատկանշական է, որ ուսումնասիրողները, գրեթե առանց բացառության, հայոց ցեղասպանության գաղափարական ակունքները փնտրել են 19-րդ դարի վերջին քառորդում՝ սուլթան Համիդ II-ի գահակալման շրջանում, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հայկական հարցի հանդես գալու փուլում: Որպես կանոն, անուշադրության է մատնվել դրա նախորդ ժամանակաշրջանը, որում Արևմտյան Հայաստանի էթնոժողովրդագրական զարգացման բացահայտումը հնարավորություն է տալիս պատասխանելու կնճռոտ մի շարք հարցերի՝ արևմտահայության իրավիճակը Օսմանյան կայսրությունում, հայ ազգային-ազատագրական շարժման սոցիալ-քաղաքական ու տնտեսական նախադրյալները, հայկական նահանգներում ժողովրդագրական գործընթացների միտումները և այլն: Անշուշտ, 15-19-րդ դարերի այդ երկարատև ժամանակահատվածի համար, թեկուզև համառոտակի,

դյուրին չէ ներկայացնել ամբողջ Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական գործընթացները, ուստի փորձենք հարցը դիտարկել մասնակի օրինակով՝ ուսումնասիրության նյութ դարձնելով Էրզրումի նահանգը, որը կազմում էր Արևմտյան Հայաստանի կենտրոնական և ամենաընդարձակ վարչամիավորը:

14-րդ դարի ընթացքում կատարելով մի շարք նվաճումներ Փոքր Ասիայի արևմտյան ծովափնյա շրջաններում և Բալկաններում՝ նորաստեղծ Օսմանյան պետությունն ակտիվացրեց իր զավթողական քաղաքականությունը նաև Արևելքում և 1473 թ. Դերջանի ճակատամարտում հաղթելով ակ-կոյունլու թուրքմենական ցեղերին՝ իրականացրեց Հայաստանի մեծագույն մասի բռնազավթումը: 16-րդ դարի սկզբից Արևելքում գերիշխանություն հաստատելու համար ծավալված պարսկա-թուրքական մրցակցության առաջին փուլն ավարտվեց 1555 թ. կնքված Ամասիայի, իսկ վերջին փուլը՝ 1639 թ. Կասրե-Շիրինի պայմանագրերով, որոնց համաձայն Արևմտյան Հայաստանն ընկավ թուրքական կայսրության, իսկ Արևելյան Հայաստանը՝ Սեֆյան Պարսկաստանի տիրապետության տակ:

16-րդ դարի առաջին կեսին Արևմտյան Հայաստանի վերջնական նվաճման հետ մեկտեղ, Փոքր Ասիայի սելջուկյան պետություններից ժառանգելով կայսրության կազմակերպման գլխավոր տարրերը, վարչական բաժանման հիմնական սկզբունքները, սոցիալ-տնտեսական կյանքի մի շարք կողմեր՝ օսմանյան թուրքերը ձեռնարկել էին նոր վարչակարգերի ստեղծումը: Նվաճված երկրամասի վարչական բաժանումը, պայմանավորված մահմեդական վերնախավի ազգային-քաղաքական և տնտեսական շահերով, աչքի էր ընկնում անկայունությամբ և մշտատև փոփոխություններով:

Օսմանյան կայսրության տարածքը տրոհվեց վարչատարածքային մեծ ու փոքր միավորների՝ էյալեթների /հետագայում՝ վիլայեթ, հայկական աղբյուրներում՝ նահանգ/, սանջակների /լիվա, գավառ/, կազաների /գավառակ/ և նահիեների /գյուղախումբ/: Մինչև 1530-ական թվականները Արևմտյան Հայաստանի տարածքում ձևավորվեցին Էրզ-

ռումի /Կարնո/, Սեբաստիայի, Կարսի, Վանի, Դիարբեքիրի, Ախալցխայի էյալեթները[1]: Վարչականորեն Էրզրումի նահանգի կազմում էր լայն ինքնուրույնությունից օգտվող Բայազետի սանջակը, որը երբեմն աղբյուրներում հիշատակվում է նաև իբրև առանձին էյալեթ[2]: Էրզրումի ընդարձակ էյալեթը, որի տարածքը տարբեր ժամանակներում տատանվում էր 70-80 հազ. քառ կմ սահմաններում, ընդգրկում էր հետևյալ գավառները՝ Էրզրում, Վերին Բասեն, Ստորին կամ Ներքին Բասեն, Քղղի /Կեղի/, Դերջան, Երզնկա, Բաբերդ, Սպեր, ինչպես նաև փաշայանիստ Բայազետի լիվա-փաշայությունը իր չորս գավառներով՝ Բայազետ, Ալաշկերտ, Դիադին և Խամուր[3]: Այս վարչական բաժանումը հիմնականում պահպանվեց մինչև 20-րդ դարի սկիզբը: Այդ ընթացքում տեղի ունեցան վարչական փոփոխություններ: Քանի որ Էրզրումի նահանգի հարցում դրանք համեմատաբար ավելի հազվադեպ երևույթներ էին[4], երկրամասի ժողովրդագրական զարգացման ուսումնասիրության տեսակետից առավել նպատակահարմար է այս վարչամիավորի ընտրությունը:

Ի՞նչ ժողովրդագրական իրավիճակ էր Արևմտյան Հայաստանի կենտրոնական նահանգում 15-րդ դարի վերջից մինչև 17-րդ դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում, այսինքն՝ թուրքական տիրապետության հաստատման շրջանում: Տարբեր աղբյուրների համադրությունից պարզորոշ երևում է, որ չնայած նախորդ ժամանակաշրջանում երկրամասում տեղի ունեցած ոչ հայանպաստ էթնոգործընթացին, Էրզրումի նահանգի տարածքը հիմնականում բնակեցված էր տեղաբնիկ հայ տարրով, որի կողքին առանձին գավառներում օրեցօր հայտնվում էին եկվոր էթնիկական այլ խմբեր: Այսպես. 17-րդ դարի առաջին կեսին

[1] Օսմանյան կայսրության վարչական բաժանումը մանրամասն տես Birlken A., Die Provinzen des Osmanischen Reiches, Wiesbaden, 1976.

[2] Տես Մելքոնյան Ա., Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դ. առաջին երեսնամյակին, Եր. 1994, էջ 27-34:

[3] Տես նշ. տ., էջ 28:

[4] Էրզրումի նահանգի կազմում 16-րդ դարից ընդգրկված էին Շաբին Կարահիսարի և Կելկիթի /Գայլ գետ/ գավառները, որոնք 1846 թ. մնացին Սեբաստիայի նահանգին:

Էրզրումի էյալեթի 23 գավառներում տիրող ժողովրդագրական վիճակի մասին կարևոր նյութեր է հաղորդում այդ ժամանակաշրջանի հեղինակ, Բարձր Հայքի աշխարհագրությանը քաջատեղյակ Հակոբ Կարնեցին իր "Շինված Կարնո քաղաքին..." աշխատությունում: Ըստ այդ սկզբնաղբյուրի գավառների մեծ մասը բնակեցված էր բացառապես հայերով: Այդ գավառներից մի քանիսի մասին մեջբերենք Կարնեցու խոսքերը.

Ղուզուջան - "գավառ գեղեցկաշէն յոյժ, պարոնանիստ, ... լի և գեղերօք Հայոց":

Դերջան - "ունի գիւղս բազումս Հայոց բնակարան... և ունի գիւղաքաղաք զԲագառիճ":

Երզնկա - "ունի գիւղք և աւանց բազում և ունի վանս ԻԴ /24/: ... Եւ ունի քաղաք մեծ Հայոց զԵրզնկա, որ լի է ամենայն բարութեամբ"[1]:

Կամախ — "երկիրն Դարանաղեաց, որ ունի գիւղք և աւանք... Եւ է յոյժ վայելուչ և մրգաբեր փոքրիկ քաղաք և բնակութիւն ազգիս Հայոց": Հակոբ Կարնեցու մոտ համանման վկայություններ կարելի է գտնել նաև Բայազետի, Խամուրի, Դիադինի, Բասենի, Էրզրումի այլ գավառների կապակցությամբ:

Նույն հեղինակի վկայությամբ զուտ հայաբնակ գավառների հարևանությամբ մի քանի վարչամիավորներում իրենց զգացնել էին տալիս թյուրքական ծագում ունեցող էթնիկական խմբերը, որոնք հայկական աղբյուրներում հիշատակվում են "տաճիկ" հավաքական անվանումով և քրդերը:

"Տաճիկների" կարելի էր հանդիպել գերազանցապես հյուսիսային գավառներում: Գայլ գետ կամ Կելկիթ գավառի մասին Հ. Կարնեցին գրում է . "ունի գիւղս բազում ձորամէջս. և ունի գիւղաքաղաք զԿարմրի, և բնակիչք երկրիս Հայք և Տաճիկք են": Վերջինիս հարևան Շեռեան կամ Շարիան գավառակում "բնակիչք երկրիս Հայ բազում, Հօոմք /հույներ-Ա. Մ./ և Տաճիկք ևս": Նահանգի հյուսիս արևելյան մասում ընկած Վերին Բասենի մասին կարդում ենք. "Եւ են

[1] Հակոբ Կարնեցի, Շինուած Կարնոյ քաղաքին /" Մանր ժամանակագրություններ"/, կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. 2, Ե. 1956, էջ 550-551:

բնակիչք հայ եւ թուրք սակաւք" [1]: Այս մեջբերումներից պարզորոշ երևում է, որ վերջին երեք վարչամիավորում էլ բնակչության մեծամասնությունը կազմել են հայերը, այլապես "տաճիկների" համար հեղինակը չէր գործածի "տաճիկ ևս", "թուրք սակաւք" բառակապակցությունները:

Այն, որ հյուսիսային գավառները, որոնք առավել շատ էին կրել մահմեդական տարրերով բնակեցվելու օսմանյան կառավարության ձեռնարկումների ազդեցությունը /այդ մասին ավելի հանգամանալից կանդրադառնանք ստորև/, ունենալով հայ-թուրքական խառը բնակչություն, այնուհանդերձ գերազանցապես հայաբնակ էին, և "տաճիկները" չնչին թիվ էին կազմում, թերևս երևում է նաև թուրք հետազոտող Միրոդլուի հրատարակած գրքից[2], որում բերված տվյալներով Էրզրում նահանգային կենտրոնից հյուսիս ընկած Բաբերդի գավառում քրիստոնյաները 16-րդ դարում բնակչության անվիճելի մեծամասնությունն էին: Բացի թուրքերից Էրզրումի նահանգի տարածքում ապրող եկվոր փոքրաթիվ էթնոխմբերի մեջ քիչ թե շատ նկատելի էին նաև քրդերը: Նրանք իրենց ցեղախմբերով բնակեցնում էին նահանգի հարավային շրջանները: Քըղի գավառում կային "գիւղք բազումք և բնակութիւն Հայոց և Քրդաց" [3]: Վերջիններից արևելք, Բյուրակնյան / Բինգյոլի/ լեռների ստորոտին տարածվող Խնուս գավառի "բնակիչք երկրիս բազում Հայ և Քուրդք" [4]: Այս դեպքում էլ դժվար չէ նկատել, որ այդ շրջաններում քրդերը իրենց թվաքանակով չեն գերազանցել հայերին: Միայն մի քանի լեռնային համայնքներում, որտեղ տարածված էր միայն քոչվոր անասնապահությունը, քրդերը մեծամասնություն էին կազմում: Դրանցից էր Ալաշկերտի գավառի արևելյան հատվածում ընկած լեռնային Խալի Ցազի նահիեն՝գյուղախումբը, որտեղ մշտական բնակավայրեր չկային, այլ ժամանակավոր քոչվոր-անասնապահական յայլաղներ էին: Համեմատաբար համանման վիճակ էր նաև Խնուս գավառի հյուսիսում ընկած Թեքման նահիեում, որտեղ, սակայն, կային նաև հայկական բազմաթիվ գյուղեր և ավաններ[1]:

Այսպիսով, 17-րդ դարի առաջին կեսին Էրզրումի նահանգը Արևմտյան Հայաստանի էթնիկապես ամենամիատարր վարչամիավորներից մեկն էր: Այս վիճակը սակայն երկար չտևեց: Թեև 16-րդ դարի սկզբից ընթացող պարսկա-թուրքական պատերազմների ընթացքում մեծապես տուժում էր հայ բնակչությունը, սակայն ռազմական վիճակը միաժամանակ թույլ չէր տալիս օսմանյան իշխանություններին լծվելու երկրամասը մահմեդական բնակչությամբ ստվարացնելու գործին: Այժմ ընդհանուր գծերով ներկայացնենք Արևմտյան Հայաստանում և Էրզրումի նահանգում տեղի ունեցող այն ժողովրդագրական գործընթացները, որոնց արդյունքում զգալիորեն փոխվեց երկրամասի դեմոգրաֆիական պատկերը:

Առաջին մահմեդական տարրերը Հայաստան ներթափանցել էին դեռևս 7-8-րդ դարերում՝ արաբական նվաճումների ժամանակ: 11-րդ դարում դրանց գումարվեցին սելջուկ թուրքերը, 13-րդ դարում՝ մոնղոլները /13-րդ դ. վերջին նրանք ընդունեցին մահմեդականություն/, 14–15-րդ դդ. թուրքմենական ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերը: Հայաստանի համար հատկապես ծանր հետևանքներ ունեցան Ջալալիների ասպատակությունները և 16–17-րդ դդ. պարսկաթուրքական մրցակցությունը: Արևմտյան Հայաստանի թուրքական ներխուժման հետ մեկտեղ հետզհետե սկսեց ձևավորվել սուլթանական կառավարության խտրական քաղաքականությունը նվաճված ժողովուրդների նկատմամբ: Սուլթան Սելիմ II-ի /1566–1575/ հողային օրենքով գրավված տարածքները հայտարարվեցին նվաճված հողեր, որոնց նկատմամբ գերագույն սեփականատիրական իրավունքը տրվեց մահմեդական եկվոր բնակչությանը, հատկապես զինվորականությանը, կամ ծանրագույն պայմաններով թողնվեց տեղի հայ բնակչությանը:

Հպատակ ժողովուրդների նկատմամբ լիակատար գերիշխանություն հաստատելու նպատակով սուլթանական

[1] Հակոբ Կարնեցի, նշվ. աշխ., էջ 555:
[2] Miroglu I. XVI. Yüzyilda Bayburt Sancagi, Istanbul 1975.
[3] Հակոբ Կարնեցի, նշվ. աշխ., էջ 550:
[4] Նույն տեղում, էջ 558:

[1] Նույն տեղում, էջ 559:

կառավարությունը չբավարարվեց միայն տնտեսական ձեռնարկումներով: Նվաճված երկրամասերը սկսեցին բնակեցվել թուրքալեզու և իրանալեզու /գերազանցապես քրդեր/ցեղերով: Ձեռնարկված այդ քայլերի հետևանքով աստիճանաբար սկսեց փոփոխվել երկատված Հայաստանի էթնիկական դիմագիծը: Բնակչության ազգային երբեմնի միատարր կազմ ունեցող Արևմտյան Հայաստանում ծնվեցին մահմեդական կղզյակներ՝ օրեցօր իր հայրենիքից դուրս մղելով հայությանը:

Խորապես հասկանալով, որ Հայաստանի լիակատար բռնազավթումը հնարավոր է միայն երկրամասի էթնիկական դիմագիծը և նախկին վարչական համակարգը փոխելու միջոցով, թուրքական իշխանությունները գործի դրեցին երկու միջոց՝ հայ բնակչության զանգվածային կոտորածներն ու մահմեդականացումը և կայսրության տարբեր շրջաններից թուրք, թուրքալեզու և քուրդ վերաբնակիչների վերաբնակեցումը նվաճված երկրում:

Արևմտյան Հայաստանում օսմանյան վարչամեքենան մտցնելու և տեղի բնակչությանը հարկման ենթարկելու խնդրով՝ արդեն 1478 թ. Էրզրումից հյուսիս, Պոնտական լեռների հարավային ստորոտներով ձգվող Բաբերդի, Սպերի, Թորթումի և այլ գավառներ ուղարկվեց օսմանյան բանակի ամենաարյունառուշտ հրամանատարներից մեկը՝ Լալա փաշան: Նա կարճ ժամանակում ավերակների վերածեց պատմական Բարձր Հայքի և Տայքի հարյուրավոր հայկական բնակավայրեր, սրի քաշեց տասնյակ հազարավոր մարդկանց: Ավելի քան 50 հազ. հայեր, փրկվելով ֆիզիկական ոչնչացումից, նախընտրեցին մահմեդականացումը[1]: Զանգվածային կոտորածներն ու մահմեդականացման դեպքերն ավելի հաճախակի դարձան, երբ 1512 թ. սկսվեց թուրք-պարսկական երկարատև պատերազմը: "...Ասպատակեալ քանդէին և աւերէին առհասարակ..., -գրում է ականատես հեղինակը, - մինչ ի դաշտն Մշու, Խնուսու և Ալաշկերտու, Դիատնու և Խամուրայ, Բաթնոցայ և Պայազիտու երկիրս ամէն երէին ու աւերէին, զկին և զտղայս գէրի ածէին... զի այնպէս անապատ արարին այս սահրաթ երկրներս, որ Արզրումայ հետ մինչև Էրէվան միայն բերթորայքն ի շէն մնացին" [1]: Վերոհիշյալ տողերից երևում է, որ տվյալ դեպքում պատերազմական գործողությունների հետևանքով ավերակների են վերածվել Էրզրումից մինչև Երևանի խանության տարածքն ընկած գավառները՝Կարինը, Վերին և Ստորին Բասենները, Ալաշկերտը, Բայազետը, Դիադինը:

Պարսկաթուրքական հաշտության կնքումից անմիջապես հետո, 1643թ. թուրքական կառավարության հանձնարարությամբ Արևմտյան Հայաստան ուղարկվեց Զաֆար փաշան՝ "յոյժ անիրաւ և չարասէր..., ժանտաբարոյ...", որը աշխարհագիր անցկացրեց Էրզրումի նահանգում: Հարկապահանջությունն ու բռնություններն այնքան անտանելի էին, որ նահանգի հյուսիսային մի քանի գավառների քրիստոնյաներ "ի յահէն դարձան յօրէնսն Մահմէտի"[2], այսինքն՝ մահմեդականացան: Զանգվածային մեկ այլ մահմեդականացման մասին վկայում է 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի պատմաբան-աշխարհագետ Ղուկաս Ինճիճյանը. "Զանձրացեալք ի բռնութենէ և ի զրկանաց, դարձան /հայերը-Ա. Մ./ առհասարակ ի կրօնս տաճկաց" [3]: Կրոնափոխությունն ընդգրկեց դարձյալ Էրզրումի նահանգի հյուսիսային շրջանները: Բերդագրակի "բնակիչք առհասարակ էին յազգէս հայոց, - շարունակում է Ինճիճյանը, - այլ ապա ըստ մեծի մասին դարձան ի տաճկութիւն և սակաւ մնացին ի քրիստոնէից" [4]:

Քրիստոնյա բնակչության բռնի մահմեդականացումը զուգորդվում էր եկեղեցիների ոչնչացումով, ավերումով կամ մզկիթների վերածումով: 1662 թ. Վանի անունով մեծ մոլլայի և կայսրության գլխավոր վեզիրի նախաձեռնությամբ բազմաթիվ "եկեղեցի Հոռոմոց /հույներ-Ա. Մ./ և Հա-

[1] Koch K., Wanderungen im Oriente während der Jahre 1843 und 1844, Weimar, 1846, Տաշյան Հ., Հայ բնակչությունը Սև ծովեն մինչև Կարին, Վիեննա, 1921, էջ 3-20:

[1] "Մանր ժամանակագրություններ", հ. 2, էջ 565:
[2] Նույն տեղում, էջ 554:
[3] Ինճիճյան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա., Վենետիկ, 1806, էջ 93:
[4] Նույն տեղում, էջ 132:

յոց քանդեալ աւերեցին, - կարդում ենք Հ. Կարնեցու մոտ, - և զգլուխս ամենայն քրիստոնէից... սեաւ գտակ անցուցին": Եւ առին այն եկեղեցին / խոսքը Էրզրումի միջնաբերդի եկեղեցու մասին է- Ա. Մ./ արարին իւրեանց մզկիթ և եղեւ սուգ մեծ ազգիս Հայոց" [1]:

1723 թ. կազմակերպված հերթական ավերիչ արշավանքներից մեկի զոհը դարձավ Էրզրումի նահանգի հյուսիսային մեկ այլ գավառ՝ Սպերը, որտեղ մոխրակույտերի վերածվեցին ավելի քան հարյուր հայկական գյուղեր[2]: Ամեն մի այսօրինակ "միջոցառում" ուղեկցվում էր հայ բնակչության գերեվարությամբ. "Զօրքն տաճկաց գերէին ազգն հայոց և բերեալ վաճառէին, կամ բռնադատէին՝ թե ուրացիր զՔրիստոս, ոմանք հաւատն ուրացան և ոմանք, որք ոչ ուրացան, սրոյ ճարակ տային կամ վաճառէին...: Արզրումայ այնչափ գերեցին, որ մեք գրով ոչ կարացաք ճառել" [3]:

Բռնի մահմեդականացման, թուրքացման և բռնագաղթի հետ մեկտեղ օսմանցիները ձեռնարկեցին Արևմտյան Հայաստանի էթնոնկարագիրը խաթարող մեկ այլ "միջոցառում": 16-րդ դարի սկզբներից միաժամանակ Սեֆյան Իրանի դեմ ռազմաքաղաքական բուֆեր՝ պատնեշ ստեղծելու նպատակով թուրքական սուլթաններն սկսեցին կայսրության հարավային և հարավ-արևելյան շրջաններից խրախուսել քրդերի ներհոսքը Հայկական լեռնաշխարհ: Արդեն պարսկաթուրքական պատերազմի սկզբում՝ 1515 թ. քուրդ ցեղապետերից մեկի՝ Էդրիսի օժանդակությամբ սուլթան Սելիմ Ահեղը իրեն ենթարկեց Դիարբեքիրի և նրանից հարավ տարածված քոչվոր քրդերին: Ի փոխհատուցումն իր ծառայության, Էդրիսը ստացավ այդ շրջանների կառավարման իրավունքը և քոչվորական կյանքով ապրող իր հայրենակիցներին հարկադրեց տեղափոխվել Էրզրումի նահանգի տարածքը[1]: Քրդական մեկ այլ վերաբնակեցում կազմակերպեց սուլթան Մուրադը 1635 թ.: Ընդառաջելով գաղթել ցանկացող քրդական ցեղերի ցանկությանը՝ նա կազմակերպեց զանգվածային մի մեծ ներհոսք դեպի Էրզրումի նահանգի Երզնկայի և Դերջանի գավառները: Խոսելով Դերջանում քրդերի հայտնվելու մասին, որը ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել 18-րդ դարի ընթացքում, հայ հեղինակները վկայում են, որ "Քուրդք բնակեալք ի սմա /Դերջան--Ա.Մ./, եկեալ ասին ի սէկմանապատայ" [2]: Նույն ժամանակ ներհոսք տեղի ունեցավ Բասենի և Ալաշկերտի գավառներ, որտեղ գերազանցապես հաստատվեցին Փեսեան ցեղի բազմաթիվ քրդեր:

Վերոհիշյալ էթնիկական գործընթացներն ուժեղացան 18-րդ դարի կեսերին: Եթե սկզբնական շրջանում քրդերը հյուսիս էին տեղափոխվում միայն ամառվա ամիսներին ալպիական մարգագետիններում իրենց բազմաքանակ ոչխարները արածեցնելու նպատակով, ապա այժմ նրանք անցան մշտական բնակության՝ տեղավորվելով հայկական գյուղերում: Հայ բնակչությունը պարտավոր էր ամբողջ ձմեռ պահել ոչ միայն քրդերին, այլև նրանց բազմաքանակ անասուններին: Քրդերին սուլթանների արտոնած այս արատավոր համակարգը հայտնի էր "ղշլաղություն" անունով: Այս քաղաքականության հետևանքով ավելի ստվարացավ քրդերի թիվը հատկապես Բյուրակնյան /Բինգյոլի/ լեռներին հարող գավառներում:

Քրդերի բնակեցումն ուղեկցվում էր միջցեղային բախումներով: Միայն 1762 թ. Խնուսի և Մանազկերտի կիսանկախ քրդական հովտապետությունների՝ դերեբեյությունների բախումների հետևանքով տուժեց Խնուսի գավառի 250 հայկական գյուղ[3]: Ստեղծված նմանօրինակ անտանելի իրավիճակը ծնում էր հայ բնակչության այնպիսի զանգվածային արտագաղթեր, որ դրանք աննկատ չէին մնում ան-

[1] Նույն տեղում, էջ 567: Հայրենասեր պատմիչը մեկ այլ տեղ ցավով արձանագրում է. "Կարինի բազում եկեղեցիք, զորն երեւին և զորն արարեալ են մզկիթ և զորն քակեալ կան: ... Եկեղեցիք բազումք, որ այժմ ի ձեռս Տաճկաց անկեալ կան, զորն արարին ամբարայնոցք և զորն քակեալ և քայքայեալ են, այժմոյս չեն երեւիլ": / Նույն տեղում, էջ 563-564/:
[2] Ատրպետ, Մորոխի ավազանը, Եր. 1934, էջ 110:
[3] Մատենադարան, ձեռագիր թիվ 6332, էջ 552:

[1] Троттер, Мало-Азийские курды, Известия Кавказского отдела, т.VII . Тифлис, 1873, с.1-3.
[2] Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 97:
[3] Նույն տեղում, էջ 81 և Մելիքյան Ե., Վիճակագիր Խնուս /Հարք/ գավառի, Նյու-Յորք, 1943, էջ 8:

գամ սուլթանական պատերազմների պատմությունը գովերգող ժամանակի թուրք հեղինակների ուշադրությունից: 18-րդ դարի վերջի հեղինակ Ջևդեթը գրում էր. "Բռնությունների ու անիրավությունների ամեն սահմանն անցել էր, և օսմանյան կայսրության երկրում ռայաները /հպատակ ժողովուրդները--Ա.Մ./ մեծ թշվառության էին ենթարկվել, իրենց երկիրն ու հայրենիքը թողնելով, ցիրուցան եղել" [1]:

Սակայն, հանձինս քրդերի, Իրանի դեմ ամուր անջրպետ ստեղծելու օսմանյան քաղաքականությունն անհաջողության մատնվեց: Քրդական ցեղապետությունները ոչ միայն չդարձան իշխանությունների հլու կամակատարներ, այլև, օգտվելով փաստական անկախությունից, ավելի խորացրին օսմանյան կայսրության ընդհանուր ճգնաժամը:

Ինչևէ, 15-18-րդ դդ. բռնի մահմեդականացման, հարկադիր արտագաղթերի, թուրքերի ու քրդերի միտումնավոր բնակեցման հետևանքով Արևմտյան Հայաստանում, այդ թվում Էրզրումի նահանգում, որոշակիորեն աճեց մահմեդական բնակչության թիվը: Երբեմնի էթնիկապես միատարր երկրամասում ծնվեցին նոր էթնոխմբեր՝ թուրքերը և քրդերը: Վերջիններից բացի Էրզրումի նահանգի հյուսիսային մի քանի գավառներում հանդես եկան նաև նոր էթնոկրոնական համայնքներ: Մահմեդականացած հայության մի զգալի մասը, իշխանությունների սպառնալիքների տակ միայն առերես էր դավանում մահմեդականությունը: Աղբյուրների վկայությամբ նրանք ցերեկով մահմեդականներ էին, իսկ գիշերը նորից դառնում էին քրիստոնյաներ՝ գաղտնի հաճախում եկեղեցիներ, կատարում քրիստոնեական ծիսակատարություններ: Այդօրինակ բնակչությունը հայտնի էր "կեսկեսներ" անունով, այսինքն՝ կես հայ-քրիստոնյա և կես թուրք-մահմեդական: Կեսկեսների մի մասն էլ, որ հաճախ ներկայանում էր իշխանությունների հովանավորություններից օգտվող ռազմատենչ լազեր, հայտնի էր

[1] "Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին" կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հ. Ա, Ե. 1961, էջ 277:

"հայ-լազ" անունով[1]: Կեսկեսների զգալի մասը բնակեցնում էր բռնի մահմեդականացման կնիքը առավել չափերով կրած Թորթումի և Սպերի գավառները[2]:

19-րդ դարի սկզբին Էրզրումի նահանգն իր 16 գավառներով, ըստ նրանում ապրող էթնիկական խմբերի թվական փոխհարաբերակցության բաժանվում էր հետևյալ շրջանների.

ա/ Կենտրոնական և հյուսիսային գավառներ, որոնք գերազանցապես ունեին հայ-թուրքական բնակչություն /Էրզրում, Բաբերդ, Կելկիթ, Շաբին Կարահիսար, Սպեր, Թորթում, Վերին Բասեն/:

բ/ Արևմտյան գավառներ, որտեղ հայերից ու թուրքերից բացի բնակվում էին նաև քրդեր /Դերջան, Երզնկա/:

գ/ Հարավային գավառներ, որոնք ունեին առավելապես հայ-քրդական բնակչություն /Քղի, Խնուս, Ալաշկերտ, Խամուր, Դիադին, Բայազետ/[3]:

Դժվար չէ կռահել, որ 16–18-րդ դարերում ինչպես Արևմտյան Հայաստանը, այնպես էլ նրա խոշոր հատվածը կազմող Էրզրումի էյալեթը այլևս չէին ներկայանում որպես հայկական էթնոմիատարր երկրամասեր, թեև 19-րդ դարի սկզբին, տվյալ դեպքում՝ Էրզրումի նահանգի բոլոր գավառներում /բացի Կելկիթի և Շաբին Կարահիսարի մի քանի նահիեների, Երզնկայի Կամախ գավառակի, Ալաշկերտի Խալի Ցազի և Մրկեզար լեռնային համայնքների/ հայ բնակչությունը թվապես գերազանցում էր եկվոր էթնոտարրերին: Բավական է նշել, որ այդ ժամանակ նահանգի տարածքում հաշվվում էր 978 հայկական գյուղ և 14 քաղաք[4], որոնցում ապրում էին ավելի քան 400 հազ. հայեր, որից գյուղական բնակչությունը կազմում էր 308 հազ., քաղաքայինը՝ 93 հազ. մարդ[5]: Այդուհանդերձ, էթնոժողովրդագրական ոչ հայանպաստ գործընթացները այսուհետ ոչ միայն չդադա-

[1] Հայ-լազերի և ընդհանրապես կեսկեսների մասին մանրամասն տես Մելքոնյան Ա., Էրզրում... էջ22.57-68.78-80.82-84.155-156 և այլն:
[2] Տաշյան Հ., նշվ. աշխ. էջ 47-48, Սարգսյան Լ., Այց թուրքաց Հայաստանին, Մուրճ, 1889, դեկտեմբեր, էջ 123-124:
[3] Մելքոնյան Ա., Էրզրում..., էջ 43-102, 155-157:
[4] Նույն տեղում, էջ 113-114, 160-165:
[5] Նույն տեղում, էջ 115-117:

ռեցին, այլև ավելի խորացան: Դարասկզբին Օսմանյան կայսրությունում Բայրաքդար փաշայի, սուլթան Մահմուդ Երկրորդի և այլոց կարծեցյալ եվրոպական լուսավորյալ աբսոլյուտիզմի սկզբունքներով իրականացված բարեփոխումներից [1] հետո էլ թուրքական տերությունը շարունակեց մնալ ասիական ռազմաավատատիրական դասական բռնատիրություններից մեկը, որտեղ ընթացող էթնոգործընթացների գլխավոր բովանդակությունն ու ուղղությունը կազմեց նվաճված երկրամասերում, առաջին հերթին Արևմտյան Հայաստանում տեղաբնիկ էթնիկ տարրերին ձուլելու, արտաքսելու, երկրիը նոր ցեղախմբերով բնակեցնելու միտումը: Փաստորեն մինչև 19-րդ դարը, այսինքն Արևելքում Ռուսական կայսրության քաղաքականության գործնական ակտիվացումը, Արևմտյան Հայաստանում էթնիկական եղեռնը բավականաչափ արագ առաջ էր ընթացել և հայ–մահմեդական հակամարտությունն, անկասկած, նկատելի էր: Այնպես որ անհամոզիչ են բոլոր այն քաղաքագետների փաստարկները, թե իբր մինչև Անդրկովկաս ռուսների ներթափանցումը, հայ բնակչությունը Օսմանյան կայսրությունում ապրում էր բարեկեցիկ կյանքով և նրա թվաքանակը անշեղորեն աճում էր: Այդ տեսակետից կարևոր ենք համարում ընդգծել, որ Արևմտյան Հայաստանը իր բնակչության ազգային կազմով խայտաբղետ դարձավ ավելի վաղ՝ թուրքական տիրապետության հաստատման հետ զուգընթաց, ուղղակի այլ հարց է, որ 19-րդ դարասկզբից Հայաստանի համար Ռուսական կայսրության մղած պատերազմները, կամա թե ակամա, ավելի խորացրին արդեն առկա հայակուլ էթնիկական գործընթացները, հայ-թուրքական կնճիռը, մասնավորապես 1878 թ. ի վեր:

19-րդ դարում Արևմտյան Հայաստանի էթնոժողովրդագրական տեղաշարժերն ունեին մի քանի քաղաքական շարժառիթներ: Ինչպես նախորդ ժամանակաշրջանում, այնպես էլ այժմ շարունակվեցին քրդական ու թուրքական տարրերի ներթափանցումները երկրամաս, որոնք, միաժամանակ ավելի խորացնելով տիրող քաղաքական անարխիկ վիճակը, հայ բնակչության հարկադիր արտագաղթերի պատճառներ հանդիսացան: Մասնավորապես 1807-1809 թթ. քրդական միջցեղային բախումների ընթացքում տուժեց Դերջանի գավառը: Պատահական չէ, որ արդեն 1809 թ. քրդերի ավերիչ ասպատակություններից հետո այս գավառը ականատես Ջեյմս Մորիերին ներկայացնում է իբրև ավերված և անմարդաբնակ շրջան[1]: Համանման վիճակ էր նաև Խնուսի ու Քըղիի գավառներում: 1812 թ. քրդերը ավերածություններ կազմակերպեցին Բայազետի հայկական գյուղերում [2]:

1820-1823 թթ. պարսկաթուրքական պատերազմը բուռն էթնիկական տեղաշարժեր բերեց Էրզրումի նահանգի արևելյան գավառներում: Պարսկական զորքերը ներխուժեցին Ալաշկերտի, Բայազետի, Դիադինի, Խամուրի, Խնուսի գավառներ և այնտեղից հազարավոր հայ ընտանիքների բռնագաղթեցրին Պարսկաստան[3]: Տուժեցին նաև Էրզրումի ու Բասենի գավառները[4]: Միայն Ալաշկերտի ու Բայազետի շրջաններից բռնագաղթած հայերի թիվը կազմեց 4 հազ. ընտանիք[5]:

Հայ բնակչությունը ֆիզիկական բնաջնջումից, կողոպուտից խուսափելու նպատակով գործի էր դնում պայքարի երկու միջոց.

ա/ ակտիվ, երբ զենքը ձեռքին դիմակայում էր թուրքական իշխանությունների և նրանց թողտվությունից օգտվող նորեկ թուրքերի և քրդական ավազակային ջոկատների մշտական ոտնձգություններին /Գուզուջանի նահիե, Խնու-

[1] Տես Миллер А. Ф., Мустафа паша Байрактар, М.-Л., 1947, Боджолян М. Т., Реформы 20-30-х гг. XIX века в Османской империи, Ер.,1984.

[1] Տես Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ.Զ, Եր. 1934, էջ 291-292: Տես նաև Аверьянов П. И., Курды в войнах России с Персией и Турцией, Тифлис, 1900, с.71.

[2] Սերովբե Կարնեցի, Ուղեգրություն Բաղդադից Էջմիածին, Եր. 1968, էջ 155-156:

[3] 1820-1823 թթ. բնակչության տեղաշարժերի մասին մանրամասն տես Մելքոնյան Ա., Ազգաբնակչության տեղաշարժերը Էրզրումի նահանգի Բայազետ, Դիադին, Խամուր և Ալաշկերտ գավառներում 19-րդ դ. առաջին երեսնամյակին, Լրաբեր հաս. գիտությունների, 1988, թիվ 5, էջ 13-24:

[4] Մատենադարան, Կարապետ արքեպիսկոպոսի արխիվ, թղթ. 163ա, վավ. 402, թ. 1-2:

[5] "Արարատ" 28 փետրվարի 1889, էջ 109:

սի, Վերին Բասենի, Բայազետի, Դիադինի, Ալաշկերտի և այլ գավառներ/,

բ/ պասիվ, երբ թողնում էր իր բնակատեղիները և արտագաղթում: Հետազոտությունները ցույց են տալիս, որ անգամ այս պայմաններում 19-րդ դարի սկզբին Էրզրումի նահանգում հայ բնակչությունը կազմում էր բացարձակ մեծամասնություն: Այն ժամանակ նահանգի 16 գավառներում հաշվվում էր մոտ հազար հայկական բնակավայր, որից 14-ը քաղաք կամ քաղաքատիպ ավան, իսկ մնացածը՝ գյուղ[1]:

1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը թուրքական լծից ազատագրվելու հույսեր արթնացրեց արևմտահայության շրջանում, որի օժանդակությամբ ռուսական զորքերը գրավեցին Արևմտյան Հայաստանի, այդ թվում Էրզրումի նահանգի կենտրոնական և արևելյան մի շարք գավառներ: Սակայն եվրոպական տերությունների ճնշման տակ 1829 թ. սեպտեմբերին Թուրքիայի հետ Ռուսաստանի կնքած հաշտության պայմանագրով նվաճված շրջանները թուրքերին թողնելու լուրը մեծ հուսահատություն առաջացրեց հայության շրջանում: Չկամենալով մնալ օսմանյան տիրապետության տակ՝ 75 հազ. արևմտահայեր, որոնք գլխավորապես Էրզրումի նահանգի բնակիչներ էին, նախընտրեցին արտագաղթը և հաստատվեցին Անդրկովկասից Ռուսաստանին անցած մարզերում: Թեև Էրզրումի գավառներից գաղթած հայերի թիվը կազմում էր մոտավորապես 9.6 հազ. ընտանիք, և նահանգի էթնիկական կազմը զգալիորեն այդ գաղթից հետո փոխվեց, սակայն այդ վարչամիավորը կրկին մնաց հայաճոռ երկրամասերից մեկը:

Արդեն 1830-1831 թթ. սկսվեց մի նոր գործընթաց, որը ամբողջ 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին տասնամյակներին դարձավ Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական զարգացման գլխավոր ուղղությունը: Պատմական Հայաստանի տարբեր, հիմնականում՝ արևմտյան և հյուսիսային գավառներից հայ բանակչությունն սկսեց հոսել դեպի Ռուսաստանի նորահաստատ սահմաններին մոտ ընկած գավառները, մասնավորապես՝ Բասեն, Ալաշկերտ, Նահին, Բայազետ: Բանն այն է, որ Ռուսաստանին հարակից արևմտահայ գավառներում ազգային ու սոցիալական ճնշումները համեմատաբար թույլ էին և պետական սահմանն անցնելու հնարավորությունն ավելի մեծ էր[1], որի համար բնակչության հոսունությունն արևմուտքից արևելք ձեռք էր բերում քաղաքական երանգ: Անգամ 1829-1830 թթ. գաղթի ամենաթեժ օրերին Հայաստանի մի քանի գավառներից առաջին գաղթականները տեղափոխվեցին դեպի արևելք ու հարավ-արևելք և բնակություն հաստատեցին գաղթածների գյուղերում[2]:

1829-1830 թթ. մեծ գաղթից հետո ամայացած կամ նոսրացած գյուղերը թվում էր այլևս չեն վերականգնվի, սակայն արդեն 1830-ական թվականներից նկատվեց այլ բնակավայրերի վերաշինման միտում: Այդ երևույթը թերևս նկատելի էր նաև ժամանակակիցների շրջանում: Այդ օրերին Արևմտյան Հայաստանում բողոքական քարոզչությամբ զբաղվող Է. Սմիթը, որ 1830 թ. մտավախություն էր հայտնում, որ երկրամասի դատարկվելու պատճառով իր քարոզչությունը կարող է մնալ անարդյունք, արդեն 1831 թ. ապրիլին, երբ Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից ժամանած հայ վերաբնակիչները և Անդրկովկաս գաղթածներից նորից հայրենիք վերադարձածները[3] կենդանացնում էին կիսադատարկ հայկական գյուղերը, ոգևորված գրում էր. "Մենք չենք կասկածում, որ հայ բնակչությունը նորից կհավաքվի այստեղ և /այն–Ա.Մ./ կարող է դառնալ քարոզչական գործունեության համար կարևոր կենտրոն"[4]:

---

[1] Մելքոնյան Ա., Էրզրում..., էջ 114-117, 149, 158:

[1] Մատենադարան, Զանազան հեղինակների արխ., թղթ. 54, վ. 13², թ.23բ:

[2] Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1902, էջ 492:

[3] 1830-ական թթ. հազարավոր գաղթականներ, որոնք կյանքի բարվոք պայմաններ գտնելու ակնկալությամբ գաղթել էին Անդրկովկաս, հուսալքված իրենց չտրված ռուսական իշխանությունների խոստացած չնչին արտոնություններից, կրկին վերադարձան Արևմտյան Հայաստան /Մատենադարան, Կարապետ արք. արխ., թղթ. 163գ, վ. 1216, թ. 1, վ. 1223, թ. 1, Վրաստանի կենտրոնական պետական պատմության արխիվ, ֆ.11, գ.418, վ.713, թ.1, ֆ.2, գ.1, վվ.3396.4587.4619:

[4] Smith E., Researches of the rev. E. Smith and rev. H.G.O. Dwigth in Armenia, հ.2, էջ 306:

Ինչևիցե, թեև 1830 թ. արտագաղթից հետո նկատվեց Արևմտյան Հայաստանի արևմտյան շրջաններից դեպի արևելք հայ բնակչության հաշվին դատարկված բնակավայրերի վերաշինման որոշ միտում, սակայն ընդհանուր առմամբ, այդուհետ ինչպես ամբողջ Արևմտա–Հայաստանը, այնպես էլ Էրզրումի նահանգը ավելի ու ավելի էին ձեռք բերում խայտաբղետ էթնիկական պատկեր, որում հայերի տեսակարար կշիռը հետզհետե պակասում էր:

1830-50-ական թթ. Օսմանյան կայսրությունում խորացող ընդհանուր ճգնաժամը կանխելու նպատակով թուրքական կառավարության անցկացրած ռեֆորմները[1] շոշափելի արդյունքներ չտվեցին: Այդ ժամանակահատվածում, թերևս որոշակի դրական տեղաշարժ նկատվեց միայն կիսանկախ քրդական իշխանությունների վերացման ուղղությամբ: Սուլթանական բանակին ծանր գնով հաջողվեց հպատակեցնել հիմնականում կայսրության արևելյան շրջաններում, այն է՝ Արևմտյան Հայաստանում գոյություն ունեցող բազմաթիվ քրդական ցեղապետությունները, որոնք իսկապես պատուհաս էին դարձել տեղի հայ բնակչության համար: Քրդերի հպատակեցման գործողություններում, ցավոք, մեծապես տուժեց գավառահայությունը. ավերվեցին բազմաթիվ հայկական գյուղեր, տեղի ունեցան միգրացիոն նոր տեղաշարժեր:

Արևմտյան Հայաստանում հայակուլ էթնիկական գործընթացները խորացան 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին: 1853-1856 թթ. Ղրիմի պատերազմից հետո ռուսների կողմից գրավված Էրզրումի նահանգի արևելյան գավառները և Կարսը նորից թուրքերին վերադարձնելու լուրը նոր արտագաղթի պատճառ դարձավ արևմտահայության համար: Բազմահազար էրզրումցիներ, կարսեցիներ, ալաշկերտցիներ, բայազետցիներ արտագաղթեցին Անդրկովկասից Ռուսաստանին անցած շրջաններ[2]: Նրանց մի մասը հաստատվեց Թալինի գյուղերում, Սև ծովի ա-

[1] Боджолян М. Т. Реформы 20-30- х г.г. XIX века в Османской империи,Ер.,1984.
[2] Акты Кавказской Археографической комиссии, т. XII,с.313.

ռափնյա շրջաններում, Հյուսիսային Կովկասում և այլուր: Միայն 4 հազ. ընտանիք տեղավորվեց այժմյան Ստավրոպոլի երկրամասի տարածքում[1]: Նույն ժամանակ Կովկասից մեծ թվով լեռնականներ, հատկապես նրանց առաջնորդ Շամիլի հպատակեցումից հետո, անցնում են Արևմտյան Հայաստան՝ զբաղեցնելով լքված հայկական բնակավայրերը: Թուրքական կառավարության գործուն ջանքերով լեռնականների /նրանք հայտնի էին լեզգիներ կամ չերքեզներ հավաքական անունով/ մեծ մասը ռազմաքաղաքական նկատառումներով բնակեցվեց Ռուսաստանին սահմանակից Էրզրումի նահանգի արևելյան գավառներում, մասնավորապես Բասենում[2]:

Էթնիկական դիմախեղմանը զուգընթաց Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի 60-70-ական թթ. շարունակվեցին վարչական վերափոխումները: 1865 թվականից նախկին Էրզրումի նահանգի հիմքի վրա սկսեց ձևավորվել Էրմենիստան ընդարձակ վիլայեթը, որի մեջ մինչև 1870-ական թթ. վերջը ընդգրկվեց Արևմտյան Հայաստանի մեծագույն մասը[3]: Այս վերաձևումները, որոնք ընդգրկել էին նաև Բալկանները, նպատակ ունեին կրճատել ուռճացած վարչական ապարատը և մեծ տերություններին կայսրության ներքին գործերին միջամտելու հնարավորությունից զրկելու նպատակով ցույց տալ, թե իբր թուրքահպատակ ժողովուրդների իրավունքները հարգելու միտումով վերականգնվում են նրանց երբեմնի պետական կազմավորումների զբաղեցրած վարչատարածքների սահմանները: Երբ 1880-ական թթ. թուրքական տնտեսության մեջ և քաղաքական կյանքում նկատվեց որոշ կայունացում, այդ խոշոր վարչամիավորները, այդ թվում Էրմենիստան վիլայեթը վերացվեցին՝ իրենց տեղը կրկին զիջելով նախկին վիլայեթներին:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Բեռլինի կոնգրեսում Ռուսաստանը նորից ստիպված եղավ

[1] Նույն տեղում, հ. XII, էջ 1389
[2] Մպյուենադարան, Զանազան հեղինակների արխ., թղթ. 54, վ. 13[1,2,3,4]:
[3] Ռուսական արտաքին քաղաքականության արխիվ, Քաղարխիվ, գ. 9468, թ. 1-14:

Թուրքիային վերադարձնել Արևմտյան Հայաստանում գրաված Ալաշկերտի, Բայազետի գավառները, Բասենը, Կարինը և այլ շրջաններ: Արևմտահայությունը, որը իր նպաստն էր բերել նաև ռուս-թուրքական այս պատերազմում ռուսական զենքի հաջողությանը, նորից մնում էր օսմանյան վրեժխնդրության իրական վտանգի առջև: Այս անգամ ռուսական իշխանությունները շահագրգռվածություն հանդես չբերեցին դեպի ռուսական սահմանները արտագաղթելու բազմահազար արևմտահայերի ցանկությանն ընդառաջելու հարցում: Ցարիզմն արդեն հրաժարվել էր արևմտահայ գաղթականներին Արևելյան Հայաստանում բնակեցնելու քաղաքականությունից: Ուստի ջանք չխնայվեց նոր գաղթը կանխելու գործում: Այնուհանդերձ, բազմաթիվ գաղթականներ, հաղթահարելով ցարական իշխանությունների հարուցած այդ արգելքները, ինչպես պատերազմի ընթացքում, այնպես էլ նրա ավարտից հետո անցան Արևելյան Հայաստան: Մեծ թվով նորաբնակ գաղթականներ, որոնց զգալի մասը Էրզրումի նահանգի բնակիչներ էին, հանգրվանեցին Ռուսաստանին միացված Կարսի նորաստեղծ մարզում:

19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի սկզբին, երբ միջազգային ասպարեզ էր հանվել թուրքերի համար անցանկալի Հայկական հարցը, սուլթան Համիդ II-ի արյունալի ռեժիմի պայմաններում պետականորեն իրականացված վարչաժողովրդագրական նոր ձեռնարկումների /առանց էթնիկական սկզբունքը հաշվի առնելու վարչական վերաբաժանումներ, 1890-ական թթ. զանգվածային ջարդեր ու ասիմիլիացիա, արտագաղթեր, պանդխտություն, թուրք, թուրքալեզու և քուրդ բնակչության, կովկասյան լեռնականների ներգաղթի խրախուսում և այլն/ արդյունքում բազմաթիվ վարչական միավորներ, որոնք նախկինում աչքի էին ընկնում իրենց միատարր էթնոկազմով, դարձան ազգային խճանկարով խայտաբղետ երկրամասեր: Նրանցից շատերում մահմեդական ընդհանուր բնակչությունը նույնիսկ գերազանցեց հայության թվաքանակը: Այդ տեսակետից տիպական է Էրզրումի նահանգի օրինակը: Այն սխալ տեսակետը, ըստ որի մինչև I համաշխարհային պատերազմը Ա-

ռևմտյան Հայաստանում հայության թվաքանակը իբր աճել է, հերքելու համար դիմենք փաստերի օգնությանը: Վկայակոչենք Էրզրումի նահանգի 13 ներքոհիշյալ գավառների հայ ազգաբնակչության և հայկական բնակավայրերի թվաքանակին վերաբերող երկու աղյուսակ, որոնք համապատասխանաբար վերաբերում են մոտավորապես 1809 ու 1909 թվականներին և պատկերացում են տալիս նահանգի դեմոգրաֆիկ շարժի մասին մեկ դարի ընթացքում[1].

Գավառի անվանումը	Բնակավայրերի թիվը 1809թ.	Բնակավայրերի թիվը 1909թ.	Հայ բնակչության թիվը (շնչերով) 1809թ.	Հայ բնակչության թիվը (շնչերով) 1909թ.
1. Էրզրում	129	52	67960	34376
2. Դերջան	57	31	32920	9128
3. Բաբերդ	79	30	30960	14314
4.Երզնկա /Կամախի, Գուրուչայի, Կերճանիսի հետ/	124	52	44760	25095
5.Քըղի /Կեղի/	75	50	25440	18705
6.Սպեր	81	18	28300	3122
7.Թորթում	53	13	16960	2829
8.Բասեն /Վերին և Ստորին Բասեններ/	87	57	35130	12404
9.Խնուս	59	33	20960	15295
10.Ալաշկերտ /Կարաքիլիսայի հետ/	88	22	28160	10248
11.Խամուր և Դութաղ	23[2]	22	7360	1421
12. Դիադին	36	7	11520	1092
13. Բայազետ	40	4	30800	3920
Ընդամենը	931	391	381230	151949

[1] Աղյուսակի տվյալները տես Մելքոնյան Ա., Նշվ.աշխ., էջ 113-117.158 և Ա.-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Եր. 1912, էջ 226:

[2] Այստեղ Դութաղի գյուղերը չեն հաշվարկված:

Վերը բերված աղյուսակից դժվար չէ նկատել այն աղետալի դեմոգրաֆիկ վիճակը, որ հայության համար ստեղծվեց Էրզրումի նահանգում մեկ դարի ընթացքում: Այդ ժամանակահատվածում հայկական բնակավայրերի թիվը կրճատվել էր 58%-ով, իսկ հայ բնակչությունը՝ 60%-ով: Հատկանշական է, որ առավելապես տուժել էին նահանգի Ռուսաստանին սահմանակից գավառները՝ Բայազետը, Ալաշկերտը, Բասենը, Սպերը, Էրզրումը, որտեղ համիդեական կոտորածներն ավելի զանգվածային բնույթ էին կրել և տեղի էին ունեցել խոշոր արտագաղթեր դեպի Արևելյան Հայաստան և Անդրկովկասի այլ շրջաններ[1]: Սպերի, Թորթումի, Բաբերդի գավառների հայաթափման գլխավոր պատճառներից էր նաև կիսամահմեդականացած հայության՝ կեսկեսների հետագա թուրքացումը, որը, պետք է ենթադրել, տեղի է ունեցել գլխավորապես 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին՝ համիդեական կոտորածների շրջանում:

Այսպիսով, մինչև 1915 թ. Հայոց մեծ եղեռնը, մի քանի հարյուր տարի անընդհատ, մերթ դանդաղ, մերթ բուռն տեմպերով էթնիկական ցեղասպանության գործընթացն Արևմտյան Հայաստանում արդեն տեղի էր ունեցել, հանգամանք, որը օբյեկտիվորեն պայմանավորում էր թուրքական տիրապետության դեմ հայ ազգային–ազատագրական պայքարի անհաջողությունները: Կարծում ենք, որ 16–19-րդ դդ. ընթացքում Արևմտա–Հայաստանում տեղի ունեցած հայաթափման երևույթները, որոնք անուշադրության են մատնվել հայոց գենոցիդի հարցերով զբաղվող շատ մասնագետների կողմից, նվազ կարևոր չեն իբրև ցեղասպանության դրսևորումներ Օսմանյան կայսրությունում, առավել ևս, որ Միավորված Ազգերի Կազմակերպության 1948 թ. ընդունած բանաձևով ցեղասպանություն է համարվում ոչ միայն մեկ ազգի, կրոնական համայնքի կամ ռասայի դեմ ուղղված ֆիզիկական բնաջնջման գործողությունը, այլև հայրենիքից վտարելու, բռնությամբ ազգափոխելու, կրոնափոխելու, իր հայրենի հողում կյանքի անտանելի պայմաններ պարտադրելու ճանապարհով հեռացնելու երևույթները, այսինքն այն, ինչ տեղի էր ունեցել Թուրքիայում դարեր շարունակ:

[1] 1.19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբի արտագաղթի մասին մանրամասն տես Մատենադարան, Մկրտիչ Խրիմյանի արխիվ, թղթ. 101, վավ. 1, 137.248, թղթ. 102, վավ. 639, թղթ.103, վավ.429:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԲԴՈՒԼՀԱՄԻԴՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը երևան հանեց Օսմանյան պետության հիմքերի խարխլուությունն ու փտածությունը, ցույց տվեց, որ այն կանգնած է փլուզման եզրին: Նոր գահ բարձրացած սուլթանի՝ Աբդուլ Համիդ II-ի /1842-1918 թթ./ առաջ ծառացել էր կայսրությունը վերջնական կործանումից փրկելու հրամայական խնդիրը: Կառավարումը սկսելով սահմանադրության հռչակումով՝ նորընծա սուլթանը, սակայն, շատ շուտ հրաժարվեց բարենորոգումների /թեկուզ ձևական/ բոլոր փորձերից և հաշվեհարդար տեսնելով համեմատաբար առաջադեմ Միդթհատյան ընդդիմադիր ուժերի հետ, երկիրը տարավ բոլորովին այլ ճանապարհով: Ինչպես Աբդուլ Համիդը, այնպես էլ նրա հետնորդները, լավ էին հասկանում, որ պետության ճգնաժամի, քայքայման պատճառների անկյունաքարը, նրա աքիլլեսյան գարշապարը եղել և շարունակում է մնալ ազգային հարցը: Օսմանյան կայսրությունը ամենից առաջ քրիստոնյա ժողովուրդների մեծ բանտ էր, ուր նրանք ապրելով իսկական ստրկական պայմաններում, դատապարտված էին դանդաղ մահացման, միշտ ենթակա ջարդերի և մուսուլմանական մոլեռանդության այլևայլ դրսևորումների : Երկրում փաստորեն բացահայտորեն կիրառվում

էին Ղուրանի՝ "անհավատների" դեմ պատերազմելու, նրանց ոչնչացնելու հայտնի սկզբունքները[1] : Ընդ որում աչքաթող էին արվում գրքի առավել մեղմ հատվածները, և այդպիսով արհեստականորեն գրգռվում էր մահմեդականների վայրագությունը: Ինչպես ժամանակին դիպուկ կերպով նկատել էր Ֆր. Դ. Գրինը. "Երկրի հին, միլիոնավոր բնակիչները՝ հույները, հայերը, նեստորականները, հակոբականները, հրեաներն ու սիրիացիները, օտարական են համարվում: Իրենց իրավական դրությամբ, նրանք ռազմագերիներ են համապատասխան իրավունքներով և պարտականություններով" [2]: Իսկ նրանց միակ "իրավունքը", ինչ խոսք որ, սուլթանին հնազանդվելն էր: Միաժամանակ նույն բնակչությունն էր, որ դարեր ի վեր կազմում էր կայսրության հարստության աղբյուրը, նրա շտեմարանը: Գիտությունն ու արվեստը, արհեստները, գյուղատնտեսությունը, առևտուրը գտնվում էին նրանց և հրեաների ձեռքին: Եվ սուլթանները, և թուրքական վերնախավը բնական է, որ նման պայմաններում շահագրգռված չէին քրիստոնյաների լիակատար բնաջնջման մեջ և հասկանում էին, թե ինչ վնասներ կկրեն իրենք այդ դեպքում: 1821 թվականին բռնկված հունական ապստամբությունը եկավ արմատապես փոխելու իրավիճակը: Դարի վերջին քառորդին դրությունն է՛լ ավելի բարդացավ: Կայսրության դարավոր "քրիստոնեական խոցը" պայթեց և բալկանյան ժողովուրդների ճնշող մեծամասնությունը թոթափեց սուլթանական լուծը: Արևելքում սուլթանների համար չար ուրվականի նման հառնեց կառավարման լիբանանյան համակարգը: Ազգային հարցը պետության մեջ դարձավ այն վճռական խնդիրը, որի հետ էր կապվում արևելյան բռնապետության բախտը: Նշմարվում էին և դրա լուծման երկու ուղիները:

Ցանկացած ուրիշ, քիչ թե շատ քաղաքակրթված երկիր, կփորձեր այս ծանր կացությունից դուրս գալ վերափոխում-

[1] Ղուրան, 2 (189), 4 (76), 5 (39,56), 8 (36,37,40,42,61,62), 9 (5, 29, 40-36, 39, 41, 124) եւ այլն, Վառնա, 1910:

[2] Տե՛ս Положение Армян в Турции до вмешательства держав в 1895 г., Москва, 1896, стр. 281.

ների, իրավական պետություն ստեղծելու միջոցով: Ինչպես նշվեց, Աբդուլ Համիդի համար նման ճանապարհն անընդունելի էր: Սուլթանական պետության բնույթն իսկ բացառում էր բարենորոգումների, չնչին ազատությունների հնարավորությունը:

Աբդուլ Համիդն իր երկարատև կառավարման ընթացքում գնաց այլ ուղիով և, ջանադրաբար վերլուծելով Ֆուադ փաշայի և նրա հաջորդների դեռևս 1860-ական թվականներից իրականացվող քաղաքականության արդյունքները, ի վերջո կարողացավ գտնել "հիվանդ մարդուն"՝ Օսմանյան կայսրությունը փրկելու ելքը: Ստեղծվեց պետությունը ճգնաժամից դուրս բերելու մանրակրկիտ մշակված, գործունակ, բայց էությամբ հրեշավոր ծրագիր: Այն ընդգրկում էր գործունեության բոլոր ոլորտները, ուներ ամուր գաղափարախոսական հիմք՝ ի դեմս իսլամիզմի և օսմանիզմի հիմնարար դրույթների միախառնման: Հաշվի էին առնված երկրի տնտեսական թուլությունը, արտաքին դրությունը, սոցիալական-դասակարգային իրավիճակը, ազգային հարցը: Սուլթանը հասկանում էր, որ տնտեսապես խարխլված, բազմատարր, ներքին հակասություններից ծվատվող, դեպի անդունդ սահող պետությանը, այնուամենայնիվ հարկավոր էր մի ամուր հիմք, թեկուզ և գաղափարի ձևով, որ միավորեր այն, ինչ կոչվում էր Օսմանյան կայսրություն: Լինելով իսլամի տիրապետության երկրի ղեկավար, կառավարելով մահմեդական ամենատարբեր ժողովուրդների, ցեղերի, ցեղախմբերի՝ Համիդը նախ և առաջ պետք է դիմեր նրանց միավորող գաղափարին՝ մուսուլմանությանը: 19-րդ դարի երկրորդ կեսին ձևավորվել էր համապատասխան գաղափարախոսությունը՝ պանիսլամիզմը, որի հիմքում ընկած էր մահմեդականություն դավանող ժողովուրդների միավորման, վերազգային ու վերդասակարգային մի ընդհանրություն կազմելու ծրագիրը: Դրա հիմնական կոչը՝ "Բոլոր մահմեդականները եղբայրներ են և պետք է միավորվեն", կարող էր հզոր զենք դառնալ սուլթանի ձեռքին: Այն հնարավորություն կտար Աբդուլ Համիդին, օգտվելով մուսուլմանության "խալիֆի" իր տիտղոսից, հենվել ոչ միայն սեփական, այլև մյուս երկրների մահմեդականության աջակցության վրա: Այսպիսով, պանիսլամիզմը հիմնական գաղափարախոսական հիմք էր սուլթանի համար, նրա քաղաքական ծրագրերն իրագործելու ճանապարհին: Ընդ որում, եթե սկզբնապես պանիսլամիզմի հիմնադիր ալ-Աֆղանու մոտ այդ ուսմունքը շահագործվող և գաղութային լծի տակ ապրող մահմեդականների բողոքի արտահայտություն կարելի է դիտել, ապա Աբդուլ Համիդի կողմից այն վեր էր ածվել ծայրահեղ ռեակցիոն մի գաղափարախոսության, որն ուղղված է Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների դեմ:

Բայց հարկավոր էր և ավելի շոշափելի գաղափար՝ հայրենիքի հասկացությունը: Այստեղ ևս սուլթանը կարող էր օգտվել պատրաստի ուսմունքից: Նա վերցնում է նոր օսմանների՝ օսմանյան հայրենիքի միասնականության և հզորության վերաբերյալ հիմնարար դրույթները: Բոլոր ազգերից, այդ թվում և քրիստոնյաներից պահանջելով հավատարմություն և ստեղծագործ աշխատանք ընդհանուր հայրենիքի բարգավաճման համար՝ Աբդուլ Համիդն անտարակույս հող էր նախապատրաստում զուտ մուսուլմանական բնակչությամբ պետության համար, որտեղ պետք է ձևավորվեր ապագա հզոր ազգային միավորը՝ թուրք էթնիկական տարրի գերիշխանությամբ:

Ստեղծելով համապատասխան գաղափարախոսությունը, այն դնելով պետական քաղաքականության հիմքում՝ Աբդուլ Համիդ II-ը փաստորեն դարձավ հիմնադիրը պետական դոկտրինայի, որի էությունն անփոփոխ մնաց և ուղեցույց եղավ, թե երիտթուրքերի և թե քեմալականների համար: Իր նպատակի իրականացմանը սուլթանը ձգտում էր հասնել երկու միջոցով. առաջին՝ կայսրության տնտեսության մեջ մուսուլմանների դերի աշխուժացմամբ, ոչ քրիստոնյա, հատկապես նոր ձևավորվող թուրք բուրժուազիայի ամրապնդմամբ, երկրորդ՝ միատարր ազգաբնակչությամբ պետություն ստեղծելու միջոցով:

Հայտնի է, և այդ մասին արդեն նշվեց, որ քրիստոնյաները՝ հատկապես հայերն ու հույները, Օսմանյան կայսրության տնտեսապես առավել ակտիվ տարրն էին կազմում և նրանցից էր ստացվում պետության եկամուտների առյուծի

բաժինը: Կառավարման առաջին իսկ տարիներից Աբդուլ Համիդը հետևողականորեն փորձում էր փոխել իրավիճակը և ստեղծել հայերին ու հույներին հակակշիռ՝ մուսուլման ձեռնարկատերերի և մտավորականության նոր խավ: Դեռևս նոր օսմանները կայսրության հետամնացության ու տկարության պատճառներից մեկը թուրք բնակչության կրթական ու կուլտուրական ցածր մակարդակն էին համարում: Աբդուլ Համիդը ևս ձգտում էր իր համար հենարան ստեղծել՝ դաստիարակելով եվրոպական կրթության տեր, բայց մուսուլմանական մոլեռանդությամբ աղեցուն նոր սերունդ: Փաստորեն նրա ջանքերով էր, որ արդեն 1890-ական թվականներից սկսվում է "նոր հեղափոխություն թուրքական կյանքում"[1]: Պատահական չէր, որ թուրանիզմի և թուրքիզմի մանիֆեստը ծնվեց 1890-ական թվականներին, Հուսեին զադե Ալի բեյի "Թուրան" պոեմով, իսկ նշանաբանը 1897-ին՝ հույն-թուրքական պատերազմի շրջանում, Մեհմեդ Էմին բեյի հայտնի խոսքերով. "Ես թուրք եմ: Իմ կրոնը և ազգը ազնվացեղ են"[2]: Կասկած չի կարող լինել, որ նույն սուլթանի և ռուսական ցարի քաղաքական դաշինքի շնորհիվ էր, որ Ռուսաստանում ևս այդ ժամանակ սկսվեց թուրքական ծագում ունեցող մուսուլմանների զարթոնքի շրջան, ի դեմս Միրզա Ֆեթհ Ալի Ախունդովի և Իսմայիլ Գասպրինսկու ծավալած գործունեության[3]: Աբդուլ Համիդի առանձնահատուկ "հոգածության" ներքո էր մահմեդական երիտասարդության կրթության կազմակերպումը: Փաստորեն 1920- ական թվականներին Զիա Գեոք Ալփի արտահայտած հիմնադրույթը՝ "մտավորական ընտրանու դեպի ժողովուրդ" գնալը, նրանից ազգային մշակույթ սովորելը ևս, ըստ էության, Աբդուլ Համիդի մոլեռանդ, ռասիստ մտավորականություն դաստիարակելու գաղափարի իրականացումն էր: "Գնալ դեպի մշակույթ" կոչով Գեոք Ալփը անշուշտ հասկանում էր գնալ դեպի դարավոր բնազդները՝ բարբարոսության, մոլեռանդության և ազգային բացառիկության զգացումով ներարկվելու համար[1]: Սուլթանը փորձում էր նաև փոքր բարենորոգումների օգնությամբ տնտեսական հիմք ստեղծել ապագա միաէթնիկ պետության համար: Այս շրջանում էր, որ բացվեցին տարբեր մասնագիտացումներով կրթական հաստատություններ, ավելացան պետական գանձարան մտնող հարկային մուծումների ծավալները, կառուցվեցին բազմաթիվ գործարաններ, երկրում զարկ տրվեց ճանապարհաշինարարությանը: 1889 թ. շահագործման հանձնվեց Հայդար-փաշա–Անկարա երկաթուղագիծը[2]: Սակայն այդ դրական տեղաշարժերը չէին կարող հզորացնել երկիրը այն պարզ պատճառով, որ ստացված կապիտալները գերազանցապես ծախսվում էին բանակի վրա և օգտագործվում էին ազգային–ազատագրական շարժումները ճնշելու համար: Հատուկ հրամանով բոլոր հասարակական պաշտոններից հեռացվում էին ոչ մուսուլման պաշտոնյաները, որով հատկապես զգալի հարված էր հասցվում երկրի առաջընթացին[3]: Հատկապես խնամքով էր իրականացվում այս հրահանգը "Ասիական Թուրքիայում"[4]:

Առավել մեծ բարդությունների հետ էր կապված Աբդուլ Համիդի երկրորդ՝ միատարր ազգաբնակչությամբ Արևելյան կայսրություն ստեղծելու երազանքը: Դրա համար հարկավոր էր ամենից առաջ լուծել քրիստոնեական հարցը: Այստեղ երկընտրանք չկար, կամ այս ժողովուրդները, խմբերը, ազգությունները պետք է ձուլվեին, կամ գլխովին ոչնչացվեին ու տեղահանվեին: Սա շատ ավելի բարդ խնդիր էր, և այստեղ պետք է փնտրել ևս մեկ պատասխանն այն հարցի, թե ինչու սուլթանը անմիջապես չորդեգրեց թուրքիզմը: Անվերապահորեն հոչակելով թուրքական պե-

[1] Ziya Gökalp, The Principles of Turkism. Netherlands, 1968, p.6.
[2] Ziya Gökalp, նշվ. աշխ., էջ 5:
[3] Նույն տեղում:

[1] Ziya Gökalp, նշվ. աշխ., էջ 35:
[2] Տե՛ս A. Wittlin, Abdul Hamid. The Shadow of God, London, 1940, p. 148, Shaw St. L., Shaw E. K., History of the Ottoman Empire and Modern Turkey, v. 2, Cambridge, 1977, p. 224, 225.
Внешнеэкономические связи Османской империи в новое время, Москва, 1989,.стр. 116-119.
[3] **Положение Армян в Турции..., стр. 253.**
[4] Bliss E.M., Turkey and the Armenian Atrocities, Philadelphia, 1896, p. 6.

տություն ստեղծելուն ուղղված քաղաքականություն՝ Աբդուլ Համիդը իր դեմ կլարեր կայսրության մուսուլման մյուս ժողովուրդներին, որոնցից շատերն ունեին իրենց զարգացած մշակույթը, ազգային նկարագիրն ու անկախության ձգտումը: Այդ պատճառով այստեղ ևս սուլթանը որոշեց գործել աստիճանաբար, նախ ստեղծել մուսուլմանական երկիր և ապա այն վերածել թուրքականի: Այդ դեպքում, բնական է, որ առաջին հարվածը պետք է հասցվեր քրիստոնյա ժողովուրդներին: Ընդ որում, գրոհային ջոկատների "պատիվը" շնորհվում էր ոչ թուրք մուսուլմաններին՝ քրդերին, ալբանացիներին, կովկասյան ժողովուրդների ներկայացուցիչներին: Սուլթան Համիդն էր, որ զարգացնելով Օսմանյան պետության կառավարման ավանդական բարբարոսական ձևը ստեղծեց հակամարդկային վարչակարգ՝ ուղղված կայսրության բոլոր ճնշված ժողովուրդների դեմ: Միաժամանակ 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո ակնհայտ էր, որ օսմանյան տիրապետությունը Բալկաններում այլևս հեռանկար չուներ գոյատևելու: Պայքար կարող էր լինել միայն Կրետեի և Մակեդոնիայի համար: Այլ հարց էր Արևելքը: Դուրս մղվելով արևմուտքից, Աբդուլ Համիդը պետք է փորձեր իր միատարր պետության հիմքն այստեղ ստեղծել: Բայց կայսրության այս մասում ևս ապրում և ստեղծագործում էր հնամյա քրիստոնյա ժողովուրդ: Հայրենիք, պատմություն, լեզու, ազգային վառ ինքնագիտակցություն ունեցող հայությունը բնական խոչընդոտ էր համիդյան ծրագրերի իրագործման համար: 1894 թվականին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարին ուղղված զեկուցագրերից մեկում Կ.Պոլսում ֆրանսիական հանրապետության դեսպան Պ. Կամբոնը հետևյալ ուշագրավ միտքն էր հայտնում. "Ձերդ Բարձրությունը տեղյակ է Հայաստանի ռազմական և քաղաքական նշանակության մասին: Անմատչելի լեռները, որ վեր են խոյանում նրա տարածքում, երկատում և լիովին մեկուսացնում են Օսմանյան կայսրության մուսուլմանական երկու մասերը՝ Միջագետքն ու Անատոլիան"[1]: Իսկապես, մահմեդական օվկիանոսի մեջ վեր խոյացած հայկական կղզին անհանդուրժելի էր Համիդի համար: Ավելի բարձր մշակույթ ունեցող քրիստոնյա ժողովրդին ձուլելը փաստորեն անհնար էր, և սուլթանն ընտրում է մյուս՝ բնաջնջման միջոցով հարցը լուծելու ճանապարհը: Զուլումի քաղաքականությունն այսպիսով իր սուր ծայրով ուղղվում է արևմտահայության դեմ: Ստեղծվում է խոր մշակված, կուռ և ամբողջական մի համակարգ: Այստեղ հաշվի էր առնված ամեն մի մանրուք և ամենից առաջ՝ արտաքին գործոնի դերը:

Ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո հայերը Եվրոպայից ստացան 61-րդ հոդվածը՝ բարենորոգումների վերաբերյալ: Պարզ էր, որ այսուհետև այս խնդիրը ստանալու էր միջազգային հնչեղություն, և Հայկական հարցը որպես արևելյան հարցի մի բաղկացուցիչ մաս գտնվելու էր մեծ տերությունների ուշադրության կենտրոնում: Սակայն, նրանցից յուրաքանչյուրը փորձում էր իր ձևով օգտագործել հայկական խաղաքարտը: Լինելով ժամանակի խոշոր քաղաքագետներից մեկը՝ Աբդուլ Համիդը 1878 թվականից անմիջապես հետո կատարեց համապատասխան եզրակացություններ՝ մերձեցման եզրեր որոնելով Ռուսաստանի և Գերմանիայի հետ: Կիպրոսի համաձայնագիրը ևս մեկ անգամ համոզեց թուրքական կառավարող շրջանակներին, որ իրենց հիմնական թշնամին Մեծ Բրիտանիան է: Ռուսաստանը աստիճանաբար դադարում էր սպառնալիք լինել Օսմանյան կայսրության համար, քանի որ վերանայել էր իր արտաքին քաղաքականությունը: 1870-1880-ական թվականների բուլղարական դառը դասերը, երկրի ներսում սկսած ելույթները, արտաքին քաղաքական բարդությունները ստիպում էին ցարին հարավային սահմաններում անցնել status quo -ի դիրքերին: Ինչպես սուլթանին, այնպես էլ Նիկոլայ II-ին առանձնահատուկ անհանգստություն էր պատճառում երկատված, բայց ներուժի մեծ հնարավորություններ ունեցող հայ ժողովրդի հարցը: Ցարը հասկացել էր այն ճշմարտությունը, որ արևմտահայ և արևելահայ հատվածների միավորումը Ռուսական կայսրության մեջ իր հետ անպայմանորեն կբերի նոր "Բուլղարիայի" ստեղծում ստրատեգիական կարևորագույն դիրքում: Նրան հարկա-

[1] Affaires Arméniennes, Projets de Reformes dans l'Empire Ottoman, 1893-1897, Paris ,1897, No 6,p.11.

վոր էր Հայկական լեռնաշխարհը, բայց առանց նրա բնիկ ժողովրդի: Օբյեկտիվորեն արևմտահայ հատվածի բնաջնջման ծրագիրը համապատասխանում էր ցարական ձգտումներին: Եվ սրանից էր, որ ամենից առաջ որոշեց օգտվել սուլթանը: Ստեղծվեց երկու երկրների քաղաքական դաշինք, որը սուր ծայրով ուղղված էր հայ ժողովրդի դեմ:

Բեռլին-Բաղդադ երկաթուղին ապահովում էր երկրորդ հզոր հովանավորին՝ Գերմանիային, միաժամանակ հնարավորություն տալով տնտեսական փոփոխություններ իրականացնել Արևելքում: Մնում էր պաշտպանվել Անգլիայի միջամտությունից, որը Կիպրոսի համաձայնագրից ի վեր փոքր ընդհատումներով, Թուրքիայի հանդեպ վարում էր ուժային քաղաքականություն: Ընդ որում, Մեծ Բրիտանիայի բոլոր ղեկավարները հենվում էին եվրոպական հասարակական կարծիքի վրա, որը հատկապես բուլղարական ջարդերից և հայկական հալածանքներից հետո պահանջում էր սանձահարել բռնակալին: Սուլթանական արտաքին քաղաքականության ուշադիր վերլուծությունը հանգեցնում է մեզ այն մտքին, որ դեռևս 1880-ական թվականներից Աբդուլ Համիդը կանխագուշակում էր հերթական արևելյան ճգնաժամը և ակտիվորեն նախապատրաստվում այդ գոտեմարտին: Հասկանալով, որ այդ ճգնաժամը կբռնկվի որպես արդյունք իր հակահայկական քաղաքականության, և հիմնական հակազդող ուժը կլինի անգլիական դիվանագիտությունը, սուլթանը 1895-1896 թթ. կատարեց ճկուն քայլ. Հայկական հարցի հետ մեկտեղ տերությունների սեղանին դնելով նաև Կրետեի քարտը: Եվ Եվրոպան ստիպված եղավ բախվել միաժամանակ երկու՝ հայկական և բալկանյան պրոբլեմներին: Արյունալի պայքարից հետո զիջելով Եվրոպային Բալկաններում, որոշակիորեն բավարարելով անգլիական պահանջների մի մասը՝ սուլթանը փոխարենը ստանում էր ձեռքերի որոշակի ազատություն Հայաստանում:

Լուծելով արտաքին բնույթի բազմաթիվ այլ հարցեր՝ սուլթանը միաժամանակ իրականացնում էր կարևորագույն ներքին խնդիրները: Հայության դեմ ուղղված իր քաղաքականությունը Աբդուլ Համիդ II-ը սկսել էր իրագործել դեռևս

1880-ական թվականներից: Ինչպես ժամանակին ճիշտ նշել էր հայկական դատի պաշտպաններից մեկը՝ Մաքքոլմ Մաք Քոլլը, նախ և առաջ պատերազմ հայտարարվեց հայերի կրթական համակարգին, մշակույթին և դավանանքին[1]: Համիդը գիտակցում էր, որ հայ ժողովրդի ազգային զարթոնքի դեմ պայքարում պետք է վճռվեր լինել-չլինելու համլետյան հարցը: Այս սուլթանի օրոք էր, որ կառավարության կողմից սկսվեց կիրառվել նաև մշակութային գենոցիդը: Ընդ որում, եթե ֆիզիկական բնաջնջման տակտիկան հնարավոր էր ժամանակ առ ժամանակ հանել զինանոցից՝ արտաքին պայմաններից կամ այլ նկատառումներից ելնելով, ապա պետականորեն ղեկավարվող մշակութային գենոցիդը չդադարեց հայ ժողովրդի նկատմամբ և շարունակվում էր արդեն ավելի քան հարյուր տարի: Միաժամանակ սուլթանը փորձում էր անմիջական հարված հասցնել հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում ապրող հայերին՝ անտանելի պայմաններ ստեղծելով նրանց գոյության համար: Սովորական են դառնում արևմտահայ ժողովրդի նկատմամբ կիրառվող հալածանքները, խաղաղ բնակչության կողոպուտը, թալանն ու բռնությունները: Հայաբնակ բոլոր մարզերում ստեղծվում է յուրահատուկ հակահայկական վարչակարգ: Երկիրը վեր է ածվում մի կատարյալ դժոխքի: Մեզ են հասել բազմաթիվ փաստաթղթեր, վկայություններ, մենագրություններ՝ հայ ժողովրդի անմարդկային, դանթեական տանջանքների նկարագրություններով: Մեր պատմության այս ողբերգական շրջանը դեռևս սպասում է իր ուսումնասիրողին:

"Առաջին քայլը,– գրում էր ժամանակի խոշորագույն հրապարակախոսներից մեկը՝ Էմ Դիլոնը,– բնաջնջման ծրագրի իրականացման ուղղությամբ, այն էր, որ պարբերաբար քայքայեն ժողովրդին"[2]: Դա նախ և առաջ իրականացվում էր ամենադաժան հարկային քաղաքականությամբ: "Օրինական" հարկերը՝ գլխահարկը, խարաջը, տասնորդը, բազմաթիվ և բազմատեսակ "պետական" հարկե-

[1] The Armenian Genocide, Documentation, vol. 1, München, 1987, p. 142.
[2] Положение Армян в Турции..., стр. 333.

որը, սահմանվում էին կամայական չափերով և հավաքվում էին բնակչությունից ամենայն դաժանությամբ ու անխղճությամբ: Հատկապես ծանր էին գլխահարկը և ռազմական հարկը: Բացի սրանցից հայ գյուղացին ստիպված էր տարվա մեջ մի քանի անգամ տուրք վճարել շրջակայքի քուրդ աղաներին՝ հավանական թալանից ու ասպատակությունից խուսափելու համար: Էլ ավելի սարսափելի էին հարկերը գանձելու ձևն ու անիրավությունները:. "Հայերից հավաքվող հարկերը, չափազանց մեծ են, – նշում էր Դիլոնը, - կաշառքները, որոնցով միշտ ուղեկցվում էր դրանց հավաքումը, վերցվում են զափթիաների կողմից և ընդունելով ամենանողկալի ձևերը, կարող են հասնել անհերևակայելի չափերի. ինչ վերաբերում է միջոցներին, որոնց օգնությամբ կատարվում է հարկերի հավաքումը, ապա դրանք իրենք իսկ Հայաստանում օտտոմանյան տիրապետության ոչընչացման բավարար հիմնավորումն են հանդիսանում"[1]: Հարկային քաղաքականությունը իրականացվում էր պետության կողմից հայոց եկեղեցական հողատարածությունների և գյուղացիության հողերի բռնագրավումներով: Այսպես վարելով որոշակի ագրարային քաղաքականություն՝ կառավարությունը ձգտում էր հողազրկման և աղքատացման միջոցով քայքայել արևմտահայությանը և ստիպել նրան լքելու հարազատ երկիրը: Դատարանը և դատը այն հզոր լծակն էին, որոնց միջոցով թուրքական իշխանությունները լիակատար սնանկացման շեմին էին հասցնում արդարություն, պետական պաշտպանություն որոնել փորձող դժբախտներին: Հայերը զրկված էին ամենտարրական իրավունքներից: Այն հայը, որը փորձում էր իրեն անպատված, իր ունեցվածքը թալանած մուսուլմանին՝ քրդին, թուրքին, դատական պատասխանատվության ենթարկել և դիմում էր օրենքին, որպես արդյունք ինքն էր հայտնվում բանտում՝ այնտեղից հեռանալով կամ լիովին աղքատացած /եթե հարուստ էր/, կամ ամենևին դուրս չէր գալիս: Իսկ թուրքական բանտի տանջանքները իսկապես կարող են սարսափի մեջ գցել ընթերցողին:

Սուլթանը տնտեսական ճնշումները զուգակցում էր ամենանուրբ քաղաքական հետապնդումներով: Պետական քաղաքականության աստիճանի էր բարձրացվել մուսուլմանների բնակեցումը հայաբնակ գյուղերում և շրջաններում: Վերաբնակիչները տասը տարով ազատվում էին ռազմական ծառայությունից, ստանում էին անվճար հողատարածություններ՝ որպես օրենք հայերի կողմից արդեն լավ մշակված, եկամտաբեր հողերը և նյութական օժանդակություն[1]: Մասսայական այս վերաբնակեցումները հետապնդում էին մեկ նպատակ՝ փոխել հայաբնակ շրջանների ազգային կազմը, թուլացնել, տնտեսապես հարվածել հայերին և հասնել նրան, որ հայ ազգաբնակչությունն իր հայրենիքում կազմի չնչին տոկոս: Հարկ է նշել և այն փաստը, որ հայկական վիլայեթներում հաստատվում էին բացառապես ռազմատենչ, հետամնաց, թալանով ապրող քրդական ցեղերը և հյուսիսկովկասյան մոլեռանդ ցեղախմբերը: Սուլթանի ծրագրում հատկապես մեծ դեր էր հատկացվում քրդերին: Դեռևս մեծ վեզիր Ալի փաշան ժամանակին մշակել էր հատուկ ծրագիր, որի նպատակն էր քրդական ավարառու ցեղերին ըստ հնարավորին բնակեցնել հայաշատ վայրերում "հավասարակշռություն" պահելու համար[2]: 1880-1890-ականներին հասել էր և այդ ուժն օգտագործելու ժամանակը: "Համիդիե" զորաջոկատների ստեղծումը փաստորեն նշանակում էր, որ կառավարությունը հասել է իր բազմաստիճան քաղաքականության հիմնական փուլին՝ բացահայտ կոտորածների կազմակերպմանը: Դա ըստ էության ազգային բնաջնջումը սկսելու պետական թույլատրությունն էր: "Համիդիե" զորքերի ստեղծումը Բեռլինի համաձայնագրի բացահայտ խախտում էր: Գլադստոնը Ձեստերյան ճառում տվել է համիդիե ջոկատների ստեղծման խոր վերլուծությունը. "Քրդերը ապրում են վայրենի կլաններով, այստեղ միտք արտահայտվեց /միտինգում նախա-

[1] Положение Армян в Турции..., стр. 338,339.

[1] Տե՛ս Геноцид Армян в Османской империи, Ереван 1982, стр.. 159.

[2] Գ. Լազյան, Հայաստան եւ Հայ Դատը, Երեւան, 1991, էջ 122:

գահող Վեստմինստերի հերցոգի կողմից/, որ սուլթանը կազմակերպեց քրդերին: Ես հակված եմ վիճարկել այդ կարծիքը, քանի որ ըստ իս քրդական ցեղերը զուրկ են ամեն մի կազմակերպվածությունից: Եթե նրանք կազմակերպված են, ապա այն սիստեմով, ինչպես կարող է կազմակերպվել ավազակների խումբը: Սուլթանը և կոնստանդինուպոլսյան կառավարությունը ձևականորեն հավաքագրեցին ոչ մի զինվորական կարգապահություն չունեցող մարդկանց, կազմեցին կեղծ հեծելազորային գնդեր և ապա զորացրեցին նրանց լիազորելով, որպես սուլթանական զինվորներ, ավերել ու բնաջնջել հայկական բնակչությանը: Այսպիսով, քրդերը այս սարսափելի գործին մասնակցող առաջին գործակալներն են, հետո գալիս են իրենց չարամտությամբ քրդերին ամենևին չզիջող թուրք զինվորները, երրորդ կատեգորիային են պատկանում քաղաքացիական չինովնիկները՝ ոստիկանությունն ու թուրքական կառավարության հարկահավաքները"[1]: 1895 թ. ապրիլին Վ. Գլադստոնին ուղղված նամակում Խրիմյան Հայրիկը լիովին բացահայտում էր քրդերին օգտագործելու սուլթանական քաղաքականության ևս մեկ կողմը. "Վասնզի կառավարութիւն մը խորամանկ քաղաքականութիւն հնարեց և յաջողեցաւ քիւրտին ձեռքով այնչափ բազմաթիւ գյուղացի հայ ժողովուրդ իրենց բնիկ բազմադարեան հայրենիքէն հանել վարել դուրս գունդեգունդ հայ գաղթականներ, և յետոյ չքմեղս լինելով ասել՝ թե քիւրտն արեց"[2]:

"Համիդիե" հեծելագնդերի ստեղծումով սկսվում են հայության բացահայտ ջարդերը: Ժամանակի հայ և օտար թերթերը օրավուր ցնցվում էին Հայաստանի սարսափների նկարագրություններից:

Էրզրումի նախկին հյուպատոս Քլիֆֆորդ Լյոյդը իր զեկուցագրերից մեկում հետևյալն էր գրում. "Թողնելով մի կողմ ուրիշ կետեր, որոնց մասին դեռ կարելի է վիճել, կան երեք կողմեր թուրքահայերի դրության մեջ, որոնք բոլորն էլ ընդունում են և որոնց պետք է ամենաշատ դարման անել.

1. անապահովություն կյանքի և սեփականության, շնորհիվ քրդերի մշտական հարձակումներին.

2. անձնական անապահովություն և լիակատար բացակայություն և՛ խոսքի, և՛ գործի ազատության, և՛ խղճի.

3. քրիստոնյաների անհավասար դրություն կառավարության աչքում՝ մահմեդականների հետ համեմատելով"[1]: Մեծ տարածում էին ստանում բռնի մահմեդականացումը, երեխաների, մանկահասակ աղջիկների զանգվածային առևանգումներն ու վաճառքը: Հսկայական չափերի էր հասնում բողոքի զուսպ ձևը՝ արտագաղթը հայրենիքից:

Պետական ջարդարարական քաղաքականությունն էր, որ ոտքի հանեց հայության ամենալայն խավերին, առաջ բերեց զինված պայքար: Հայ ժողովուրդը ստիպված էր դիմելու զենքի, նա այլ ելք չուներ, նրա առաջ չկար ընտրության հնարավորություն: Նման պայմաններում բնական է, որ հալածված, ոչնչացման եզրին կանգնած ժողովուրդը տարերայնորեն դիմում էր ինքնապաշտպանության: Հայության ամենալայն շրջաններում տարածում էր ստանում զինվելու, զենքը ձեռքին կռվելու և գոնե պատվով մեռնելու բնական ցանկությունը: Եվ սուլթանական ռեակցիան ի վիճակի չէր ճնշելու սկսված ազատագրական պայքարը: 1880-1890- ական թվականները հայ ժողովրդի քաղաքական զարթոնքի տարիներ դարձան: Մշակվեց մարտական գաղափարախոսություն, ստեղծվեցին հայ առաջին ազգային կուսակցությունները, որոնք աներևակայելի ծանր պայմաններում համարձակորեն իրենց վրա վերցրեցին համաժողովրդական պայքարի կազմակերպման դժվարին գործը: Հայությունը վերջիններիս առաջնորդությամբ մտավ իր դարավոր գոյամարտի վճռական՝ զինված հեղափոխության ժամանակաշրջանը: Ինչպես ամեն մի ճնշված ազգի պայքար ընդդեմ բռնապետության, հայ ժողովրդի մաքառումը և արդար էր, և ուներ առաջադիմական նշանակություն: Պայքարի բնույթով, ձևերով և եղանակներով այն իսկապես ժողովրդական էր: Ազատագրական կռիվների ուղին բռնած կուսակցությունների, ժողովրդի ղեկավարությունն ստանձ-

[1] **Положение Армян в Турции..., стр. XIV, XV.**
[2] **Գ. Լազյան, նշվ. աշխ., էջ 122:**

[1] **Դրոշակ, Վիեննա, 1891թ., Մայիս, էջ 6:**

նեց հեղափոխական ոգով դաստիարակված մտավորականությունը: Ինչպես բոլոր ժամանակների երիտասարդ մտավորականությանը՝ նրան ևս հատուկ էր անհատական պայքարի դերի գերագնահատումը, քաղաքական ռոմանտիզմի գաղափարներով տարվելը: Եվ հնչակյան, և դաշնակցական կուսակցությունների հիմնադիրները եվրոպական կրթություն ստացած, հայրենիքի ազատագրական գաղափարով վառվող երիտասարդներ էին, որոնք վերցրեցին ազատագրական պայքարի ղեկը նախկին առաջնորդներից և ժողովրդին տարան հերոսական խոյանքի ճանապարհով: Պայքարի այս նոր ուղին ստիպում էր ընդունել ինքը՝ կյանքը: Պատահական չէ, որ ժողովուրդը փարվեց կուսակցություններին, նրանց մեջ գտնելով իր գոյատևման միակ հույսը, և վերջիններս հզորացան, ուսանողական խմբակներից մարտական ուժի վերածվեցին միմիայն հզոր համազգային աջակցության շնորհիվ: Չնայած ծրագրային տարակարծություններին, որ պայմանավորված էր հնչակյան կուսակցության ղեկավարության սոցիալիստական ուղղվածությամբ, և՛ հնչակյանները, և՛ Հ. Հ. Դաշնակցությունը հետապնդում էին մի հիմնական նպատակ՝ Արևմտա–Հայաստանի ազատագրումը: Հնչակյան կուսակցությունը ազգային անկախության ձեռքբերումը բացահայտորեն հռչակում էր որպես կարևորագույն խնդիր: Ծրագրում նշվում էր . "Մեր համոզումն այն է, որ այդ թշուառ վիճակից ժողովրդին փրկելու և նրան դնելու այն ուղիի վրայ, որը նրան միջոց տար դիմելու դէպի սոցիալիստական կազմակերպութիւնը, դէպի այն հեռաւոր նպատակը, անհրաժեշտ է թուրքաց Հայաստանում ձեռք բերել ընդարձակ ռամկապետական, քաղաքական ազատութիւն և ազգային անկախութիւն, որոնք և դառնում են Մօտակայ նպատակ"[1]: 1890 թվականին իր հիմնադիր Մանիֆեստում Հ. Հ. Դաշնակցությունը հայտարարում էր. "Նպատակ դնելով թիւրքաց Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատութիւնը, "Դաշնակցութիւնը" մտել է այն կռուի մէջ, որ սկսել է ինքը ժողովուրդը տաճկաց կառավարութեան դէմ, ուխտելով մինչև ա-

[1] Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, հտ. Ա, Բեյրութ, 1962, էջ 33:

րեան վերջին կաթիլը կռուել հայրենիքի ազատութեան համար:

Միանանք ամենքս ժողովրդի հետ, որ բարձրացրել է ազատութեան դրօշակը"[1]:

Արևմտյան Հայաստանի դարերով խավարի մեջ կորած և մոռացված գյուղերում ու քաղաքներում հիմնվում էին ազատագրական գաղտնի խմբակներ, ստեղծվում էին հեղափոխական կազմակերպություններ: Հարուրյավոր հայ երիտասարդներ աշխարհի ամենատարբեր երկրներից, տարբեր խավերից և դասակարգերից կազմակերպում էին կամավորական ջոկատներ Արևմտյան Հայաստան անցնելու, անհավասար գոտեմարտի բռնված, բնաջնջման ենթարկվող եղբայրներին օգնելու, կռվելու և նրանց հետ մեռնելու համար: "Փոխարէն արցունք թափելու մեր աղետների ու կորուստների վրա, – գրում էր "Հնչակը" 1895 թվականին, - անվեհերությամբ ու սուրբ զգացումով ճեղքենք ընկածների արիւնից գոյացած Ռուբիկոնի կուրծքը և երթանք դեպի առաջ"[2]:

1891 թվականին "Դրօշակում" տպագրվեց հայկական հեղափոխության սկզբնապատճառներին և մարտավարությանը նվիրված ծրագրային փայլուն հոդված-վերլուծություն: Այնտեղ իրավացիորեն շեշտվում էր. "Ամեն մի քաղաքական կուսակցութիւն՝ գաղափարի համար կռիւ սկսելով կարող է յաջողութեան յոյս ունենալ միայն այն ժամանակ, երբ կան հետևեալ երկու անհրաժեշտ պայմանները.

1.Եթե ժողովուրդը, որի շահերի համար մղում է կռիւը, հասկանում է այդ կռուի անհրաժեշտ լինելը և մասնակցում է այդ կռուին թէ ուղղակի և թէ անուղղակի կերպով՝ գոնէ ի դեմս իւր ամենալաւ ներկայացուցիչների:

2.Եթէ կռուի համար ընտրուած են այնպիսի նպատակահարմար ձևեր և միջոցներ, որոնք բոլորովին համապատասխան են ներկայ իրականութեան և պատմական րոպէի պահանջած պայմաններին"[3]:

[1] "Դրօշակ", թուագիր թերթ, 1890, N1:
[2] Հնչակ, N24, դեկտեմբեր, 1895, Լոնդոն:
[3] "Դրօշակ", N2, 1891, սեպտեմբեր:

Հայ ժողովուրդը ինքն էր սկսել ազատագրական պայքարը, և այստեղ էր հայ հեղափոխության ուժի ու կենսունակության գաղտնիքը: Ինչպես իրավացիորեն նշվում էր նույն հոդվածում. "Իսկապէս ասած՝ ինտելլիգէնցիան միայն արձագանք տուեց ժողովրդի պատերազմական կոչին, որ լսուեց անակնկալ կերպով"[1]: Համաժողովրդական պայքարի հեռանկարը թելադրում էր և մարտավարությունը. "Ամենից առաջ, - գրում էր "Դրօշակը", -պետք է նկատի ունենալ, որ մեր կռիւը՝ ժողովրդի կռիւ է նրա դարավոր բռնակալների դէմ: Իբրև ժողովրդական կռիւ, նա չի կարող կանոնաւոր զօրքերի վարած պատերազմի ձեւ ունենալ, իհարկէ եթե մի արտակարգ դէպք չպատահի: Ո՛չ, հայ ժողովրդի կռիւը պէտք է պարտիզանական կռիւ լինի. մենք այժմեան դրութեան մէջ ուրիշ կերպ կռուել չենք կարող. կանոնաւոր պատերազմ, իսկական ճակատամարտեր անհնար են մեզ համար"[2]:

Աշխարհի շատ ժողովուրդների ազգային-ազատագրական զինված պայքարի մարտավարությունն էր սա՝ սկսած իսպանական Գերրիլայից մինչև բուլղարական ապստամբությունը: Սակայն, հայկական հեղափոխությունն ուներ հիմնական առանձնահատկություն: Այն ընթանում էր ծայրահեղ աննպաստ պայմաններում և փաստորեն պարտադրված էր սուլթանական կառավարության կողմից, որ իր հայաջինջ քաղաքականությամբ չէր թողել ժողովրդին ոչ մի այլընտրանքի հնարավորություն: Հայ ժողովրդին ուղղված իր նամակներից մեկում Գարիբալդիի զինակիցներից մեկը՝ Ամիլկար Չիպրիանին հետևյալ խորհուրդն էր տալիս նրան. "Լիովին բնաջնջումի դատապարտուած ժողովուրդ մը իր յուսահատ դիւցազնութեան մէջ պէտք է դնէ միայն յոյսը: ... Ամէն պատերազմ, որ կը տանի ազատութեան, արդար է և օրինաւոր:

Կամ՝ մեռնիլ հերոսի պէս զէնքը ձեռքին կռուելով, կամ մեռնիլ անարի և վատասիրտ, համակերպ ու լալկան"[3]:

---

[1] "Դրօշակ", N 2, 1891, սեպտեմբեր:
[2] Նույն տեղում:
[3] Եւրոպացիների կարծիքը Հայկական Դատի մասին, հրատ. "Դրօշակի", ժընեւ ,1907, էջ 15,17:

Հայությունն ընտրեց առաջին ուղին: Արևմտահայության կյանքին քաջածանոթ, նրան նվիրված հեղափոխական գործիչների մի ամբողջ համաստեղություն սեփական կյանքի գնով կազմակերպում էր արևմտահայության ինքնապաշտպանությունը, պատրաստում համաժողովրդական ապստամբություն հիմք դնելով Երկիր՝ Արևմտյան Հայաստան և Կիլիկիա զենք ու զինատար խմբեր անցկացնելու շարժմանը: Ազատագրական զինված պայքարը հիմնականում կրում էր ֆիդայական կռիվների կերպարանք: Պայքարի այս բովում աստիճանաբար ձևավորվում էր մի նոր՝ հերոսական սերունդ, որը վճռականորեն իր վրա էր վերցնում ազատագրական պայքարի ողջ ծանրությունը: Եվ չգերագնահատելով հայ հեղափոխության դերը, նշենք, որ հայոց ընդդիմադիր պայքարն էր, որ ի վերջո սանձեց սուլթանական ջարդարարությանը և ստիպեց Եվրոպային հաշվի առնել հայկական գործոնը: Եվ թուրք ներկայիս պատմագրության փորձերը՝ հայ–թուրքական հարաբերությունների վատթարացումը և ջարդերը ներկայացնել որպես հայ հեղափոխական կուսակցությունների ծավալած գործունեության արդյունք, լիովին սնանկ են: Կ. Պոլսում Ֆրանսիական հանրապետության դեսպանը 1894 թ. փետրվարի 20-ին իր զեկուցագրերից մեկում հետևյալ ուշագրավ տեղեկությունն էր հաղորդում. "Երկու տարի առաջ մի բարձրաստիճան թուրք ինձ ասաց. "Հայկական հարց գոյություն չունի, բայց մենք այն կստեղծենք": Այս կանխագուշակությունն իրականացավ: Հայկական հարցն այսօր գոյություն ունի": Հայկական հարց ասելով, Բարձր Դուռը հասկանում էր հայ բնակչությանը հայրենիքից դուրս մղելու հարցը, իսկ "կստեղծենք"-ը անտարակույս նշանակում էր բացահայտ կոտորածներով նրան ոչնչացնելու քաղաքականությունը: Եվ չի կարելի երբեք մեղադրել հայոց ազատագրական պայքարը, կուսակցություններին "անհեռանկար պայքարի", "անհեռատեսության ", անգամ "առիթ ընձեռելու"մեջ: Ամեն ինչ արդեն կանխորոշված էր և պետք է հանգեցներ կոտորածի: Նույն դեսպանը այսպես էր շարունակում իր միտքը. "Այդ

շրջանում / այսինքն՝ Բեռլինից և Կիպրոսի դաշնագրից հետո- Լ.Մ./ հայ ազգայնական ինքնագիտակցության զարթոնքը դեռևս տեղի չէր ունեցել, հայկական անկախության գաղափարը գոյություն չուներ, կամ եթե կար՝ միայն մի քանի ուսյալների մտքերում, որոնք ապաստանել էին Եվրոպայում": Այնուհետև նկարագրելով հայերի դրությունը՝ Կամբոնը եզրակացնում էր, որ թուրքերն իրենք էին աճեցնում հեղափոխականներին, և ժողովուրդը, որը տկար ու անպաշտպան էր, ստիպված էր մտածել երկու տարրական բաների՝ "ազատության" և "գաղտնի կազմակերպություններ ստեղծելու մասին"[1]:

Խոսելով համիդյան Զուլումի մասին, անհրաժեշտ է առավել հանգամանորեն անդրադառնալ ջարդերի մեխանիզմին: 1890-ական թթ. թուրքական կառավարությունը վերջնականապես մշակեց և հարստացրեց կոտորածներն իրականացնելու դարավոր զինանոցը: Դա նման մասշտաբներով բնաջնջման առաջին փորձն էր, ուստի և որոշ վայրերում տեղական իշխանությունները չկարողացան կազմակերպված իրագործել կենտրոնի հրահանգները: Բոլոր "վրիպումներն" ու "սխալները" հետագայում հաշվի առնվեցին Համիդի հաջորդների կողմից: Մասնավորապես 1915-ին կատարվեց այնպիսի խոշոր քայլ, ինչպիսին էր բնաջնջման իրականացումը ոչ թե տեղում, այլ դեպորտացիայի միջոցով, տեղափոխման ընթացքում:

Ուշադիր քննությունը ևս մեկ անգամ համոզում է, որ 1894-ից մինչև 1897-ն ընկած ժամանակահատվածի արյունալի իրադարձություններն ամենայն մանրամասնությամբ նախապատրաստված են եղել և իրականացվել են սահմանված հաջորդականությամբ: Սուլթանը նախ փորձում էր հարվածել հայ ժողովրդի ազատագրական պայքարի դարավոր կենտրոններին՝ Սասունին, Զեյթունին և Վանին: Ընդհանրապես կարելի է անցկացնել սուլթանական ջարդարարության որոշակի դասակարգում: Հայության ոչնչացումն իրականացվում էր երեք ճակատներով: Առաջինը, ինչպես նշվեց, ամրացված լեռնային շրջանների և ինքնապաշտպանության ընդունակ բնակչության բնաջնջման փորձն էր: Եթե 1894 թվականին Սասունում դա մասամբ հաջողվեց՝ ոչնչացվեց շուրջ 10 հզ. խաղաղ բնակչություն, ապա Զեյթունում, Վանում, Հաճընում հայությունը, չնայած մեծ կորուստներին, կարողացավ ոչ միայն ձախողել Բարձր Դռան ծրագրերը, այլև նույնիսկ մի շարք փառավոր հաղթանակներ տարավ կառավարական զորքերի և բաշիբոզուկների տասնյակ հազարներից կազմված բանակների դեմ: Երկրորդ կարևորագույն փուլը կայսրության հայաշատ քաղաքներում կազմակերպված ջարդերն էին, որոնց վրա հարկ է ծանրանալ առանձնակի ուշադրությամբ: Այդ ջարդերը, ի տարբերություն վերը հիշատակված շրջանների, իրականացվում էին հիմնականում մուսուլմանական մոլեռանդությամբ առլեցուն քաղաքային բնակչության, դրսից բերված ավազակների և բանտերից բաց թողնված քրեական տարրերից կազմված ջոկատների օգնությամբ: Եթե դիմադրական պայքարի ուղին բռնած Սասունի, Զեյթունի և Վանի համար անհրաժեշտ էր օգտագործել ոչ միայն քրդական, չերքեզական զինական ուժը, այլ նաև բանակը, ապա մեծ մասամբ անպաշտպան հայ քաղաքային բնակչության համար նման քայլերի կարիքը ամենևին չկար: Ինչպես առաջինների, այնպես էլ երկրորդների նկատմամբ հաշվեհարդարը Բարձր Դուռը բացատրում էր հայկական հեղափոխությամբ և մուսուլմանական մոլեռանդությամբ: Իրականում փաստերը վկայում են, որ հատկապես վերջինը պարբերաբար ներարկվել է բնակչության մեջ կառավարության ներկայացուցիչների, լրտեսական լայն ցանցի միջոցով: Ընդ որում, մուսուլմաններին ահաբեկում էին այն հեռանկարով, որ հայերը ձգտում են ստեղծել իրենց պետությունը և բարենորոգումներից անմիջապես հետո կսկսեն մուսուլմանների ջարդը: Հայերին նույն լրտեսները պատմում էին, որ մեծ տերությունները համաձայնության են եկել Հայաստանում զինված միջամտության հարցի շուրջ, և

[1] Ministére Affaires Etrangéres. Documents Diplomatiques. Affaires Arméniennes. Projets de Reformes dans l'Empire Ottoman, 1893-1897, Paris, 1897, N6, p.10.

բավական է բարձրաձայն բողոքել, որ կատարվեին հայերի իղձերը[1]: Միաժամանակ Եվրոպային հայ անիշխանականներով վախեցնող սուլթանը, յուրաքանչյուր տեղային ջարդից հետո փորձում էր իրադրությունը ներկայացնել որպես հեղափոխականների սադրանքի հետևանքով առաջացած անկայունության արդյունք:

Բավարարվենք մի քանի վկայություններով: Էրզրումի ողբերգական իրադարձություններից անմիջապես հետո, 1895 թ. հոկտեմբերի 28-ին ռուսական ներկայացուցիչը դեսպան Ներիդովին ուղղված զեկուցագրի վերջում հատուկ շեշտում էր . "Իմ պարտքն եմ համարում լրացնելու մեմորանդումը կատեգորիկ հայտարարությամբ այն մասին, որ հոկտեմբերի 18/30-ին Էրզրումում հայերի կողմից ոչ մի հեղափոխություն չի եղել"[2]: Վանում ռուսական փոխհյուպատոս Վ. Մաևսկին 1895 թ. նոյեմբերի 1-ին հեռագրում էր ռուսական դեսպանատուն. "Վերջին շաբաթվա ընթացքում շատ հայեր, վախենալով այստեղ Տրապիզոնյան և Էրզրումյան անկարգությունների կրկնությունից, մի քանի ընտանիքներով տեղափոխվում են առանձին տներ և այդպիսով ապրում 50-60 և ավելի անձից կազմված համայնքներով: Թուրքական իշխանությունները դա նկատելով, իհարկե կարող են հիմք ունենալ այդպիսի հավաքները ներկայացնելու բոլորովին այլ իմաստով"[3]: 1894 թ. դեկտեմբերի 15-ի զեկուցման մեջ Հալեպի ռուսական հյուպատոսը, նշելով գեներալ նահանգապետի և վիլայեթի վարչական խորհրդի հայատյաց քաղաքականության մասին, գրում է, որ միայն "Վերջին ժամանակներս այստեղ ձերբակալվեցին մինչև 30 հայեր ինչ-որ քաղաքական դավադրության մեջ մասնակցություն ունենալու կասկածանքով..."[4]: Կառավարությունը էլ ավելի խնամքով էր նախապատրաստում ջարդերի հատկապես գործնական կողմը: Բազմաթիվ փաստերը, վկայությունները, նկարագրությունները անառակելիորեն ապացուցում են, որ 1895-1897 թթ. կոտորածներն անմիջականորեն կազմակերպված են եղել իշխանությունների կողմից, ընթացել են միևնույն սցենարով: Թուրքական կառավարության բոլոր փորձերը՝մի կողմ քաշվել պատասխանատվությունից, իրողությունը ներկայացնել որպես ամբոխային, զանգվածային անկարգություններ, չեն դիմանում ոչ մի քննադատության: Այստեղ բերենք սոսկ մի քանի մեջբերումներ ռուսական և եվրոպական դիվանագիտական ներկայացուցիչների զեկուցագրերից, ներկայացուցիչներ, որոնց նույնիսկ թուրք ներկայիս կեղծարարները չեն կարող մեղադրել հայասիրության, փաստերի կանխամտացածին աղավաղումների մեջ: Դրանցից երկուսի հեղինակը Հալեպի ռուսական հյուպատոս Ցակիմանսկին է՝ ցարական առավել փորձված դիվանագետներից մեկը, որն ակտիվորեն իրագործում էր Պետերբուրգից ստացած գաղտնի հրահանգները՝ տապալելու Զեյթունում 1896 թ. մեծ տերությունների միջամտությամբ ընթացող բանակցությունները, և հայտնի էր հայ հեղափոխության նկատմամբ իր անբարեհաճ վերաբերմունքով: 1895 թ. նոյեմբերին նա գրում էր Կ. Պոլսի ռուսական դեսպան Նելիդովին. "Գաղտնի հեռագրով, ես պատիվ եմ ունեցել այսօր տեղեկացնելու Ձերդ բարձրությանը, օտար պետությունների հավանական միջամտության սպառնալիքի ներքո քրիստոնյաների կոտորածները դադարեցնելու Դոան հրամանի և Այնթափում սույն ամսվա 5-ին զոհված քրիստոնյաների թվի մասին: Որոշ տեղեկություններով հաշվվում են նույնիսկ ավելի քան հազար սպանվածներ և վիրավորվածներ: ...Եվ Այնթափում, և Մարաշում դիակներն այրված են, և զորքերով շրջապատված ողջ մնացած քրիստոնյաները հնարավորություն չունեն հեռանալու իրենց քաղաքներից"[1]: Նոյեմբերի 24-ին նա տալիս է առավել ընդարձակ նկարագրություն և տվյալներ. "Արյունոտ նկարագրությունները Ուռհայում, Այնթափում և Մարաշում, ինչպես նաև նրանց շրջակա

[1] Alma Wittlin, նշվ. աշխ., էջ172.
[2] **АВПР, ф. Посольство в Константинополе, дело 3179, опись 517, л. 102 .**
[3] **АВПР, ф. Посольство в Константинополе, дело 3179, опись 517, л. 107.**
[4] **АВПР, ф. Политархив, дело 229, опись 482, л. 12 .**

[1] **АВПР, ф. Посольство в Константинополе,г. 1895, дело 3179, опись 517, л. 141.**

գյուղերում, կարելի է ասել, հրահրված են տեղի թուրքական իշխանությունների կողմից: ... Գեներալ նահանգապետի, մյութեսարիֆների և գայմագամների մոլեռանդությունն ու հայերի նկատմամբ անսքող ատելությունը, ինչպես նաև մեղավոր մուսուլմանների վստահությունն իրենց անպատժելիության մեջ անմիջական պատճառ դարձան հայերի ոչընչացման համար... Իհարկե, ապագա անկողմնակալ հետաքննությունը կարող է բացահայտել և գլխավոր, և երկրորդական մեղավորներին, ցույց տալ զոհված քրիստոնյաների ճշգրիտ թիվը: Ահա թե ինչու, տեղական իշխանությունների հրահանգով, զոհվածների դիակները մեծամասամբ այրում էին կերոսինով կամ թաղում գարշահոտությամբ լեցուն փոսերի մեջ"[1]: Ըստ Կ.Պոլսի անգլիական դեսպան Ֆ. Քարրիի տվյալների, Տրապիզոնի սարսափելի կոտորածների ժամանակ ջարդարարների խմբակները անմիջապես խրախուսվել են ոստիկանության և զինվորականության կողմից: Ընդ որում, թուրք բնակչության մեջ տարածվել էին լուրեր, որ հայերը նախապատրաստվում են հարձակվել մուսուլմանների վրա[2]: Կենտրոնակայն կառավարության արյունոտ դերը հատկապես վառ արտահայտվեց 1896 թվականի Կ.Պոլսի ջարդերի ժամանակ, որն անմիջապես հետևեց Հ.Հ. Դաշնակցության մարտիկների կողմից Օտտոմանյան բանկի գրավմանը: Ժամանակին եվրոպական մամուլում, նույնիսկ հայկականում երևացին հոդվածներ, որտեղ Կ.Պոլսի կոտորածների նախապատճառ էին համարում հայ հեղափոխականների գործողությունները և մայրաքաղաքի որոշ թաղամասերում կազմակերպված զինված դիմադրությունը: Գ. Ուոշբըրնը, որը խիստ լավատեղյակ էր թուրքական իրականությանը, իր արժեքավոր աշխատության մեջ հետևյալ տեղեկությունն էր հայտնում. "Բանկի վրա հարձակումից ոչ ավելի քան մի քանի րոպե հետո, ոստիկանության մինիստրի կողմից կազմակերպված թուրքերի ավազակախմբերը սկսեցին Ստամբուլում և Գալաթայում իրենց պատահած հայերի սպանությունները:

[1] АВПР, ф. Посольство в Константинополе, г. 1895, дело 3179, опись 517, р. 195:
[2] Turkey,No.2 (1896), no. 91, p.57.

Նրանք հովանավորվում էին մեծ զորամիավորումների կողմից, որոնք որոշ դեպքերում մասնակցեցին արյունահեղությանը"[1]: Կոտորածը շարունակվեց երեք օր, և արդյունքում ոչնչացվեցին ոչ միայն հազարավոր հայեր, այլ նաև ավարի տրվեց նրանց պատկանող ողջ հարստությունը: Սուլթանը որոշել էր հիմնական հարվածը հասցնել մայրաքաղաքի տնտեսապես հզոր հայությանը: Սա էր պատճառը, որ ջարդերից հետո Կ.Պոլսում սկսվեցին հայության զանգվածային ձերբակալությունները և հալածանքները: Անտանելի պայմաններ ստեղծվեցին նաև ունևոր խավի ներկայացուցիչների համար: Մ. Մաք Քոլլը Կ.Պոլսի ջարդին նվիրված իր հոդվածում վկայում էր. "Ամեն ինչ կատարվել էր մեծագույն կազմակերպվածությամբ, և չկար անհիշխանության ոչ մի նշույլ, այդ օրերին չկար մի րոպե, որ բանակը և ոստիկանությունը չվերահսկեին քաղաքի իրադրությունը. մի քանի հայկական թաղամասեր՝ Սկյուտարը, Գում-Գափուն և ուրիշներ, որոշ նկատառումներով պաշտպանվեցին և այստեղ սովորականի պես խաղաղ էր ու անխոով"[2]: Սակայն սրանով չէր ավարտվում բնաջնջման սխեման: Հայ ժողովրդի ստվար հատվածը բնակվում էր հայրենի եզերքներում, զբաղվում էր գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ: Սրանց դեմ էր հիմնականում ուղղված սուլթանական հատուկ հարկային քաղաքականությունը: Ամրացված շրջանների դեմ պատերազմների, քաղաքային ջարդերի հետ միաժամանակ սկսվում էր Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի հայաբնակ գյուղերի, շեների զանգվածային ոչնչացումը: Այստեղ հիմնական դերակատարները համիդիե ջոկատներն ու տասնյակ հազարների հասնող բաշիբոզուկներն էին, որոնք իսկապես երկիրը վերածեցին անապատի և սպանդանոցի:

Փաստորեն, կազմակերպված ֆիզիկական ոչնչացումը սկսվեց Սասունում՝ 1892- 1894 թվականներին և շարունակվեց մինչև 1890- ական թվականների վերջերը: 1895 թվականի սեպտեմբերի 30-ին ահավոր կոտորած տեղի ունեցավ Բաբերդում: 1895 թ. հոկտեմբերի 5-ին սկսվեց Տրապի-

[1] The Armenian Genocide, vol. 1, p. 196.
[2] The Armenian Genocide, vol. 1, p. 218.

զոնի սարսափելի ջարդը: Սրի քաշվեցին հազարավոր հայեր, ավերվեցին շրջակայքի հայկական բնակավայրերը: Երկու ամսվա ընթացքում կոտորածների ալիքը տարածվեց հայաբնակ համարյա բոլոր մարզերում: Տասնյակ հազարավոր կանայք, երեխաներ, ծեր և երիտասարդ բնակիչներ ոչնչացվեցին Երզնկայում, Դերջանում, Բիթլիսում, Ուռհայում, Շաբին-Կարահիսարում, Կարինում, Խարբերդում, Մալաթիայում, Մարզվանում, Դիարբեքիրում, Սղերդում, Սեբաստիայում, Այնթափում, Մարաշում և այլուր: Արևմտահայոց ցեղասպանության սկիզբն էր սա, ցեղասպանություն, որի արդյունքում ոչնչացվեց իր հայրենիքում ապրող օսմանահպատակ հայությունը: 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ում ընդունված Գենոցիդի կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշվում է. "Ներկա կոնվենցիայում գենոցիդ նշանակում է հետևյալ գործողություններից որևէ մեկը՝ կատարված ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խումբը, որպես այդպիսին, ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչնչացնելու մտադրությամբ.

ա) խմբի անդամներին սպանելը,

բ) խմբի անդամներին լուրջ մարմնական կամ հոգեկան վնաս հասցնելը,

գ) խմբի համար կանխամտածված կերպով կյանքի այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք, նախապես պարզ է, որ հանգեցնելու են նրա ֆիզիկական ոչնչացմանը՝ ամբողջովին կամ մասնակիորեն,

դ) խմբի ներսում ծնունդների կանխմանն ուղղված միջոցառումների պարտադրումը,

ե) խմբի երեխաներին հարկադրաբար մեկ այլ խումբ փոխանցելը"[1]: Հազարավոր արխիվային վավերաթղթերը /դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուներ, մամուլ, վկայություններ/ անհերքելիորեն վկայում են, որ 1880-ական թթ-ից արևմտահայության նկատմամբ թուրքական վարչակարգի կողմից կիրառվել են միաժամանակ բոլոր ենթակետերով սահմանված գործողությունները: Նախքան ֆիզիկական բնաջնջումը երկրում ստեղծվեցին կյանքի, կենցաղի

[1] F. Chalk and K. Jonassohn, Genocide: An Historical Overview, Social Education, N2 , February 1991, p. 92.

դժոխային պայմաններ, պետական քաղաքականությամբ քայքայվեց հայ ընտանիքը, պատերազմ հայտարարվեց այդ ժողովրդի կրոնին և մշակույթին: Այնուհետև ոչընչացվեց շուրջ 300 հզ. հայ, նույնքան օսմանահպատակ հայ քաղաքացիներ տարագրվեցին երկրից, հազարավոր երեխաներ որպես ստրուկ վաճառվեցին համալրելով հարեմներն ու անառականոցները, մի հսկայական զանգված հարկադրաբար դավանափոխվեց՝ փրկելու համար կյանքը:

Այսպիսով, անժխտելի է, որ 1880-ականներից սկսյալ մինչև 1890-ական թվականների վերջերը թուրքական պետական վարչամեքենան Աբդուլ Համիդ II սուլթանի անմիջական ղեկավարությամբ սկսեց իրականացնել հայ ժողովրդի օսմանահպատակ հատվածի սիստեմատիկ բնաջնջման ծրագիրը: Այդ քաղաքականությունը մասամբ ձախողվեց շնորհիվ հայ ժողովրդի ազգային ազատագրական զինված պայքարի, որը չնայած ծանրագույն կորուստներին, տոկալով և դիմադրելով Օսմանյան կայսրությանը կանգնեցրեց ներքին և արտաքին բնույթի այնպիսի բարդությունների առջև, որոնք ստիպեցին թուրքական կառավարող շրջաններին առժամանակ դադարեցնել հայության ֆիզիկական ոչնչացման քաղաքականության իրականացումը:

ԷԴՎԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ԿՈՂՄԻՑ /1914-1918 թթ./

Առաջին աշխարհամարտը մեծագույն չարիք էր բովանդակ մարդկության համար: Բայց պատերազմի զոհասեղանի մեծագույն զոհը դարձավ հայ ժողովուրդը: Չլինելով պատերազմող կողմ, անկախ իրենից ներքաշվելով աշխարհամարտի մեջ՝ հայ ժողովուրդը մեծագույն գողգոթա ապրեց: Օրենքից դուրս հռչակվեց և բռնաբարվեց Օսմանյան կայսրության տարածքում ապրող բովանդակ հայությունը, ոչնչացվեց շուրջ 1.5 մլն. հայ, ամբողջովին հայաթափվեց Արևմտյան Հայաստանը:

Թուրքիան շատ որոշակի պլաններով մտավ համաշխարհային պատերազմ, որոնք ոչ մի բանով չէին զիջում կայզերական Գերմանիայի նվաճողական պլաններին: Երիտթուրքերը ծրագրել էին ստեղծել թուրքական մեծ կայսերապետություն, որի սահմանները ձգվելու էին Ջիբրալթարից մինչև Չինաստան և պետք է ընդգրկեին Ռուսաստանի կազմում գտնվող Կովկասը, Ղրիմը, Մերձվոլգյան հողերը, Միջին Ասիան, ինչպես նաև Իրանի մեծ մասը, Աֆղանստանը, Չինաստանի և Հնդկաստանի մի մասը: Այդ ծրագիրն իրագործելու համար գործի դրվեց համաթուրքականության ցեղապաշտական տեսությունը:

Երիտթուրքերի ճանապարհին որպես մեծ խոչընդոտ ընկած էր հայ ժողովուրդը, որի հայրենիքն իր հսկայական

տարածքով սեպի նման խրված էր մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից՝ Ռուսաստանի և Պարսկաստանի թուրքախոս երկրամասերի միջև: Նախ հարկավոր էր վերացնել հայկական այդ սեպը՝ հայ ժողովրդին գլխովին բնաջնջելու, Հայաստանն իսպառ հայաթափելու միջոցով: "Հայերը... մեր քաղաքականության հաջողության միակ արգելքն են, քաղաքականություն, որ պետք է բանա Հնդկաստան տանող ճանապարհը: Անհրաժեշտ է ոչնչացնել հայերին և նրանց դիակների վրայով քայլելով հասնել մեր նպատակին..." [1], - ահա թե ինչ էր գրված "Միություն և առաջադիմություն" կուսակցության կենտկոմի՝ իր տեղական կազմակերպություններին ուղղված շրջաբերականում:

Եթե սուլթան Համիդի արյունալի քաղաքականությունը "հիմնավորվում" էր բազմիցս կրկնվող այն հայտարարություններով, թե հայկական հարցը լուծելու համար հարկավոր է ջարդել հայերին, ապա երիտթուրքերը, ժառանգելով այդ քաղաքականությունը, այլ տեսական հիմնավորում էին տալիս, որը բխում էր պանթուրքական կայսերապաշտությունից:

Պանթուրքիզմը, սակայն, բոլորից առաջ ուներ հակառուսական ուղղվածություն. "Մեր մասնակցությունը համաշխարհային պատերազմին արդարացվում է մեր ազգային իդեալով: Մեր ազգի իդեալը առաջնորդում է մեզ դեպի մեր մոսկովյան թշնամու ոչնչացումը, որպեսզի դրա հետևանքով ստեղծվեն մեր կայսրության բնական սահմանները, որոնք իրենց կազմում կունենան և կմիավորեն մեր ռասայի բոլոր ճյուղավորումները:" [2]

Այսօր էլ պատմության թուրք կեղծարարները շարունակում են շրջանառության մեջ դնել երիտթուրքական կառավարության ղեկավարների այն փաստաբանությունը, որով արևմտահայության բռնագաղթն ու ջարդերը հիմնավորվում էին հայերի կողմից Օսմանյան պետությանը վտանգ սպառնալու, հայկական ապստամբության պատճառով /նկատի ունեն Մեծ եղեռնի օրերին արևմտահայության

[1] Մ. Թորլաքյան, Օրերուս հետ, Լոս Անճելոս, 1953, էջ 476:
[2] Готлиб В.В., Тайная дипломатия во время первой мировой войны, Москва, 1960,стр. 86.

ինքնապաշտպանական կոիվները, մասնավորապես 1915 թ. Վանի գոյամարտը/: Հազիվ թե հարկ կա բացատրելու, որ նման "փաստարկները" լավագույն դեպքում կեղծիք են և հերյուրանք: Փաստ է, որ Վանի ապստամբությունից դեռևս 5 տարի առաջ, 1910 թ. հոկտեմբեր-նոյեմբերին Սալոնիկում կայացած համագումարի որոշումները ծրագրային եղան ոչ թուրք ժողովուրդների ցեղասպանության քաղաքականության համար: Համագումարի որոշումներում կարևորվում էր հայերի ֆիզիկական բնաջնջման ծրագիրը, որի իրագործմամբ միանգամից կլուծվեին հետևյալ խնդիրները.

ա/ միանգամից վերջ կտրվեր հայկական հարցին ,

բ/ երկիրը կազատվեր հայ տարրից, ամբողջ Անատոլիան կդառնար թուրքերով բնակեցված միատարր երկիր ,

գ/ հայերի հարստությունները կդառնային թուրքական պետության սեփականությունը ,

դ/ ամենամեծ խոչընդոտի անհետացմամբ ճանապարհ կհարթվեր համաթուրքական գաղափարի իրագործման համար[1] :

Երիտթուրքերը համաշխարհային պատերազմը լավագույն առիթը համարեցին իրենց զավթողական պլանների իրագործման ճանապարհին ընկած արգելքները վերացնելու համար: Նախ՝ նրանք հավատացած էին պատերազմում Ռուսաստանի պարտության մեջ: Երկրորդ՝ պատերազմը տակնուվրա անելով ամբողջ աշխարհը, ըստ երիտթուրքերի , ինքնին հետին պլան էր մղել հայասպան ծրագրի իրագործմանը խանգարող բարոյական արգելակները. "...Հայերը մահացուցիչ վերքի մը կը նմանին... Գործել և արագ գործել պետք է: Եթե 1909-ի մեր Ատանայի և այլ վայրերու մեջ կատարել տուածին նման տեղական ջարդերով պիտի գոհանանք, օգուտի տեղ վնաս կը հասնի, մեր մաքրագործել առաջադրած ուրիշ տարրերը՝ արաբները, քուրտերը կարթցնե և վտանգը մեկի տեղ երեք կըլլայ... այս ժողովին մեջ քանիցս խոսած եմ, հիմա կըկրկնեմ. եթե այս մաքրագործումը ընդհանուր և վերջնական պիտի չըլլայ, օգուտի տեղ վնաս կը բերե. պետք է հայ ազգը արմատախիլ ըլլայ, մեր հողին վրա անհատ մը անգամ չմնայ, հայ անունը մոռցվի: Հիմա պատերազմի մեջ ենք, ասկէ հարմար առիթ չի գտնուր, մեծ պետութեանց միջամտութիւնը և թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնար ըլլայ, ըլլալուն պարագայեն խնդիրը կատարուած իրողութիւն մը կը դառնայ և կը փակուի: Այս անգամուան գործողութիւնը բնաջնջումի գործողութիւն մը պիտի ըլլայ, հայերեն անհատ մը իսկ չմնալու պայմանաւ բնաջնջումը անհրաժեշտ է..."[1] , ահա թե ինչ էր ասում դոկտոր Նազըմը հայերի կոտորածները գործնական հողի վրա դնող ծրագրային նիստերից մեկում: Այդ նույն նիստում բոլոր ներկա գտնվողները միաձայն քվեարկեցին բոլոր հայերի բնաջնջման օգտին. "Թալեաթի հրամանին վրայ քուեները հաւաքվեցան և դասաւորուեցան. արդի՞ւնքը...մեկ հատ իսկ չմնալու պայմանավ հայերուն բնաջնջման մասին միաձայնութիւն գոյացած ըլլալը հասկացուեցավ"[2] :

Արևմտահայերի զանգվածային ջարդի և տարագրության գործադրությունը հանձնարարվեց 3 հոգուց բաղկացած հանձնախմբին, անդամակցությամբ՝ դոկտոր Նազըմի, դոկտոր Բեհաէդդին Շաքիրի և "լուսավորության" նախարար Միդթհատ Շյուքրիի. "... այս երեքներու գործադիր կոմիտեն անկախ, ոչ պաշտոնական եւ սակայն անպատասխանատու գործադիր մարմին մը ըլլալով, մասնավոր գրասենեակ, քննիչներ եւ այլ պաշտոնեաներ ուներ. պետութեան մեջ պետութիւն եւ կուսակցութիւն"[3] : Երեքի հանձնախմբի անդամներից յուրաքանչյուրը հայասպանությունը ղեկավարելու էր օսմանյան կայսրության բոլոր հայաբնակ շրջանները երեք գոտիների բաժանած իր կոնկրետ տեղամասում՝ Արևմտյան Անատոլիա, Արևելյան Անատոլիա /իմա՝ Արևմտյան Հայաստան/, Կիլիկիա և Հյուսիսային Սիրիա: Երեքի հանձնախմբի աշխատանքների հսկողությունը դրված էր ներքին

[1] Տե՛ս Ա. Ն. Մնացականյան, Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965, էջ 33.

[1] Մէվլան Զատէ Ռիֆատ, Օսմանեան Ցեղափոխութեան մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Երևան, 1990, էջ 97-98:
[2] Նույն տեղում, էջ 101:
[3] Նույն տեղում, էջ 112

գործերի նախարար Թալեաթ փաշայի վրա:

1915 թ. ապրիլի 15-ին հաստատվեց և տեղական իշխանություններին ուղարկվեց հայ ժողովրդի մահվան հրամանը, որը ստորագրված էր Թալեաթի, Էնվերի և Նազիմի կողմից.

"Գերապատվելի նահանգապետներին,
մեծարգո գավառապետներին և
հարգելի գյուղական իշխանություններին:

Ձեզ հայտնի են այն անողոք քաղաքական պատճառները, որոնց ճնշման տակ հզոր օսմանյան պետությունը՝ թուրք մեծ ժողովուրդը, Գերմանիայի և Ավստրիայի հետ միասին պատերազմի մեջ մտավ ընդդեմ Եռյակ համաձայնության: ...Դիվանագիտությունը, նկատի ունենալով այս պատերազմի բնույթն ու ելքը, անկախ այն բանից դա կլինի մեզ համար բարենպաստ թե անբարենպաստ, սահմանել և պատմականորեն ապացուցել է, որ մեր դեմ պատերազմող և առաջին անգամ միմյանց հետ միացած ռուսական և անգլիական տերությունները չեն կարողանա երբևիցե համաձայնության գալ և բաժանել մեր հարազատ հողերը, այն հողերը, որոնց համար դարեր շարունակ այդ տերություններից մեկնումեկը մեզ հետ դաշնակցած պայքարել է մյուսի դեմ, որպեսզի պաշտպանի մեր հողը՝ մեզ համար: Որովհետև գոյություն ունի ծովերի թագուհի Կոստանդնուպոլիսը և Հնդկաստան տանող ցամաքային ուղին՝ արևելյան վիլայեթները, որոնց զավթումը նրանցից մեկի կողմից՝ մահ է մյուսի, մանավանդ Անգլիայի համար:

Հաղթության դեպքում նրանք կարող են համաձայնության գալ երրորդ իրավասու ժառանգորդի վերաբերմամբ, գտնելով այնպիսի մի ժողովուրդ, որը կարողանար ծառայել նրանց շահերին, որպեսզի իրենք էլ կարողանային խոսել այդ ժողովրդի անունից: Այդ երրորդ իրավասու ժողովուրդը կարող է լինել հայ ժողովուրդը: Աստված մի արասցէ, բայց հաշտության բանակցությունների ժամանակ, մեր պարտության դեպքում, ինքնըստինքյան հրապարակ կգա այդ "Հայկական հարցը", որն արդեն կես դարից ավելի է, ինչ միջազգային հանգամանք է դարձել և սպառնագին խրվել

մեր կուրծքը:

Հետևաբար՝ մեր հայրենիքը, ազգը, պետությունը և կրոնը այդպիսի վտանգի հնարավորություններից պաշտպանելու համար, կառավարությունը, որ ներկայացնում է իսլամն ու թուրք ժողովուրդը, և "Միություն և առաջադիմություն" կոմիտեն, ինչ էլ որ լինի, նպատակ ունենալով կանխել որևէ մի տեղ և որևէմի ձևով հայկական հարցի առաջադրումը, օգտվելով այն անկախությունից, որ մեզ ընձեռել է պատերազմը, որոշեց վերջնականապես վերջ դնել այդ հարցին, բնաջնջելով խորթ տարրը, քշելով նրան Արաբիայի անապատները համաձայն մեզ տրված գաղտնի հրահանգի...

Ամեն մի պաշտոնատար կամ մասնավոր անձնավորություն, որը կընդդիմանա այս սրբազան և հայրենասիրական գործին և չի կատարի իր վրա դրված պարտականությունները կամ որևէ եղանակով կփորձի պաշտպանել կամ թաքցնել այս կամ այն հային, կճանաչվի հայրենիքի ու կրոնի թշնամի և դրան համապատասխան կպատժվի:

15 ապրիլի 1915 թ.

Ներքին գործերի և ռազմական մինիստրներ՝
Թալեաթ, Էնվեր,
"Միասնություն և առաջադիմություն" կոմիտեի
գլխավոր քարտուղար՝ դոկտոր Նազիմ"[1]:

Հայերի ցեղասպանության ծրագրի գործադրությունը սկսվեց Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու առաջին օրերից: Այդ դիվային ծրագիրն առանց ցնցումների իրագործելու համար մեկուսացվեց արևմտահայության ռազմունակ հատվածը: Ընդհանուր զորահավաքի և ճանապարհների վրա աշխատելու պատրվակներով ընտանիքներից հեռացվեցին 15-60 տարեկան հայ տղամարդիկ, որոնք հատված առ հատված, խիստ գաղտնիության պայմաններում ոչնչացվեցին: Արևմտահայության դիմադրական պոտենցիալը իսպառ ամլացնելու և նրան գլխատելու միտումով միայն Կ. Պոլսում ձերբակալվեցին և անլուր տանջանքներից հետո բարբարոսաբար սպանվեցին մի քանի հարյուր արևմտահայ մտավորականներ: Կտրվեց ամեն կապ հայաբնակ գա-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 314, ց. 12, գործ 23, թ. 1-3:

վառների և Պոլսի միջև: Այսպես ձեռնատելով և գլխատելով բովանդակ արևմտահայությանը, նրան մեկուսացնելով արտաքին աշխարհից, թուրքական կառավարությունը 1915 թ. գարնանը ձեռնամուխ եղավ անպաշտպան և անօգնական երեխաների, կանանց, ծերունիների զանգվածային գենոցիդին:

Մինչև համաշխարհային պատերազմի վերջը օսմանյան կայսրությունում ապրող 2.5-3 մլն. հայերից կոտորածներից փրկվել էին ընդամենը մի քանի հարյուր հազարը, որոնք դեռևս 1915 թ. ծվատվեցին երեք ցաք ու ցրիվ հատվածների: Մի հատվածը մնաց բուն երկրում, սրանք հիմնականում երեխաներ և երիտասարդ կանայք էին, որոնք մահմեդականացվեցին: Ամենախոշոր հատվածը կազմեցին նրանք, որոնց բռնագաղթի ճանապարհին չհասցրին սրածել: Նրանք քշվեցին Միջագետքի և Սիրիայի անապատները, և նրանց կեսից ավելին զոհ գնացին թուրքական իշխանությունների կողմից 1916 թ. կազմակերպած ահավոր ջարդերին, սովին և համաճարակներին:

Երրորդ հատվածը կարողացավ ապաստանել Կովկասյան ռազմաճակատի և Անդրկովկասի հայաբնակ շրջաններում: Ժամանակի քաղաքական վայրիվերումների պատճառով արևմտահայ գաղթականությունը բավականին հոսուն էր: Դա էր պատճառը, որ տարագիրների սկզբնական հանգրվանները, թեկուզև կարճ ժամանակի ընթացքում շատ թե քիչ մնայուն կայաններ չեղան: Այսպես, Կովկասյան ռազմաճակատի շրջանում ապաստան գտած շուրջ 240 հազար արևմտահայ փախստականները, կապված ցարական բանակի 1915-1916 թթ. 4 նահանջների հետ, գտնվում էին անընդհատ տեղաշարժերի մեջ՝ մերթ արտագաղթելով Անդրկովկասի հայաբնակ շրջանները, մերթ հայրենադարձվելով Արևմտյան Հայաստան: Կովկասյան ռազմաճակատի շրջանում 1916 թ. վերջերից Ռուսաստանի ռազմական դրության կայունացումը և ռուսական զորքերի կողմից Արևմտյան Հայաստանի մեծ մասի գրավումը հանգեցրեց այն բանին, որ գաղթականության մի խոշոր հատվածը՝ շուրջ 140-150 հազարը վերստին վերադարձան հայրենի եզերքները: Բայց, դժբախտաբար դա կարճ տևեց: 1917 թ.

Ռուսաստանում իշխանությունը բռնազավթեցին բոլշևիկները: Պետական այս հեղաշրջման արդյունքներից մեկն էլ այն էր, որ 1917 թ. վերջերից ռուսական զորքերը սկսեցին պարպել Կովկասյան ռազմաճակատը: Թուրքերը փորձեցին օգտագործել նոր կոնկրետ իրադրությունը: Նրանք պահը հարմար համարեցին ոչ միայն Արևմտյան Հայաստանի ազատագրված շրջանները վերստին բռնազավթելու, այլև պանթուրքական ծրագիրն իրագործելու համար: Բոլոր առումներով խախտելով Երզնկայի 1917 թ. դեկտեմբերի զինադադարը, իրենց առջև չտեսնելով իրական դիմադրական ուժ, 1918 թ. սկզբներին թուրքերն ամբողջ ռազմաճակատով անցան հարձակման: Արևմտյան Հայաստան վերադարձած գաղթականության մի մասը զոհ գնաց թուրքերի այս նոր արշավանքին, մյուս մասը վերջապահական մարտերով Պարսկաստանի վրայով շարժվեց Միջագետք, 3-րդ հատվածը հայկական նորակազմ զորագնդերի հետ, իր մեջ ներառնելով Կարսի, Նախիջևանի, Սուրմալուի, Ալեքսանդրապոլի գավառի և Արևելյան Հայաստանի բռնազավթված այլ շրջանների հայ բնակչությանը, անցավ Արաքս գետը և կուտակվեց Երևանի գավառում:

Սկսած 1918 թ. շարունակական դեգերումների մեջ էին գտնվում նաև արաբական անապատներ աքսորված տարագիրները, որոնց թիվը I աշխարհամարտի ավարտին 250 հազար էր: Պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո այս քանակից շուրջ 200 հազարը վերադարձավ Կիլիկյան Հայաստան: Սակայն հայ ժողովրդի դաշնակիցները, մասնավորապես Ֆրանսիան ու Անգլիան, այստեղ էլ դավաճանեցին նրան և եղեռնից վերապրածների գլխին այս անգամ կախվեց քեմալական յաթաղանը: Ուժերի խիստ անհավասար պայմաններում, մի քանի ամիս հերոսական գոյամարտեր տալով քեմալական ուժերին, Կիլիկիա վերադարձած հայերը ստիպված լքեցին հայրենի եզերքը և գաղթեցին այլևայլ երկրներ: Ահա այս գաղթականության հայրենիք վերադառնալու հարցն էր ընդհուպ մինչև 1929 թ. ապարդյուն կերպով քննարկում Ազգերի լիգան:

Անշուշտ, Մեծ եղեռնը ոչ միայն Հայաստանի, այլև համաշխարհային պատմության ամենասև էջն է: Սակայն հա-

յոց Մեծ եղեռնն ունի նաև մյուս էջը՝ Հերոսապատումի էջը: Հակառակ թուրք պետության կողմից ամենայն բծախնդրությամբ մշակված և նախապատրաստված ցեղասպան ծրագրի /զենքի ընդունակ հայ տղամարդկանց հավաքագրում թուրքական բանակ և նրանց ոչնչացում, ժողովրդի գլխատում՝ հանձին հայ մտավորականների ձերբակալությունների և կոտորածների/, այնուամենայնիվ, Արևմտյան Հայաստանի և կայսրության բազմաթիվ հայկական բնակավայրեր վերածվեցին արծվաբույների: Վանում, Շաբին-Գարահիսարում, Մուսա լեռում, Ուրֆայում և այլուր արևմտահայերի դիմադրական մարտերի արդյունքն այն եղավ, որ հարյուր հազարավոր հայեր փրկվեցին մահից: Ճիշտ է նաև, որ որոշ վայրերում հերոսամարտերը սպասված արդյունքը չտվեցին, նրա մասնակիցները զոհվեցին, սակայն այդ մարդիկ ոչ թե մորթոտվողներ էին, այլ զենքը ձեռքին մարտադաշտում ընկած զինվորներ, որոնք իրենց գիտակցված մահով փրկում էին և սրբագործում հայ ցեղի արժանապատվությունը:

Դժբախտաբար, եղեռնի հերոսապատումի էջը գիտական պատշաճ մակարդակով չի ուսումնասիրված: Ճիշտ է, սփյուռքում բազմաթիվ աշխատություններ են լույս տեսել թեմայի վերաբերյալ, սակայն դրանք չունեն գիտական բնույթ և բովանդակություն: Եվ դա հասկանալի է, որովհետև աշխատությունները մի կողմից գրված լինելով դեպքերի ականատեսների և մասնակիցների կողմից՝ ունեն հուշերի և հիշողությունների բնույթ, մյուս կողմից՝ գրված լինելով այս կամ այն հայրենակցական միության կողմից կամ հանձնարարությամբ ոչ մասնագետ մարդկանց ձեռքով՝ ավելի շատ ունեն պատմա-ճանաչողական բնույթ: Այդ թեմայով սփյուռքում լույս տեսած գրքերի հեղինակները խոստովանում են, որ իրենց հիմնական խնդիրը ոչ թե գիտական աշխատանք կատարելն է, այլ հայ երիտասարդությանը հաղորդակից դարձնելը Մեծ եղեռնի հերոսական էջին:

Թվում էր, թե այս բացը պիտի լրացներ մասնագետ կադրերով այնքան հարուստ խորհրդահայ պատմագրությունը: Բայց նա էլ գնացել է հեշտ ճանապարհով: Այդ թեմայով սփյուռքում լույս տեսած աշխատություններից ծաղկաքաղի

միջոցով մեզանում ստեղծվեցին այս կամ այն չափով հաջողված աշխատություններ, որոնք ունեն նկարագրական բնույթ և որոնցում բացակայում է պատշաճ գիտական վերլուծությունը: Եվ եթե փորձվել է գիտական ինչ-որ տարր մտցնել, ապա, տուրք տալով բոլշևիկյան վարչակարգի գաղափարական պահանջներին, դա արվել է հակադաշնակցական քարոզչության դիրքերից:

Մինչդեռ, հայոց գողգոթայի հերոսապատումի էջը մեծ դասեր է պարունակում: Ի՞նչը մեզ խանգարեց հայկական գործոնով արգելք հանդիսանալ ցեղասպան ծրագրին: Որ հայկական գործոնն էական դեր կարող էր խաղալ և զոհերը համեմատաբար ավելի քիչ կլինեին, ցույց են տալիս տարեդային բնույթ ունեցող 1915 թ. ինքնապաշտպանական կռիվները: Ինչու՞ ինքնապաշտպանության դրոշը պարզվեց միայն մի քանի շրջաններում, իսկ մյուսները ենթարկվեցին կոտորածների և բռնագաղթի: 1915 թ. հերոսամարտերի ժամանակագրությունը /ապրիլ-հոկտեմբեր/ ցույց է տալիս, որ դրանք միաժամանակ չբռնկեցին: Ի՞նչը մեզ խանգարեց համահայկական ինքնապաշտպանության ծրագիր և կենտրոն ունենալուն: Կուսակցությունները և նրանց միջև եղած ներհակությունները դրանում դեր խաղացի՞ն, թե՞ ոչ: Հ.Հ. Դաշնակցության Կարինի 8-րդ ընդհանուր ժողովը /1914 թ հուլիս-օգոստոս/ ցույց տվեց, որ ինքնապաշտպանությունը կազմակերպելու անհրաժեշտությունը բոլորը գիտակցում և ընդունում էին: Ինչու՞ չկազմակերպվեց, իսկ եթե կազմակերպվեց՝ ի՞նչ չափով: Վասպուրականում պաշտպանությունը համընդհանուր էր, որի շնորհիվ բնակչությունը փրկվեց կոտորածներից, իսկ մյուս վայրերում՝ ոչ: Ինչու՞: Սրանք հարցեր են, որոնցից յուրաքանչյուրի պատասխանը դաս և ուղեցույց է մեզ համար:

Մեր խնդրից դուրս է հայոց եղեռնի մանրամասնությունների նկարագրությունը: Ժողովուրդների պատմության մեջ աննախադեպ ոճրագործության մասին աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդների լեզուներով գրվել են բազմաթիվ աշխատություններ, հուշեր, հոդվածներ, լույս են տեսել փաստաթղթերի ժողովածուներ, որոնց մեջ մանրամասնորեն տրված է հայ ժողովրդի զանգվածային ջարդերի և

բոնագաղթի ընթացքը: Ընդհանուր եզրակացությունն այն է, որ հայ ժողովրդի մեթոդական բնաջնջումն իրագործվեց վաղօրոք բծախնդիր կերպով մշակված ծրագրով: Այդ աշխատություններից և հուշերից շատերը, ինչպիսիք են՝ Լեփսիուսի[1], Մորգենթաուի[2], Մանդելշտամի[3], Գիբոնսի[4], Վոքերի[5], Թոյնբիի[6], Գութմանի[7], Նանսենի[8], երիտթուրքերի իշխանության շրջանում բարձր պաշտոններ զբաղեցրած թուրքական պաշտոնյաներ Նայիմ Բեյի[9], Մէվլան Զադե Ռիֆաթի[10], սկզբնաղբյուրային նշանակություն ունեն:

Արևելահայերի ցեղասպանությունը: Ցեղասպանության ժամանակակիցների և ուսումնասիրողների տեսադաշտում եղել է միայն արևմտահայոց գողգոթայի և Արևմտյան Հայաստանի հայազրկման փաստը: Մինչդեռ իրողություն է, որ երիտթուրքական վարչակարգը, ի տարբերություն սուլթանականի, դրել էր ընդհանրապես հայ ժողովրդի ոչնչացման հարցը: 1914-1918 թթ. ցեղասպանությունն իր սև ալիքների մեջ էր առել երեք Հայաստանն էլ՝ և Արևմտյան Հայաստանը, և Պարսկա-Հայաստանը, և Արևելյան Հայաստանը: Կոտորածների առաջին զոհերը 1914 թ. վերջերից դառնում են Պարսկահայքի, Ատրպատականի, Բասենի և հարակից այլ շրջանների հայերը՝ կապված վերոհիշյալ

[1] Lepsius J., Deutschland und Armenia, Potsdam, 1919; Լեփսիուս, Գաղտնի տեղեկագիր Հայաստանի ջարդերում, Կ. Պոլիս, 1919:
[2] Morgenthau Henry, The Tragedy of Armenia, London, 1918; Morgenthau H., Ambassador Morgenthau's Story, Garden City-New York,1918; նույնը, Բեյրութ, 1967: Տես հայերեն թարգմանությունը, Կ. Պոլիս, 1919; Երևան, 1990:
[3] A. Mandelstam, Le sort de l'Empire Ottoman Lausanne-Paris, 1917(տե՛ս, հայերեն թարգմանությունը, Կ. Պոլիս,1919):
[4] Gibbons Herbert Adams, TheBlackest Page of Modern History. Events in Armenia in 1915. The facts and the responsibilities, New York, 1916 (տես նաև ռուսերեն թարգմանությունը,Петроград, 1916)
[5] Rockwell Walker, The Deportations of the Armenians, N.Y., 1916.
[6] Toynbee Arnold J., Armenian Atrocities: The Murder of a Nation, London-New York,1915.
[7] Guttman Joseph, The Beginnigs of Genocide, New York, 1948.
[8] F. Nansen, Armenia and the Near East, London, 1928.
[9] Mevlan Zade Rifat, Türkiye inkilābinin ic yüsü, Halep, 1929; Մէվլան Զատէ Ռիֆաթ, Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Երևան, 1990:
[10] The Memoirs of Naim Bey, Turkish Official Documents Relating of the Deportations and Massacres of Armenians, London, 1920.

շրջաններ թուրքական զորքերի ներխուժման հետ: Որպես կանոն այս շրջաններում ջարդերը կատարվում էին ամենանողկալի և աներևակայելի մեթոդներով: Ահա ինչ ենք կարդում փաստաթղթերից մեկում. "Ուրմիայից Սալմաստ հասած 750 հոգի հայերը ամբողջովին մորթոտված են, կանայք՝ առևանգված: Դիլմանում /Սալմաստի գլխավոր քաղաք/ ևս նույն թվով սպանված հայեր կան, որոնց նահատակությունները սարսափելի են: Ողջ-ողջ մարդկանց ոտքերը կտրել են սղոցով, նույն կերպով կտրել են դաստակները, մկրատով կտրատել են քթերը, այտերը, շրթները: Դաղել են մարմնի այն բոլոր մասերը, որոնք ավելի դյուրազգաց են: Սարսափելի տանջանքներով սպանել են թե ծերերին, թե երիտասարդներին՝ առանց սեռի խտրության: Մենք տեսանք և անծայր գազանությունների հետքեր. կարմրած շամփուրները անց են կացրել կանանց և տղամարդկանց սեռական օրգանները և այդպես մեռցրել: Ակնհայտ է, որ սահման չի եղել այն գազանությունների համար, որոնք կատարվել են թուրք և քուրդ զինվորների ձեռքով"[1]:

Եվ արդեն 1914 թ վերջերից հայ հասարակության բոլոր շրջանները գերմարդկային ճիգեր էին գործադրում ընդունելու և տեղավորելու Խոյի, Սալմաստի, Ատրպատականի, Ալաշկերտի շրջանների հայ գաղթականներին: Ըստ պաշտոնական տեղեկագրության՝ հայ փախստականների թիվը 1914 թ դեկտեմբերին 100 հազար էր[2]:

Այսպիսով, հայերի Մեծ եղեռնի պրակտիկ գործադրումը սկսվել էր երիտթուրք վարչախմբի 1915 թ ապրիլի 15-ի տխրահռչակ հայասպան հրահանգից ամիսներ առաջ, և նրա առաջին զոհերը դարձան Թուրքիայի քաղաքացի չհանդիսացող հայերը: Հետևաբար, միանգամայն սին են թուրք պատմագրության այն պնդումները, թե հայերը որպես օսմանյան քաղաքացիներ՝ օրինապահ չգտնվեցին, դիմեցին ապստամբության /խոսքը Վանի 1915 թ հերոսական ինքնապաշտպանության մասին է/, որի հետևանքով էլ տեղի ունեցան արևմտահայերի տեղահանությունն ու ջարդերը: Դժբախտաբար թուրքական այդ հին կեղծիքը այսօր

[1] "Մշակ", 14 մարտի 1915:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ 28, ցուցակ 1, գործ 109, թերթ 165:

էլ շարունակում են շրջանառության մեջ դնել թուրք քաղաքական գործիչները: Ահա թե ինչ է պատասխանել "Ազգ"թերթի թղթակցի հարցին Մոսկվայում Թուրքիայի արտակարգ և լիազոր դեսպան Այխան Քամելը. "Օգտագործելով իրավաբանական եզրաբանությունը՝ կարող եմ ասել, որ ցեղասպանությունը ենթադրում է ռասայական, էթնիկ խմբի կանխամտածված, ծրագրված ոչնչացում: Ինչպես Հիտլերը վարվեց հրեաների հանդեպ: Դա ցեղասպանություն է: Հայերի դեպքում նման բան չկա: Այն ժամանակ հայերն ապրում էին Օսմանյան՝ կայսրության մի քանի շրջաններում, ուր ջանում էին անկլավներ ստեղծել և անգամ հակակառավարական ելույթներ նախաձեռնել: ...Եվ կառավարությունը պատերազմական գործողություններին նախապատրաստվելու նպատակով... որոշում կայացրեց փոխադրել հայերին Արևելյան Անատոլիայից՝ ճակատամերձ գոտուց, Մեծ Սիրիա: Ճանապարհին շատերը զոհ գնացին պատերազմական պայմաններին..."[1] :

Հիմնականում հայաթափելով Արևմտյան Հայաստանը՝ թուրքական յաթաղանը շուտով իր ամբողջ դաժանությամբ կախվեց հայ ժողովրդի արևելյան հատվածի վրա: Օգտվելով այն հանգամանքից, որ ռուսական զորքերը դատարկել էին Կովկասյան ռազմաճակատը՝ թուրքերը պահը հարմար համարեցին ռուսների և հայ կամավորական ջոկատների կողմից Արևմտյան Հայաստանի ազատագրված շրջանները ոչ միայն վերանվաճելու, այլև պանթուրքական ծրագիրն ամբողջացնելու համար, այն է՝ բնաջնջել նաև հայ ժողովրդի արևելյան հատվածը և իսպառ վերացնել Թուրքիային Ռուսաստանի կազմում գտնվող թուրքալեզու ժողովուրդներից բաժանող հայկական խոչընդոտը:

Խիստ այժմեական է պատմական այն կոնկրետ իրադրության համառոտակի վերհանումը, որում տեղի ունեցան Արևելյան Հայաստանի մեծ մասի հայաթափումը և արևելահայերի կոտորածները, որովհետև այս ժամանակաշրջանն ուսանելի դասեր ունի անցման շրջանում գտնվող մեր ժողովրդի այսօրվա համար՝ ոչ միայն ներկա իրադարձությունների ճշմարիտ ըմբռնման իմաստով, այլ նաև կտրուկ փոփոխվող իրադրություններում ճիշտ կողմնորոշվելու, քաղաքական ճիշտ հաշվարկ անելու, անցյալի սխալները չկրկնելու իմաստով: Թվում էր, թե Արևմտյան Հայաստանի ազատագրումը թուրքական գաղութակալությունից, շուրջ 150 հազար արևմտահայ գաղթականության վերադարձը հայրենի եզերք, ապա ռուսական փետրվարյան հեղափոխությամբ պայմանավորված դեմոկրատական վերափոխումները լայն հեռանկարներ էին բացել հայոց հետագայի համար: Բայց կատարվեց անսպասելին: 1917 թ բոլշևիկները կատարեցին պետական հեղաշրջում: Այն ոչ միայն վերացրեց կատարված դեմոկրատական միջոցառումները, այլև լայնածավալ կայսերապետությունը նետեց մի սոսկալի քաոսի և քաղաքացիական կռիվների մեջ, որոնք ամենածանր անդրադարձումներն ունեցան հայ ժողովրդի պատմական ճակատագրի վրա: Ռուսական զորքերի հեռացումից հետո 1917 թ վերջերին Կովկասյան ռազմաճակատը գրեթե ամլացավ: Այս պայմաններում Անդրկովկասյան կոմիսարիատի համաձայնությամբ Հայոց ազգային խորհուրդն իր վրա վերցրեց Կովկասյան ճակատի պաշտպանության հոգսը, որովհետև մերկացած ռազմաճակատում թուրքական բանակի անխուսափելի հարձակումն ինքնին սպառնալիքի տակ էր դնում հայ ժողովրդի ֆիզիկական գոյության հետագան: Շտապ կերպով ձեռնարկվեց հայկական զորամասերի կազմակերպումը: Սակայն դրությունը բարդանում էր նրանով, որ Անդրկովկասյան կառավարությունում չկար իրական միասնություն, և դա փոխանցվել էր Անդրկովկասը ներկայացնող գլխավոր ազգերին: Ներքին տարաձայնությունները, ազգային քաղաքական տարբեր ձգտումները նրանց դրել էր բարիկադների տարբեր կողմերում: Հակահայկական հիմքի վրա ավելի սերտ էին թաթարա-վրացական հարաբերությունները: Կովկասի թաթարները /իմա՝ ադրբեջանցիները/ ամբողջովին ունեին թուրքական օրիենտացիա և ձգտում էին միանալ Թուրքիային, իսկ վրացիները գաղտնի բանակցությունների մեջ էին գերմանացիների հետ՝ նպատակ ունենալով վերջիններիս միջոցով փրկել Վրաստանը թուրքերի ներխուժումից:

[1] "Ազգ", 9 սեպտեմբերի, 1994թ:

Պարզ էր, որ հսկայական ռազմաճակատը պաշտպանելու էին նոր կազմավորվող հայկական զորամասերը: Իսկ հայերը միայնակ կարո՞ղ էին դիմադրել թուրքական ներխուժմանը: Մի շարք պատճառներ դա գրեթե անհնարին էին դարձնում:

1. Դեռևս լիովին չէր ձևավորվել հայկական կորպուսը, նույնիսկ շատ գնդեր հաստիքային սահմաններում չէին կոմպլեկտավորվել:

2. Պետականության բացակայությունը, որի հետևանքով հայկական կորպուսը ենթարկվում էր ոչ թե ազգային միասնական ղեկավար կենտրոնի, այլ վրաց մենշևիկների ձեռքում գտնվող Անդրկովկասյան հանրապետության ռազմական հրամանատարությանը: Վերջիններիս դիրքն էլ պայմանավորեց մեր զորամասերի հարկադրական նահանջը:

3. Ռազմաճակատի հսկայական մեծությունը. որոշ տեղերում մեկ գնդին հասնող բնագիծը հասնում էր 700 կմ-ի:

4. Չկար ազգային միասնական ղեկավար կենտրոն, որն իր ձեռքը վերցներ ճակատի պաշտպանությունը, հայկական բանակի ստեղծումը: Արևելահայերի ղեկավար կենտրոն էր հանդիսանում Հայաստանից դուրս՝ Թիֆլիսում գտնվող Հայոց ազգային խորհուրդը, արևմտահայերինը՝ Արևմտահայ խորհուրդը, և դրանք գործում էին միմյանցից անկախ և ընդունում միմյանց հակասող որոշումներ:

Այսպիսով, բոլշևիկյան անարյուն հեղաշրջումը և պատերազմի նկատմամբ նրանց վերաբերմունքը որոշակիորեն փոխում էր ուժերի հարաբերակցությունն աշխարհաշրջանում: Հարցականի տակ էր դրվում ոչ միայն Արևմտյան Հայաստանի հետագա ճակատագիրը, այլև ընդհանրապես բացվում էին Կովկասի դռները թուրքերի առջև և լավագույն պայմաններ ստեղծում պանթուրքական ծրագրի պրակտիկ գործադրման համար: Այդ ստրատեգիական նպատակին հասնելու համար երիտթուրքական վարչակարգն իր առջև դրեց հետևյալ խնդիրները.

1. Հասնել Անդրկովկասի անջատմանը Ռուսաստանից, որն իրավական հիմք կտար նրան խախտելու Խորհրդային Ռուսաստանի հետ կնքած Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը և ներխուժել Կովկաս:

2. Անդրկովկասը բաժանել առանձին պետությունների: Ստեղծել նոր թուրքական պետություն Կովկասում /ինչը որ կատարվեց՝ Ադրբեջան հորջորջումով/, որն իր մեջ պետք է ընդգրկեր հայերի բնօրրան Քուռ-Արաքսյան միջագետքը և որը պետք է կամրջեր Թուրքիային Կովկասի և Միջին Ասիայի թուրքախոս ժողովուրդների հետ: Սա, ինքնին, նշանակում էր արևելահայերի ֆիզիկական ոչնչացում և բռնագաղթ:

Հարկ է նշել, որ սա թուրքերի կողմից կատարված ճիշտ քաղաքական հաշվարկ էր: Այն ժամանակ, երբ թուրքերը ներխուժել էին Կովկաս, անկասկած էր, որ գերմանա-թուրքական բլոկը համաշխարհային պատերազմը տանուլ էր տվել և որ վաղ թե ուշ թուրքերը ստիպված թողնելու էին Անդրկովկասի սահմանները: Եվ ահա Կովկասում իրենց կատարած նվաճումներն իրավաբանորեն ամրագրելու համար ձեռնարկվեց Ադրբեջան անունով թուրքական նոր պետական կառույցի ստեղծումը: Թերևս, սա չէին գիտակցել մուսավաթականները: Երբ վերջիններս Բաթումի 1918թ. - հաշտության բանակցություններում պաշտոնապես դիմեցին Խալիլ բեյին՝ Անդրկովկասի ամբողջ նվաճված մասը Թուրքիային միացնելու խնդրանքով, Խալիլը պատասխանեց, որ "Թուրքիայի մեծ քաղաքականությունը առայժմ պահանջում է "ուժեղ" Ադրբեջանի անկախություն"[1]:

Պարզ էր, որ հեռանկարում Թուրքիային միացվելիք Ադրբեջանի ժամանակավոր գոյությունը Օսմանյան Թուրքիայի համար մի շղարշ էր Կովկասում իր հետագա բռնազավթումների համար՝ այս անգամ, սակայն, մուսավաթական Ադրբեջանի միջոցով:

Ահա այսպիսի նպատակներով էր, որ երիտթուրքական վարչակարգը խախտելով Երզնկայի զինադադարը՝ 1918թ հունվարին իր զորքերն ամբողջ ռազմաճակատով քշեց հարձակման: 1918թ հունվարից մինչև մայիսի վերջերը հայկական նորակազմ և փոքրաթիվ զորամասերը, ընդհանուր խուճապի և քաոսի պայմաններում, գրեթե մեն-մենակ կռվե-

[1] **А.Б.Кадишев, Интервенция и гражданская война в Закавказье,.М,1960,стр.63.**

ցին թուրքական բանակների դեմ, միաժամանակ կռվելով նաև թիկունքում թաթարական հրոսակախմբերի դեմ, որոնք հարձակվում էին բնակավայրերի վրա և հարվածում հայկական բանակի թիկունքին: Հայկական փոքրաթիվ ուժերը, բնականաբար, չէին կարող պատերազմել թուրքական մեծաթիվ բանակի դեմ և միաժամանակ պաշտպանել թիկունքը: Նման պայմաններում, տեղի տալով գերազանց ուժերին, հայկական զորքերը սկսեցին իրենց նահանջը՝ Երզնկայից, Էրզրումի վրայով, դեպի ռուս-թուրքական 1914թ սահմանը: Թուրքական բանակը, ուժեղացված սիրիական ճակատի երկու դիվիզիաներով, չկանգնեց ռուս-թուրքական սահմանի վրա և ներխուժեց Անդրկովկաս: Հայկական զորքերն ամրացան Կարսում: Սակայն, շուտով, Անդրկովկասյան կառավարությունից, որտեղ հրամանատարական բարձունքները պատկանում էին վրաց մենշևիկներին, կարգադրություն եկավ՝ հանձնել Կարսը թուրքերին: Թուրքիան խախտելով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը՝ Ալեքսանդրապոլի վրայով, երկու ուղղություններով, ներխուժեց Արարատյան դաշտ և Լոռի-Փամբակ:

Սկսվեց հայ ժողովրդի լինել-չլինելու գոյամարտը: Ժողովուրդը մեկ մարդու նման ոտքի կանգնեց: 1918թ վերջերին Սարդարապատի, Ապարանի, Ղարաքիլիսայի շրջաններում թուրք զավթիչների դեմ մղած հերոսամարտերում, կռվում էին հայ ժողովրդի բոլոր կենսունակ ուժերը՝ տղամարդիկ ու կանայք, երիտասարդներն ու ծերերը, մտավորականն ու աշխատավորը: Մայիսյան հերոսամարտերը փրկեցին հայ ժողովրդին վերջնական բնաջնջումից: Պարտված թուրքական բանակները կանգ առան, իսկ Թուրքիան ստիպված առաջինը ճանաչեց վերականգնված հայ պետականությունը:

Փաստորեն 1918թ հունվարից մինչև սեպտեմբեր /նկատի ունենք նաև Բաքվի հերոսամարտը, որովհետև Բաքվի կոմունայի ռազմական ուժերի մոտ 80 տոկոսը հայերն էին/ հայությունը թուրքական բանակների դեմ մարտնչող գլխավոր ուժն էր: Թուրքերը 1918թ սեպտեմբերին միայն կարողացան գրավել Բաքուն: Արձանագրելով այս իրողությունը՝ գերմանական սպայակույտի պետ գեներալ Լյուդենդորֆը

իր հուշերում գրում էր. "Գլխավոր ազդակը, որ գերման արևմտյան բանակի խորտակումը առաջ բերավ, վառելանյութի պակասն էր, որովհետև թուրքերը չկրցան ատենին գրավել Բաքուն և հայերն էին, որ թուրքերուն արգելք եղան Բաքուն գրավել իր ժամանակին"[1]: Եզրակացությունն այն է, որ երիտթուրքական ուժերի դեմ հայերի մղած գոյամարտերը, իրենց նշանակությամբ, դուրս են գալիս ազգային նշանակության շրջանակներից և ձեռք բերում համաշխարհային պատմական արժեք:

Ճիշտ է, երիտթուրքական վարչակարգը և Ադրբեջանը միասնական ճակատով չկարողացան պանթուրքիզմի ճանապարհից իսպառ վերացնել հայկական խոչընդոտը, սակայն արևելահայերը տվեցին ծանր կորուստներ: Միայն Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքում ջարդերին զոհ գնացին 300 հազար հայեր, Բաքվում՝ 30 հազար [2], Նուխու և Արեշի գավառներում՝ 40 հազար, Ղարաբաղում՝ 10 հազար: Հսկայական զոհեր տվեցին նաև Անդրկովկասի մյուս հայաբնակ շրջանները՝ Ելիզավետպոլը, Շամախու ու Գյոկչայի գավառները և այլն[3] :

Թուրքերի 1918 թ արշավանքի հետևանքով շուրջ 650 հազար արևելահայեր դարձան գաղթականներ, այդ թվում՝ 120 հազարը Կարսից, 30 հազարը Ախալցխայից, 40 հազարը՝ Բաթումի շրջանից, 60 հազարը՝ Ալեքսանդրապոլի գավառից, 100 հազարը՝ Երևանի, Նախիջևանի և Շարուրի գավառներից, 80 հազարը՝ Էջմիածնի և Սուրմալուի գավառներից, 85 հազարը՝ Ախալքալաքի գավառից [4]: Այդ քանակից 400 հազար գաղթականություն ապաստան գտավ չորս կողմից խուզված Հայաստանի Հանրապետության փոքր տարածքում, 150 հազարը՝ Վրաստանում, 100 հազարը՝ Հյուսիսային Կովկասում [5]: Իրենց բնօրրանից փախչ-

---

[1] Ցուշամատեան Մեծ եղեռնի, էջ 132:
[2] Տես Հայերի ցեղասպանությունը... էջ 626:
[3] Տես Геноцид армян в Османской империй (Сборник документов и материалов), Ереван, 1982, стр. 534-540.
[4] Տես "Կոմունիստ", Օրգան Հայկական գործերի կոմիսարիատի, Մոսկվա, 1918թ, N 8:
[5] Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ.55, թ.27:

տական դարձած, առաջին անհրաժեշտության կենսամիջոցներից զուրկ գաղթականության զգալի մասը զոհ գնաց սովին ու տարափոխիկ հիվանդություններին: Դրա խոսուն օրինակը Ախալքալաքի շրջանի հայերի ճակատագիրն է: Խույս տալով եղեռնից՝ շուրջ 90 հազար ախալքալաքցի փախստականներ լքեցին հայրենի եզերքը և ապաստանեցին Բակուրիանիի ու Ծալկայի անտառներում: Երբ թուրքական զորքերը պարպեցին Ախալքալաքի գավառը, ապա հայրենի վայրեր վերադարձան 45-50 հազար հայեր: Մնացյալը զոհ էին գնացել սովին ու համաճարակներին:

Գրականության մեջ դեռևս մասնավոր քննության նյութ չի դարձել Թուրքիայի 1918թ դեպի Անդրկովկաս արշավանքի հետևանքով եղեռնին զոհ գնացած արևելահայերի թվաքանակի հարցը, սակայն վերը ներկայացված հպանցիկ շարադրանքը ցույց է տալիս, որ 1918թ. բնաջնջման են ենթարկվել առնվազն 500 հազար արևելահայեր:

Պատմության ժամանակակից թուրք կեղծարարները ինչքան էլ փորձեն փաստաբանել Հայ Դատի անգո լինելը, նրանք մի փաստից չեն կարող գլուխները թաքցնել՝ հենց թուրքական դատարանը 1919 թ, թուրք վկաների ցուցմունքներով ընդունեց հայերի ցեղասպանության փաստը և դատապարտեց այն: Ահա մի հատված թուրք մարդասպանների դատավարության փաստաթղթերից, որ 1919 թ հրապարակել են Կ. Պոլսի թերթերը. "...Վերջապես երկար վարանումներից հետո այդ դատը սկսվեց երեկ: Խիտ բազմություն էր լցվել պատերազմական ատյանի փոքր դահլիճում: ...Թուրքական մամուլն այդ դատը պատմական է համարում: ...Մեղադրական աթոռին նստած են...: Ընթերցումից հետո ընդհանուր դատախազը տրիբունալից պահանջում է մեղադրյալներին դատել և հայտարարում է, որ մեղադրանքները հիմնված են բացահայտ փաստերի վրա: Այդ փաստաթղթից պարզ դարձավ, որ "Միություն և առաջադիմություն" կոմիտեն միանգամայն երկու հատուկ կազմակերպություններից էր բաղկացած, մեկը՝ պաշտոնական և հայտնի, իսկ մյուսը՝ գաղտնի և բանավոր հրահանգներիվրա հիմնված: Դա գաղտնի կոմիտեի բնույթ ուներ: Գոյություն ունեցող ապացույցները հաստատում են, որ այդ

կոմիտեի... ազդեցիկ. պետերի պատասխանատվությունը բացահայտ է: Նրանց կողմից կատարված ոճիրները հաստատվում են ներքոհիշյալ տվյալներով: ... Քննությունից պարզվում է, որ հայերի աքսորի ժամանակ կատարված ոճիրները զանազան վայրերում և ժամանակներում անջատ և տեղական իրադարձություններ չեն, այլ կենտրոնից կազմակերպված, վերոհիշյալ անձերից բաղկացած կոմիտեի կողմից նախապես ծրագրված և գործադրված՝ կամ գաղտնի հրամանի հիման վրա, կամ բանավոր կարգադրության հիման վրա: ... Համաձայն վերոհիշյալ վկայությունների և բազմաթիվ փաստերի, որ ներքոհիշյալները մասնակցել են կոտորածների... և մեղսակից են կատարված ոճրագործությանը, որոշվեց համաձայն 445 հոդվածի և 170 պատժական հոդվածի՝ բժ. Բահաեդդին Շաքիրին, բժ. Նազիմին, Աթիֆ Ռիզային, Ջևադին, Ազիզ բեյին, Էնվերին, Ջեմալին, Թալեաթին որպես ոճրագործների հանձնել Կ. Պոլսի զինվորական ատյանին...": 12 ապրիլ 1919թ[1]:

Սա ըստ էության, Հայ Դատի ճանաչումն էր պաշտոնական Թուրքիայի կողմից: 1919թ հուլիսին Ստամբուլի ռազմական տրիբունալը հեռակա կարգով մահվան դատապարտեց Թալեաթին, Էնվերին, Ջեմալին, կուսակցության գլխավոր քատուղար Նազիմին՝ Թուրքիան պատերազմի մեջ ներքաշելու և հայ ժողովրդի բռնագաղթն ու զանգվածային ջարդերը կազմակերպելու համար:

Վերը շարադրվածն ակնհայտ է դարձնում այն իրողությունը, որ իր հոգեվարքն ապրող թուրքական կայսրությունը անցյալ դարի վերջին քառորդից հայերի ֆիզիկական ոչնչացումը հոչակեց որպես պետական ուսմունք, որն իրագործվեց թուրք պետականության կողմից՝ անկախ վարչաձևից: Հայերի ցեղասպանությունն իրագործվեց և սուլթանական, և երիտթուրքական, և քեմալական վարչակարգերի կողմից: Հետևաբար՝ ցեղասպանության պատասխանատուն թուրք պետականությունն է:

---

[1] Տես փաստաթուղթն ամբողջովին՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.237, թ.51-64: Փաստաթուղթը ֆրանսերեն է: Մենք օգտվել ենք փաստաթղթի արխիվային թարգմանությունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան–Անհրաժեշտ է նոր մոտեցում հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրմանը 5

Լենդրուշ Խուրշուդյան –Հայոց ցեղասպանության պատճառները և պատմական դասերը.....9

Աշոտ Մելքոնյան– Եղեռնի քաղաքականության ձևավորման սկզբունքները (XV դարի վերջ –1915թ.).....37

Լևոն Մկրտչյան– Արևմտահայության ցեղասպանության աբդուլահամիդյան քաղաքականությունը..... 60

ԷԴՎԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ– Հայ ժողովրդի Մեծ եղեռնը երիտթուրքական վարչակարգի կողմից (1914–1918թթ.).....86

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՎ ԴԱՍԵՐ

Մաս 1

Հրատարակչության խմբագիր՝ Լ. Գ. Մանուկյան

Տեխնիկական խմբագիր՝ Հ. Հ. Խաչատրյան

Վերստուգող սրբագրիչներ՝ Մ. Գ. Ցավրյան, Ս. Վ. Ղազարյան

Ստորագրված է տպագրության *14. 04. 1995 թ.*:
Չափը *84x108 1/32* : Թուղթ *տպ.* *1* : Տպագրության
եղանակը *օֆսեթ* : Հրատարակչական *4.2* մամուլ:
Տպագրական *3.375* մամուլ=*5.67* պայմանական մամուլի:
Տպաքանակ *500* : Պատվեր 67 :

Երևանի համալսարանի հրատարակչություն,
Երևան, Մանուկյան փ., 1

Շարվածքը և ձևավորումը
« Հ ա յ Տ ե ք » հրատարակչական ձեռնարկության

Երևանի համալսարանի "Ռոտապրինտ" արտադրամաս,
Երևան, Մանուկյան փ., 1